

211. Тип 4нр. ящик


Число 9 из 1000 экземпляров

9/декаграмм

г - 1940

9(54)

2-17



ՀԽՍՀ ՅԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՄՅԱԿԱԳՈՒՔ. ԻՆՍԻՏՈՒԹ


S. ՀԱԿՈԲՅԱՆ

ՀԻՆ

ՀՆԴԿԱՍՏԱՆԸ

ՅԵԿ

ԶԻՆԱՍՏԱՆԸ



ՄԱՆԿԱԿԱՐԺԱԿԱՆ ԻՆՍԻՏՈՒՏԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ

1940

5 OCT 2011

ՀԵՍԴ ՅԵՐԵՎԱՆԻ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

9(54)

Հ - 17

մի

S. ՀԱԿՈԲՅԱՆ

ՀԻՆ

ՀՆԴԿԱՍՏԱՆԸ

ՅԵՎ

ԶԻՆԱՍՏԱՆԸ

ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՅԵՐԵՎԱՆ

1940

31.05.2013

18088

ՀՆԴԿԱՍՏԱՆ

1

ՅԵՐԿԻՐԸ ՅԵՎ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ

Հնդկաստանը, մարդկային քաղաքակորթության հնագույն ոչախներից մեկը, ներկայումս աշխարհից ամենամեծ գաղութն է, վորք պատկանում է Անգլիացին և համարվում է «Բրիտանական կայսրության թագի ամենաթանգարժեք մարդարինը»:

Դա մի հսկայական յիրկիր է, իր մեծությամբ գործե հավասար Յեվրոպական մայր ցամաքին: Նրա տարածությունն է 4,675 հազ. քառ. կլմ. և ունի 353 միլիոն բնակչություն: Իր տարածությամբ նա 20 անգամ, իսկ բնակչության թվով 8 անգամ մեծ է Անգլիացից:

Հնդկաստանի սահմանների ընդհանուր տարածությունը հասնում է 17 հազ. կիլոմետրի, վորից 9 հազ. ցամաքային սահմաններն են: Հնդկաստանը սահմանակից է Իրանին, Ֆիզանստանին, Չինաստանին (ներառյալ Տիբեթը) և Միամին: Հնդկաստանը ԽՍՀՄ-ից բաժանված է Աֆղանական տերիտորիայի մի նեղ շերտով, վորք կեց և Տաջիկական ԽՍՀ Լեռնային-Բաղասխանի ինքնավար մարզին:



1715
40

Աշխարհագրական տեսակետից Հնդկաստանը բաղկացած է յերեք մասերից. 1) Հյուսիսում—Հիմալայան լեռների մեջ գոտին, վորը բաժանում է Հընդհաստանը Սուրական մայր ցամաքի՝ յերկրներից. 2) Հիմալայան լեռների ստորոտներում ընկած է Ինդո-Գանդիսյան հարթավայրը, վորի արևելյան մասը կազմում է Բենգալյան դաշտավայրը. Հնդկաստանի այս մասը հանդիսացել է զարգացած յերկրագործության և կուտուրայի հիմնական ոչախ և 3) Ինդոստան թերակղզին, վորը յեռանկունաձև մտնում է Հնդկական ովկիանոսը և բաժանում է Բենգալյան ծոցը Արաբական ծովից. Նրա մեծ մասը զրադշակած է Դեկանի բարձրավանդակով:

Բացի հիմնական այս յերեք մասերից, Բրիտանական Հնդկաստանի կազմի մեջ մտնում են աշխարհագրականորեն առանձնացված յերկու մարզեր. Արևմուտքում—Բելուջիստանը, վորը բռնում է Իրանի բարձրավանդակի հարավ-արեվելյան մասը և արեվելքում—Բիրման, լեռնոտ յերկիրը, վորը բռնում է Հընդկաշխն թերակղզու արեվմտյան մասը:

Հնդկաստանի հարավ-արեվելյան ափի մոտ գտընվում է Յելլոն կղզին, վորը Մեծ Բրիտանիայի հատուկ գաղութ է և չի մտնում Բրիտանական Հնդկաստանի կազմի մեջ:

Հնդկաստանի Հյուսիսային սահմանի վրա Տիրեթին. կից տարածվում են Անգլիային յենթակա յերկու պետություններ—Նեպալ և Բուտան:

Հյուսիսային լեռնային գոտին կազմում են աշխարհիս ամենաբարձր յերկու լեռնային սիստեմները՝

Հիմալայան լեռները և Կարակորում, վորոնք մշտագես ձյունապատ և սաղցապատ են. Ամենաբարձր գագաթը՝ Եվերստը ունի 8880 մետր բարձրություն: Բաժանելով Հնդկաստանը Միջին Ասիայից, Հիմալայան լեռները միաժամանակ հանդիսանում են յերկու կլիմաների պատնեշ՝ Միջին-Ասիական շոր-կոնտինենտալ կլիմայի և բուն Հնդկաստանի արեվադարձալին կլիմայի:

Հիմալայան լեռների հարավային լանջերը յենթակա յեն ովկիանոսից վշող մուսաններին, վորոնք բերում են առատ մթնոլորտային տեղումներ և ծածկված են հարուստ բուսականությամբ: Հարավային ստորոտներում ճահճային տրոպիկական բուսականություն և (ջունգի) անառողջ կլիմայով (մալարիա): Նախալեռնային շրջաններում մինչև 1200 մետր—խիտ տրոպիկական անտառներ են վիթխարի ծառերով, իրար փաթթված լիանաներով, բամբուկի ծառերով, վորոնք հասնում են 30 մետր բարձրության: Ավելի բարձր տարածվում են մերձարեվագարձային անտառները, մշտագալար ծառերով, այնուշետև սաղարթախիտ անտառներ աշնանային տերեվաթափով, փշտերե ծառեր և վերջապես ալպիական մարգագետիններ, վորոնք հասնում են մինչև ձյան սահմանը 4500—5000 մ. բարձրության վրա:

Լեռնային բարձունքների արևմտյան մասը կազմված է Հինդուկուջից և ավելի ցածր լեռներից, վորոնք շրջապատում են Իրանի բարձրավանդակը: Այստեղ գոյություն ունեն մի շարք մատչելի լեռնանցքներ, վորոնք միացնում են Հնդկաստանը Աֆղանստանի և Իրանի հետ:

Ինդո-Գանգեսյան հարբավայրը բաժանվում է յերկու մասի: Արեվելքում — Բենգալյան Հարթավայրն և՝ Գանգես և Բրահմապուտրա գետերի հովիտը, վորոնք ընդհանուր գելտայով թափվում են Բենգալյան ծոցը, Արևմուտքում տարածվում են ինդոս գետի լայնածավալ հովիտը, վորը կոչվում է Փենջար: Այդ յերկու մասերի միջև ձգվում է վոշ բարձր ջրաժամ գիծ:

Հյուսիսային Հնդկաստանի բոլոր յերեք զլխավոր գետերը, ինչպես և նրանց վտակները սկիզբ են առնում Հիմալայան լեռներից: Այդ գետերը իրենց վոռովումներով թողնում են արգավանդ տիղմի շերտ: Այդ գետերից ամենաջրառատը Գանգեսն է, վորը իր յերկարությամբ զիջում է Ինդոսին և Բրահմապուտրային (ինդոսի յերկարությունը — 3200 կմ., Բրահմապուտրան — 2800 կմ., Գանգեսը — 2700 կմ.): Գանգեսի և նրա վտակների ջրերը սնուցանում են ջրանցքների վոռովման սխտեմը: Գանգեսը մեծ նշանակություն ունի նաև նավագնացության համար: Նրա հովիտը Հնդկաստանի ամենաբերքառատ և խիտ բնակված մասն է: Գանգեսը, շնորհիվ իր վիթխարի տնտեսական նշանակությանը, դարձել է պաշտամունքի առարկա, կոչվում է «սրբազն գետ»:

Ինդոստան թերակզզու մեծ մասը բռնում է Դեկանի բարձրավանդակը, վորի միջին բարձրությունը 600—800 մետր է: Նրա ծայրերին բարձրանում են Արևմտյան Գատերը և Արևելյան Գատերը, վորոնցից առաջինն ավելի բարձր է, մինչև 2700 մետր: Նրանք պահում են ամառային մուսսոնների բերած մինուրտային տեղումների մի մասը: Արևմտյան Գատերի դեպի ծովը

իշնող լանջերին խիտ արևադարձային անտառներ են: Դեկանի ներսը ավելի չոր է, գերակշռող և սավանների բուսականությունը: Դեկանի գետերը՝ Նարբադա և Գոդավարի ջրասակավ են: Ֆերակը և կարմրաճովը, հյուսիս-արևմուտքում՝ պտղաբեր գորշ հողը, վորը կազմվել է քայլքայլող լավաներից և կոշվում է «բամբակի սեվահող»: Վորովհետև նա առանձնապես նըպատավոր է բամբակագործության համար:

Յեյլոնը ինգուստանի հետ կապված է մանր կըղվիների և խութերի մի շղթայով (այսպէս կոչված «Աղամի կամուրջ»): Կղզու ներսում բարձրանում է լեռնային մասսիվ (մինչև 2500 մ.), ափերը ցածր են: Կլիման հասարակածային է: Հարուստ և արեվադարձային բուսականությամբ:

Բիրման — լենուտ յերկիր է: Հյուսիսից-հարավ կտրում են լեռնաշղթաներ — սկսած Հիմալայի ստորաներից: Նրա միջով հոսում է իրավադի՝ Բիրմայի պլխավոր գետը, վոր նավագնաց է: Այս գետի հովիտը Բիրմայի պլխավոր գյուղանտեսական շրջանն է:

Հնդկաստանի կլիման խիստ բազմազան է: Հյուսիսային լեռնային գոտին, հատկապես Հյուսիս-արեվմըցյան փեշերը, ինչպես և Բենգալյան Հարթավայրը, հարուստ և մթնոլորտային տեղումներով: Շատ ավելի նվազ տեղումներ և ստանում Դեկանի բարձրավանդակը, վորը կտրված է ծովից լեռներով: Վողջ Հյուսիս-արևմուտքը (ինդոսի ավազանը) — խիստ չորացին մարդ է, վորտեղ մուսսոնների ազդեցությունը վերջանում է և կլիման մոտենում է Հարեվան իրանի բարձրավանդակի շոր-ցամաքային կլիմային: Այստեղ

առանձնապես մեծ և արհեստական փոռոգման դերը, փորի համար պայմաններն ավելի նպաստավոր են Փենջաբում («Հինգ գետեր»), վորտեղ ինդոսը ընդունում և մի քանի կարևոր վտակներ: Ինդոսից արելելք տարածվում և Թար ավագութ կիսանապատր: Մուսունների բերած տեղումները անհավասար են, դրա հետեւանքով ել առանձին շրջաններ հաճախ յենթակա յեն յերաշտի վտանգին, ավելի նվազ Փենջաբը, ուր յերկրագործությունը կախված և գլխավորապես վոչ թե անձրեվներից, այլ հիմնված և արհեստական վոռոգման վրա:

Մուսունների փոփոխությունը զուգորդվում և սաստիկ փոթորիկներով— տայֆուններով, վորոնք Հնդկաստանի արևելյան ափում յերեմն հասնում են սոսկալի ուժգնության:

Հնդկաստանը հարուստ և եներգետիկ ռեսուրսներով: Դեկանի բարձրավանդակի տարրեր մասերում գոյություն ունի քարածուխ, ընդհանուր պաշարը մոտ 80 միլի. տոնն. Բիրմայում՝ և այլ վայրերում՝ նավթ (վոչ մեծ պաշարով): Հյուսիսային Հնդկաստանը շատ հարուստ և ջրային եներգիայով (27 միլ. ձիու ուժ): Հնդկական գետերի անհարժմարությունը՝ նրանց մակարդակի փոփոխականությունն ե:

Հանքային հարստությունները գտնվում են յերկու շրջաններում: Դեկանում՝ յերկաթ, մարգանեց, վոսկի, և Բիրմայում՝ արծիճ, արծաթ, անագ, պղինձ: Մաքուր յերկաթի պաշարը հաշվվում է 2.170 միլ. տոնն: Այսպիսով Հնդկաստանը ունի նպաստավոր պայմաններ մետաղագործության զարգացման համար: Հընդկաստանը հարուստ և թանկագին քարերով:

Հնդկաստանի բնակչությունը կազմված և չափից գուրս խառն ծագում ունեցող բազմաթիվ ժողովուրդներից և ցեղերից: Զնայած դրան, նրանցից յուրաքանչյուրը զգալիորեն պահպանել և առանձնացած վիճակի: Այդ բանին նպաստում են յերկրի ընդարձակությունը, ֆիզիքական հատկությունները, առանձին շրջանների պատմական և տնտեսական զարգացման տարբերությունը, դասակարգային հասարակակարգում ազգային և կրոնական խտրությունները, և վերջապես, նոր ժամանակներում գաղութային ձնշումն ու իմպերիալիստական քաղաքականությունը:

Հնդկաստանի ցեղերն ու ժողովուրդները գտնվում են զարգացման տարբեր աստիճանների վրա: Հնդկաստանի նույնիսկ զարգացած ժողովուրդների մոտ պահպանվել են տոհմային կարգի մնացորդներ, հասարակական հարաբերությունների հնագույն ձևեր՝ ամուսնության և ընտանիքի բնագավառներում:

Բազմազան են Հնդկաստանում հնուց ընդունված կրոնները. տիրապետող և ինդուիզմը, վոր ունի 240 միլ. դավանողներ, այնուհետև իսլամը—մոտ 77 միլ. մարդ, բուդդիզմը—մոտ 12 միլ., քրիստոնեյությունը—մոտ 6 միլ., անհիմիզմը—մոտ 8 միլ. և այլն:

Այս հանգամանքները և ընդհանրապես բավարար ուսումնասիրության բացակայությունը դժվարացնում են այդ ժողովուրդների և ցեղերի ճշգրիտ կլասիֆիկացիան:

Յեփոպական և Հնդիկ բուրժուական պատմաբանների ուսումնասիրական փորձերը հակասական են և յեկանում են «ուսումնական» սկզբունքներից: Նորանք ամեն շանք գործ են դնում առանձնացնելու ճմա-

քուր ուսսաները», «բարձր ուսսաները» «ստորին» ու «անմաքուր ուսսաներից»:

Այսուամենայնիվ յելնելով մարդաբանական այս կամ այն հատկանիշների համեմատական հետազոտությունից կարելի յէ նշել Հնդկաստանի բնակչության մեջ չորս հիմնական խմբեր: Դրանք են. 1) նեղրական խումբը (նեգրոփոներ), վորի հիմնական տիպը մոտիկ և Անդամանյան կղզիների և Մալայան արշիպելագի բնակիչների տիպին. 2) դրավիդներ, վորոնք Հնդկաստանի հին բնակիչներն են, չնայած, վոր ժամանակի ընթացքում խառնվել են այլ եթիկական տարրերի հետ: Բոլոր տվյալները վկայում են, վոր ժամանակակից դրավիդների նախնիները 3—2 հազարամյակին մեր թվարկությունից առաջ բարձր կուլտուրայի ստեղծողներն են յեղել: Այդ հաստատվում է Հընագիտական Հուշարձաններով, վորոնք հայտաբերվել են Սինդի շրջանում «Մոխենջո-դարոյի» և Կենտրոնական նահանգներում Խարապայի Հնագիտական պեղումների շնորհիվ, ինչպես և նրանց կուլտուրային մոտիկ Քելուջիստանի, Վազիրստանի և Փենջաբի Հուշարձաններով: 3) Մոնղոլական խումբ (մոնղոլոփոներ), վորը մոնղոլական արշավանքների ու ազդեցության հետևանք և հաճախ խառն՝ դրավիդների հետ: 4) Ավելի կամ նվազ շափով յելքոպական խումբը: Յեղրոպական գրականության մեջ այս խումբը կոչվում է «արիական» կամ «Հնդկա-արիական»: Արիատոհմիկ ազնվական ելին իրենց կոչում հին հյուսիսային Հնդկաստանը նվաճող ժողովուրդները, իսկ ներկայումս «արիական» անունը զուտ լեզվաբանական տերմին եւ Այս խումբը իր կուլտուրական աստիճանով բնակ

բարձր չեր, այլ ավելի ցածր եր ժամանակի բարձր կուլտուրային հասած դրավիդներից, վորոնց կուլտուրան (Մոխենջո-դարոյի և Խարապայի) հոմանիշ եր ժամանակակից անորո-բաբելական կուլտուրային և նույնիսկ վորոշ շափով յուրացվել եր վերջինից: Յեղրոպական խմբին են պատկանում ուշպուտները, ջաթերը, դարդերը, գուրկաները, սիկհերը: Սրանք ապրում են գերազանցապես ֆենջաբում, Ռաշպուտանայում, Կաշմիրում և մասամբ Հնդկաստանի այլ շրջաններում:

Ավելի ուշ ժամանակները իրանցիների, սկյութացիների, Հոների, արաբների, թյուրքերի, մոնղոլների տեղաշարժերի ու արշավանքների հետևանքով Հնդկաստանի տերիտորիայում ստեղծվեցին մասամբ կղզիացած, մասամբ խառն նոր ժողովուրդներ:

Հնդկաստանի բնակչության ավելի կամ նվազ ընդհանուր նշվում է յերկու տերմինով.— «Հընդկացիներ» և «ինդուաներ»: Առաջին տերմինը, վորը կուլտուրոսի հանրածանոթ սիալի շնորհիվ նմանություն ունի Ամերիկայի բնակիչների— «Հնդիկներ» անվան հետ, մնում է անհաջող, չնայած, վոր գործածությունից դուստ չի գալիս: «Հնդկական» ածականը մնում է լայն իմաստով ամբողջ Հնդկաստանին վերաբերող: «Ինդու» տերմինը գրականության մեջ գործածվում է տարբերառումներով: Վորոշ դեպքերում այդ տերմինի տակ հասկացվում է բացառապես վերոհիշյալ յելքոպական խումբը, այլ դեպքերում՝ տվյալ խումբը դրավիդների հետ միասին, վերջապես, ավելի հաճախ այս տերմինը նշանակում է ինդուիզմը դավանող: Ավելի ճիշտ է դա վերաբերել Հնդկաստանի վողջ բնակչությանը:

ՎԵԴԱԿԱՆ ՇՐՋԱՆԸ ՅԵՎ ԴԱՄԱԿԱՐԳԱՅԻՆ
ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱԶՄՎԵԼԸ

Հնդկաստանի հնագույն պատմության համար արժանահավատ աղբյուրներ միանգամայն բացակայում են: Բուրժուական գրեթե վողջ պատմագրությունը հընդկական կովտուրայի ծագումը կապում է այսպես կոչված արխական ցեղերի Հնդկաստան տեղափոխելու հետ, վորոնց հախահայրենիքը, իբր թե, յեղել է Ամուղարիյա գետի հովիտը: Բուրժուական հետազոտողները պնդում են, վոր մեր երացից առաջ 3-րդ հազարամյակի կեսերին, արիացիները սկզբում յերևացին ինդոս գետի ավագանում: Այստեղից նրանք իբր թե տարածվեցին մնացած Հնդկաստանում, վոչնչացնելով կամ իրենց յենթարկելով տեղական հնագույն բնակչության «ստորին» ուսասաներին—կոլարիներին և գրավիդներին: Սակայն ժամանակակից հետազոտությունները հերքում են արիական ցեղերի կողմից Հնդկաստանի նվաճելու տեսությունը: Այս առասպելական նվաճումից շատ առաջ Հնդկաստանում գոյություն ուներ դասակարգային հասարակություն, բավական բարձր կովտուրայով, ստեղծված բնիկների կողմից, վորոնք, սակայն, ըստ հնդ-յեփրոպական տեսաբանների՝ պատկերացվում են վորպես վայրենիներ: Բուրժուական ազգագրագետների պնդումներ՝ արիացիների շարքը դասվող բոլոր ժողովուրդների միասնական հնդկա-գերմանական ուսասացի մասին, վորին իբր պատկանել են և Հնդկաստանի արիացիները, նաև բոլոր արիացիների ընդհանուր նա-

խահայրերի մասին՝ հանդիսանում են բացարձակապես հակագիտական և ուսակցություն ուսսայական տեսություններ:

«Արիա» տերմինի նշանակությունը նահապետական տոհմային ժամանակաշրջանի վերաբերմամբ դեռևս պարզված չե: Համենայն դեպս նա վոլ մի առնչություն չունի մտացածին «արիական ուսսա»-ին հետ: Դասակարգային հասարակության մեջ «արիա» բառը նշանակում եր «ազնվազարմ», «տոհմիկ» և հնագույն Հընդկաստանում գործածվում ե վոլ ամրող ժողովրդի, այլ հարստություն, ստրուկներ և իշխանությունն իրենց ձեռքը կենտրոնացրած հասարակական վերնախավի նկատմամբ:

Հնդկաստանի հնագույն պատմության կարելորագույն աղբյուրներից մեկը հանդիսանում են Վերաները*: Այդ վեդաների, հատկապես դրանցից հնագույնի Ռիգ-Վեդայի տվյալները հնարավորություն են ընձեռնում գաղափար կազմելու հյուսիսային Հնդկաստանի ժողովուրդների սոցիալական կառուցվածքի և կուտուրայի աստիճանի մասին՝ մեր թվարկությունից առաջ 2-րդ հազարամյակի վերջին և 1-ին հազարամյակի սկզբին:

Այդ ժողովուրդներն այն ժամանակ գտնվում ենին տոհմական կարգերի քայլայման և դասակարգային հասարակության կազմավորման աստիճանում: Ցեղականիներին կանգնած եր յեղապետը՝ «ուաշա»-ն (կառավարիչ), նա առաջին հերթին առաջնորդ եր պատերազմի ժամանակ, ընտրվում եր ժողովրդական ժողովի կողմից, սակայն յերբեմն ել կարող եր այդ իշխանությունը

փոխանցել ժառանգաբար: Ծաշայի իշխանությունը սահմանափակված էր տոհմի բոլոր ռազմումակ անդամների «սամիտի» ժողովով: Պատերազմ հայտարարել, խաղաղություն կնքել կարող էր միայն այդ ժողովը:

Աշխատանքի բաժանման, հարստությունների կուտակման և գույքային անհավասարության շնորհիվ՝ առանձնանում են ավելի ուժեղ, հարուստ տոհմերը, ստեղծվում եր արիստոկրատիա՝ «մահավան» (տոհմիկներ), հարուստներ) կամ «սուրբի» (փառահեղներ): Ավելի հետագա Վեղաններում հիշվում են իշխաններ, վորոնք առանձին մարզերին գիտավորող ազնվականներն են: Ժողովրդի հիմնական զբաղմունքը յերկրագործությունը և անասնապահությունն եր: Յերկրագործության մեջ արգեն կիրավում եր արհեստական վոռոգումը, ցանում եյին գարի, կորեկ, և ավելի քիչ՝ ցորեն: Բրինձը նրանց հայտնի չեր: Անասնապահությունը շատ մեծ դեր եր խաղում: Պատերազմը հաճախ կոչվում եր «գալիշտի»—«կով ձեռք բերելու ցանկություն», իսկ առաջնորդը—«գուպտա»— այսինքն հովիվ, հոտ պահպանող: Զարգացած եյին արհեստներ, հատկապես ջուշակությունը, դարբնությունը, բրուտագործությունը, ատաղձագործությունը և կաշեգործությունը: Վեղանները հիշում են և առերականների—«պանի» մասին:

Հողը պատկանում եր համայնքին: Ընտանեկան համայնքը՝ համայնական հողովագործումով, Հնդկաստանի հասարակության սկզբնական ձևն եր: «Ընտանեկան այս համայնքները հիմնված եյին տնայնագործության վրա, ձեռքով գործելու, ձեռքով մանելու և հողը

ձեռքով մշակելու աշխատանքի մի յուրահատուկ կոմբինացիայի վրա, վորն այդ համայնքներին ինքնաբավ բնույթ էր տալիս» (Մարքս և Ենգելս, Յերկեր հ. 9-րդ հջ. 315):

Համայնքի գլխին կանգնած էր տանուտերը—«վիշպատի»: Դասակարգավին շերտավորման պրոցես արտահայտվում էր այն սուր տարբերության մեջ, վորը գոյություն ուներ մի կողմից՝ հաղթողների շարքը դասվող հարուստների և տոհմիկների և մյուս կողմից՝ վոչ-տոհմիկների միջև, վորոնք դասվում եյին պարտվածների շարքը: Տոհմիկ ազնվականությունը, վորը իրեն կոշում եր «արիա», ոգտվում էր բոլոր իրավունքներով, յերկրորդները կոչվում եյին «անարիա», այսինքն վոչ-տոհմիկ և, զորկ լինելով իրավունքներից, հանդիսանում եյին համայնքի շահագործվող խավը: Անարիաները և տուրքաները (ստրովները) խոշորագույն դեր եւին խաղում այն ժամանակվա համայնքի արտադրության մեջ:

Վեղանների հնագույն մասը ստեղծվել էր Փենջարում, իսկ Վեղանների ավելի նորագույն գրքերը կազմվեցին Գանգեսի և Զիմնայի հովիտներում: Այսուղել ստեղծվեց Հնդկաստանի մեջ հայտնի հպոսներից ամենանշանակուրները — Մախարխարատա և Ռամայանա (2): Նրանց մեջ հիշատակված զեպքերը մեծ մասմբ վերաբերում են դիցաբանությանը (միթուգիա): Սակայն այս վեպերն այնուամենայնիվ նյութ են տալիս առաջին հազարամյակի առաջի կիսի (մեր տարեթ. առաջ) Հնդկաստանի ժողովուրդների կենցաղի մասին: Նախկին տոհմային կարգը քայլայվում էր, ստեղծվում

եյին մեծ պետություններ: Արտադրողական ուժերի աճը և աշխատանքի հասարակական բաժանումը տեղի յերունենում արդեն ձեվավորված և զարգացած դասակարգային հասարակության բազայի վրա:

Գոյություն ունեն տարբեր տեսակետներ Հնդկաստանի վաղ դասակարգային հասարակության բնույթի մասին: Հնարավոր չե ճշգրիտ վորոշել՝ ստրկատիրական թե՝ ֆեոդալական շահագործման յեղանակն եր այդուղ գերակշռում: Համենայն դեպս ստրկատիրությունը հնագույն Հնդկաստանում շատ մեծ դեր եր խաղում: Հավանորեն, այդ ժամանակ սկսվում են ձեսավորվել կաստաները³), վորոնք բացակայում եյին Վեդական շըրջանում: Տիրող դասակարգը դառնում է զինվորական արիստոկրատիա՝ կշատրիների կաստայի մեջ միացած. կազմվում է նաև քրմերի—բրահմաների հզոր կաստան:

Հնդկաստանում առաջին հազարամյակի սկզբին (մեր տարեթ. առաջ) տոհմական համայնքին հաջորդում ե գյուղական տերիտորիալ համայնքը, վորի գոյությունը պայմանավորում եր, ըստ Մարքսի, Հնդկական պատմության առանձնահատկությունը: Գյուղական համայնքների առաջանալը նշանակալից շափով՝ պայմանավորված եր նրանով, վոր յերկրագործությունը, վորի վրա եր հիմնվում հնագույն Հնդկաստանի վող եկոնոմիկան, Հնդկաստանի գետերի հովիտներում հնարավոր եր միայն լայնորեն զարգացած ջրաբաշխական սիստեմի պայմաններում: Վոռովման կազմակերպումը, ջրանցքների, ամբարտակների և ջուրը վեր բարձրացնելու բարդ սիստեմը պահանջում եր մեծ թվով մարդկանց միատեղ շանքերը: Արտադրողական ուժերի հետագա

զարգացումը պահանջում է վոռովման սիստեմը կազմակերպել ավելի լայն մասշտաբով, վորը համայնքի շրջանակներից գուրս պիտի լիներ: Արտադրության այս պահանջները դառնում եյին Հնդկաստանում բավական խոշոր կենտրոնացած պետությունների համեմատաբար վաղ առաջացման տնտեսական հիմքը: Ենդեւսն «Անտի-Դյուրինգ»-ում գրում է. «Պարսկաստանում և Հնդկաստանում բարձրացող և ընկնող բազմաթիվ բռնապետությունները բոլորն ել գերազանցապես ըմբռնում ելին իրենց առաջնակարգ պարտականությունը, հոգ տանելով հովիտների վոռովման մասին, առանց վորի այդ յերկրներում անհնար եր յերկրագործությունը» (Մարքս և օնդեւս, Յերկեր, հ. 14-րդ եջ՝ 182):

Մարքսը «Բրիտանական տիրապետությունը Հընդկաստանում» իր հոդվածում փայլում և սպառիչ կերպով բնութագրում է Հնդկաստանում գյուղական համայնքի առաջացման պատճառները, նրանց կապը արշեստական վոռովման հետ, նրանց դերը յերկրի տնտեսական և քաղաքական կյանքում:

«Ասիայում անհիշելի ժամանակներից ի վեր գոյություն ե ունեցել կառավարման յերեք ճյուղ՝ ֆինանսական գերատեսչություն, կամ իր սեփական ժողովրդին կողոպտելու գերատեսչություն, ուզմական գերատեսչություն կամ այլ ժողովուրդներին կողոպտելու գերատեսչություն և վերջապես՝ հասարակական աշխատանքների գերատեսչություն: Կլիմայական և հողային պայմանները, հատկապես անապատային վիթխարի տարածությունները, վորոնք ձգվում են Սահարայից սկսած Արաբիայի, Պահետականի, Հնդկաստանի և



Թաթարիայի վրայով մինչև Ասիական սարահարթի բարձրութենքը, զրանցքների և զրային կառուցվածքների միջոցով արհեստական կերպով հողը վոռոգելու սիստեմը դարձրել են արևելյան յերկրագործության հիմքը:

«Ինչպես վոր Յեղիպտոսում և Հնդկաստանում ուսումնամբ են վարարումներից դաշտերը վոռոգելու համար, ճիշտ այդպես ել Միջագետքում և Պարսկաստանում և այլ յերկրներում ոգտվում են ջրի բարձր մակարդակից վոռոգից ջրանցքները ջրով լցնելու համար: Զուրբ խնայողաբար և միատեղ ոգտագործելու այդ տարրական անհրաժեշտությունը, վորն Արևմուտքում հարկադրել ե մասնավոր ձեռնարկատերերին իրար հետ միանալու և կամավոր ասոցիացիաներ կազմելու, ինչպես Ֆլանգիայում և Իտալիայում, Արևելքում, ուր քաղաքակրթությունը գտնվում եր շափազանց ցածր մակարդակի վրա և վորտեղ տերիտորիան շափազանց ընդարձակ է, վորպեսզի կյանքի կոչքեն կամավոր միությունները, հրամայաբար պահանջվում եր, վոր կառավարության կենտրոնացնող ուժը միջամտի: Այստեղից ել այն տնտեսական ֆունկցիան, վոր ստիպված ելին կատարելոր բոլոր ասիական կառավարությունները այն ե՝ հասարակական աշխատանքների ֆունկցիան: (Մարքս և Ենգելս, Յերկ. Հ. 9-րդ, Էջ՝ 347—348):

«Այս յերկու հանգամանքները, — շարունակում է Մարքսը, — մի կողմից՝ այն, վոր Հնդիկները բոլոր արեվելյան ժողովուրդների նման կենտրոնական կառավարությանն են վերապահում խոշոր հասարակական կառուցվածքների հոգուր, վորը նրանց յերկրագործության

և առևտորի Հիմնական նախապայմանն ե հանդիսանում, մյուս կողմից՝ այն, վոր Հնդկաստանի ամբողջ տարածության վրա ցրված բնակչությունը կազմում է փոքրիկ կենտրոններ, վորոնց գոյությունը հիմնված է յերկրագործական և արդյունաբերական աշխատանքի միջև յեղած տնային կապի վրա, — այս յերկու հանգամանքները անհիշելի ժամանակներից սկսած ստեղծել են յուրահատուկ գծեր ունեցող սոցիալական մի սիստեմ, այսպես կոչվող համայնական սփառեմք (village system), վորն այդ մասն միություններից յուրաքանչյուրին անկախ կազմակերպության և առանձին յուրահատուկ կյանք և հաղորդում: Այս սիստեմի յուրահատուկ գծերի հետ մեզ ծանոթացնում է հետեւյալ նկարագրությունը, վորը գետեղված ե անգիտական համայնքների պալատի մի հին պաշտոնական հաշվետվության մեջ՝ Հնդկական գործերի մասին:

«Գյուղը աշխարհագրական տեսակետից ներկայացնում է մի տարածություն, վորը պարունակում է մի քանի հարյուր կամ հազար ակր մշակված և անմշակ հող, քաղաքական տեսակետից նաև նման է քաղաքային կորպորացիայի: Գյուղում կան մի շարք բարձր և ստորին պաշտոնատար անձինք: Potail, կամ տանուտերը ընդհանուր հսկողություն ունի գյուղի գործերի վրա, հարթում և բնակիչների վեճերը, վարում և վոստիկանությունը և կատարում է հարկահավաքի պարտականությունը գյուղի ներսում, մի պարտականություն, վորի կատարման համար նաև ամենահարմար մարդն է հանդիսանում թե՛ իր անձնական ազդեցության և թե՛ բնակիչների դրության ու գործերին հանգամանորեն ծանոթ

լինելու հետևանքով։ Կորուտ-ը Հետեռում է յերկրագործության վիճակին և արձանագրում է նրան վերաբերող բոլոր խնդիրները։ Tallier և Totie սրանցից առաջինի պարտականությունն է տեղեկություններ հաղորդել հանցագործությունների և որինազանցությունների մասին, ինչպես և մի գյուղից մյուսը տեղափոխվող անձանց ուղեցելն ու պաշտպանելը, իսկ յերկրորդի պարտականությունը, ըստ յերևությին, սահմանափակված եր գյուղի շրջանակներով և ի միջի այլոց վերաբերում եր բերքի պաշտպանությանը և դրա հաջվառմանը աջակցելու։ Սահմանապահը պահպանում է գյուղի սահմանները կամ թե իրեն վկացուցմունքներ և տալիս դրանց մասին՝ վեճի դեպքում։ Ջրամբարի և առուների վրա հսկող անձնավորությունը բաշխում է ջուրը յերկրագործության կարիքների համար։ Հատուկ մի բրամին վարում է գյուղում պաշտամունքի գործերը։ Այնուհետև գալիս են՝ գյուղական ուսուցիչը, վորին կարելի յետեսնել գյուղում յերեխաններին ավագի վրա կարդալ-գրել սովորեցնելիս, որացուցային բրամինը կամ աստղադրությակը և այլն։ Այս բարձր ևստորին պաշտոնյանները կազմում են գյուղի վարչությունը, սակայն յերկրի մի քանի մասերում դրանց շտատը ավելի փոքր է, քանի վոր վերը նկարագրած պաշտոններից ու ֆոնկցիաներից մի քանիսը կատարում է միենույն անձնավորությունը, մինչդեռ այլ մասերում, ընդհակառակը, նրանց շտատը շատ ավելի մեծ է վերոհիշյալից։

«Համայնական վարչության այս պրիմիտիվ ձևի ներքո բնակչությունն ապրել է անհիշելի ժամանակներից սկսած։ գյուղերի սահմանները հաղվադեպ ելին

փոխվում՝ թեև իրենք գյուղերը ապրել են ծանր մոմենտներ և ավերվել են պատերազմի, սովոր և հիվանդությունների շնորհիվ, սակայն միենույն անունում, միենույն սահմանները, միենույն շահերը և անգամ միշտյունը դարձնելու շարունակել են իրենց գյուղյունը դարեւդար։ Այդ գյուղերի բնակիչներին ամենակին չեյին անհանգստացնում ամբողջ թագավորությունների կործանումն ու բաժանումը, քանի վոր իրենց գյուղը մնում էր վողջ և անվնաս։ Նրանց քիչ եր հետաքրքրում այն, թե վո՞ր պետության իշխանության տակ ե ընկել իրենց գյուղը և վո՞ր թագավորին ե նա յենթարկվել, քանի վոր նրանց ներքին տնտեսության հիմքերը մնում ենին անփոփոխ (նույն տեղ, եջ՝ 349—350)։

Մարքսը ցուց է տալիս, վոր կայում գյուղական համայնքի գյուղյունը Հնդկաստանում պայմանավորվում եր եկոնոմիկայի և դասակարգական հարաբերությունների լճացումով ու կոնսերվատիզմով։ «Մենք այնուամենայնիվ չպետք է մոռանանք, վոր այս հովկերդական գյուղական համայնքները, վորքան ել նրանք անմեղ թվան, միշտ ել հանդիսացել են արևելյան բըռնապետության ամուր հիմքը, վոր նրանք մարդկության միտքը սահմանափակում ելին ամենանեղ շրջանակներով, նրան անահավատության հլու գործիք դարձնելով, նրան տրագիցիոն կանոններին յենթարկելով, զրկելով նրան ամեն մի վսեմ հատկությունից, պատմական գործողության ամեն մի յեռանդից» (նույն տեղ, եջ՝ 315)։

ՀՆԴԿԱՍՏԱՆԻ 7-ՐԴ—6-ՐԴ դ. դ. ՄԵՐ ՏԱՐԵԹՎԻՑ
ԱՌԱՋ ՄԻՒԶԵՅԻ 9—10-ՐԴ դ. դ.

Հնդկաստանի հնագույն ժամանակների կոնկրետ պատմության մասին ավելի քիչ աղբյուրներ կան, քան սոցիալական կարգի մասին։ Հնդկաստանի և Արեվմուտքի միջև, սկսած 9-րդ դ. (մեր տարեթվ. առաջ) հաստատվում են սերու հարաբերություններ, հատկապես Ասորեստանի, և քիչ հետո՝ Քաղղեական Բարելոնի հետ։ Հին Հնդկաստանի գրական հուշարձաններից յերեվում ե, վոր այդ ժամանակ յերկրի ներսում տեղի ուներ սուրբ դասակարգային պայքար, այդ թվում և տիրող դասակարգերի—կշատրիների և բրահմանների—միջև՝ քաղաքական և տնտեսական առաջնության համար, ստրուկներ և հողեր ձեռք բերելու համար, վորոնք սկսել ելին կենտրոնանալ տաճարների տիրապետության ներքո։ Այդ պայքարը պարզ կերպով արտացոլում է «Ծամայանա»-ի մեջ և այլ պոեմաներում։ Որինակ՝ «Ծամայանա»-յում ասվում ե—«Հկա մեկը, վոր ավելի բարձր կանգնած լիներ կշատրիից, ուստի յերբ թագավորը զոհ և մատուցում, թող զոհը բրահման մատուցե կշատրիից հետո»։ մի այլ տեղ ել (Հավանորեն հետագյում ավելացած) առաջին տեղն են դասվում բրահմանների սրբությունն ու իշխանությունը։ Այդ պայքարից հաղթանակող են գորս գալիս բրահմանները։ «Ծամայանա»-ի հերոսը՝ Ծիսման—պատկերացվում ե վորպես բրահմանի վորդի և «յեռակի յոթն անգամ» շախ-

շախում ե իր կացնով կաշատրիներին, մաքրելով յերկիրը նրանցից։ Բրահմանության հեղեմոնիան հավերժացվում ե կրոնի կողմից։

Գրական հուշարձաններից կարելի յե նաև վորոշ տեղեկություն քաղել առանձին պետությունների միջև մղվող պայքարի մասին։ Այդպիսի պայքար գոյություն ուներ խոշորագույն պետության՝ Մագաղհայի (Գանգեսի ավազանի արևմտյան մասում) և Հարեւան իշխանությունների միջև։ Մագաղհայի թագավորների փոփոխությունը տեղի ուներ սովորաբար պալատական հեղաշրջումների հետեւանքով։ Այս ձևով, ըստ յերևովթին, թագավոր դարձավ Շաշունագա դինաստիայի հիմնադիր Բիմբասիրուն (582 թ.), վորի մասին Հաղորդում են հուշարձանները։ 4-րդ դարում (մեր տարեթ. առաջ) Մագաղհայի թագավորները հիմնեցին Պատալիպուտրա (ներկայիս Պատնա) քաղաքը, վորը յերկար ժամանակ Հնդկաստանի խոշորագույն կենտրոններից մեկն եր։

5-րդ դ. (մեր տարեթվից առաջ) Հանդես ե գալիս բուդիզմը, վորը յուրատեսակ ռեակցիա յեր բրահմանիզմի և այն իշխանության դեմ, վորով ոգտվում ելին բրահմանները Հնդկաստանում։ Բուդիզմը սկզբներում վո՞չ միայն կրոնական ու փիլիսոփայական, այլ և սոցիալական մի շարժում եր, իր մեջ պարունակելով մի քանի տարբեր հոսանքներ։ Վաղ բուդիզմը ստեղծվեց Հավանորեն այն շրջադարձային մոմենտին, վորը տեղի ուներ այդ ժամանակ Հնդկական թագավորությունների տնտեսական և քաղաքական կյանքում։ Միշարք հետագոտողներ բուդիզմի ծագումը քրիստոնեության նման կապում են արտադրության ստրկա-

տիրական յեղանակի քայլայման և գեպի ֆեռդալիզմը փոխանցելու հետ, վորոն նրանց կարծիքով տեղի ուներ Հնդկաստանում 6—4-րդ դ. դ. (մեր տարեթվ. առաջ), Մյուսները, վորոնք Հնդկաստանում ստրկատիրական ֆորմացիայի գոյությունը ժխտում են, բուդդիզմի առաջացումը բացատրում են վաղ ֆեռդալիզմի նահապետական հարաբերությունների և բնատնտեսության ճգնաժամով, վոր ծագել եր մի կողմից՝ քաղաքների և առետրական հարաբերությունների զարգացման (մանավանդ Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքների շնորհիվ) և մյուս կողմից՝ գյուղացիության և քաղաքային արհեստավորության սաստկացած շահագործման հետևանքներով։ Նախնական բուդդիզմի մեջ արտահայտվում եր այն սոցիալական դժգոհությունը, վոր խմորվում եր վոշարտոնյալ դասակարգերի շրջաններում՝ սկսած առետրականներից, վորոնք նույնպես գտնվում ելին բրահմանների և կշատրինների ճնշման ներքո, մինչև գյուղացիությունը, արհեստավորությունը և ստրուկները։ Այդ ապացուցվում ե նրանով, վոր բուդդիզմը բացասաբար եր վերաբերվում հնդկական հասարակության կաստայական բաժանմանն ու կաստայական կարգերին, չնայած, վոր բուդդիզմի տիրապետության շրջանում կաստայական կարգը մնաց անհողող։

Բուդդիզմը 4—3-րդ դ. դ. (մեր տարեթ. առաջ) դուրս մղեց բրահմանականությունը և դարձավ պետական կրոն Հնդկաստանում։ Սակայն բրահմանիզմի դեմ համար պայքարը շարունակվեց ամբողջ տասը դար։

4—6-րդ դ. դ. (մեր տարեթ.) սկսվեց բրահմանիզմի վերականգնումը և 8—10-րդ դ. դ. բուդդիզմը դուրս մղվեց Հնդկաստանից։

Բուդդիզմը ասկետիզմի, աշխարհից հրաժարվելու և շարին չփառագրելու իր քարոզներով վո՛շ թե հեղափոխական, այլ պասսիվ սոցիալական բողոքի արտահայտությունն եր։ Իր գոյության յերկու հազար տարվա ընթացքում բուդդիզմը հետզհետե արմատական վերասերման յենթարկվեց, դառնալով տիրապետող դասակարգերի գաղափարախոսովիյուն, դառնալով վորոշ ժամանակ Հնդկաստանի (այնուհետև նաև Հեռավոր Արևելքի մյուս յերկրների) պաշտոնական կրոնը և զրկվելով այն ընդդիմագիր տարրերից, վորոնք նրան հատուկ ելին սկզբնական աստիճանում։ Բուդդիզմի ծագման և տարածման ժամանակաշրջանը համընկնում է Հնդկաստանի տնտեսական-քաղաքական և կուլտուրական կատերի ուժեղացմանը Արևմուտքի հետ։ Ավանդությունները պատմում են Կյուփոսի հնդկական արշավանքների մասին, վորն իբր թե հարկ եր վերցնում Հնդկաստանի հյուսիս-արևմտյան ցեղերից։ 509 թ. Դարեհ Վշտասապը, Ինդոս գետի վրա արշավանք կազմակերպելով, նվաճում է Փենջաբի արևմուտքը և հնդոսի գետաբերանը, վորտեղ կազմակերպվում է պարսկական սատրապություն։ Ինդոսը դառնում է ընդհուպ մինչև Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքը պարսկական պետության արևելյան սահմանը։ Հույն-պարսկական պատերազմների ժամանակ Հույների դեմ դուրս յեկած Քսերքսեսի զորքերի մեջ կային և Հնդիկներ։ Այդ ժամանակ Մագադհայում կառավարող Շալցունագա դինաստիային փոխարինեց

Պանդա դիմաստիան (413թ. մեր տարեթ. ա.), վորը հիմնել է, ինչպես ավանդություններն են հաղորդում, վորմն Մախապատմա, ծագումով շուրջա կաստացից։ Այս հանգամանքը վկայում է Մագարչայում տիրող կատաղի դասակարգային պայքարի մասին։ Մոտավորապես 500 թ. (մեր տարեթ. ա.) Հնդիկների կողմից նվաճվեց Յելոն կղզին։

Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքի ժամանականից միայն կարելի յև խոսել Հնդկաստանի պատմության մասին, հիմնված ավելի հաստատուն փաստական տվյալների վրա։ 327 թ. (մեր տարեթ. ա.), Ալեքսանդր Մակեդոնացին հայտնվում է Ինդոսի ափերին։ Այդ ժամանակ Փենչաբը մասնաւուած էր մի շարք մանր, իրար թշնամի պետությունների։ Դրանցից ավելի խոշորը պուրու ցեղի պետությունն էր, վորտեղ կառավարում էր Պոր թագավորը։ Ոգովելով նրանից, վոր պուրու ցեղը թշնամության մեջ էր գանդխարա ցեղի հետ, Ալեքսանդրն իր կողմն էր գրավում վերջինների թագավոր—Տակշաշիլային։ Նրա աջակցությամբ Ալեքսանդրին հաշողվում է, անցնելով Ինդոսը, Հաղթել Պորին։ Ալեքսանդրը շարժվում է դեպի Փենչաբի խորքերը, մտադրություն ունենալով թափանցել Գանգեսի հովիտը, սակայն արշավանքներից հոգնած զինվորները հրաժարվում են հետևել նրան։ Ալեքսանդր Մակեդոնացին ստիպված յեղավ վերագանալ Ինդոսի ափերը, իջնել նրա գետաբերանը։ Այստեղից նա, զորքերի մի մասն ուղարկելով ծովային ձանապարհով, իսկ մյուս մասն անցկացնելով Պարսկաստանի հարավով, վերադառնում է Բարելոն։

Ալեքսանդրի Հաղթանակները Հնդկաստանում վոշմիացն նրա զորքերի լավ կազմակերպվածության և զինվածության արդյունք ելին։ Նրա հաղթանակներին մեծ շափով նպաստեցին Հնդկական հասարակության տրոհվածությունը, իրար թշնամի կաստաների ներհակությունները, գյուղական համայնքների անջատությունը, վորոնց մեջ մարդիկ «կենտրոնանալով աննշան հողակտորի վրա հանդարտ դիտում ելին, թե ինչպես են կործանվում մեծ կայսրությունները... և իրենք ել անոնքնական ավար դառնում ամեն մի բռնավորի» (Մարքս և Ենգելս, Յ. 9-րդ, հջ՝ 351)։

Սակայն Ալեքսանդր Մակեդոնացու հաջորդների հնդոսի ափերին վերջնականապես հաստատվելու ձրգումը Հնդիկների մեջ առաջ բերեց ապստամբական շարժում ընդդեմ նվաճողների։ Այդ շարժումից ուստից վորմն Զանդրագուատա, վորը մոր կողմից ծագում էր շուրջա կաստացից։ Զանդրագուատան 322 թ. տիրեց վորդ Փենչաբին և աւագ 315 թ. Մագարչայի թագավորությանը Գանգեսի վրա։ Նա ստեղծում էր Հզոր թագավորություն, վորն ընդգրկում էր վորդ Ինդոսի ավազանը մինչև նրա դելտան։ Սելեվկոս I-ին նիկատորը ի վիճակի շեր նրա դեմ պայքարելու և գերազանց Զանդրագուատայի հետ քարեկամական հարաբերություններ պահպանել, ուղարկելով նրա մոտ գեսպանություններ։ Հույն Մեգասմենը, լինելով Սելեվկոսի ներկայացուցիչը Արախոսիայի սատրապի մոտ և Պատամիպուտրա մայրաքաղաքը ուղարկված դեսպանության մասնակից, տվել է այն ժամանակվա Հնդկաստանի նկարագրությունը, վորը մեզ հասել է լոկ հատվածնե-

ըով («Հնդիկա»): Բացի այդ, վերջերս հայտնաբերվել է Զանդրագուպտայի մինխստներից մեկի՝ Վիշնագուպտայի գրած քաղաքական մի տրակտատ «Արխարաշատրա», վորն ունի հսկայական նշանակություն Հնդկաստանի պատմության համար:

Ոգովելով այդ նյութերից, մենք կարող ենք վորոշ գաղափար կազմել Զանդրագուպտայի պետության մասին: Գա մի տիպիկ արևելյան բռնակալություն եր, թագավորը հենվում եր կշատրիների՝ զինվորական կաստայի և վարձկան զորքերի վրա: Ժողովուրդը ծանրաբենված եր ահագին հարկերով, հողագործները պետության եյին տալիս բերքի մի քառորդ մասը, առետրականները վճարում եյին վաճառված ապրանքի արժեքի 1/10-ը: Ճնշումն այնքան մեծ եր, վոր դժգոհությունն ընդունում եր ակտիվ բնույթ: Տեղեկություններ կան մի շաբք մահափորձերի մասին Զանդրագուպտայի կյանքի դեմ: Զանդրագուպտայի հիմնած Մատրիների դինաստիայի պետությունը մեծ հզորության և հասնում Զանդրագուպտայի թոռ՝ Ասոկի կամ Աշոկի որոք (272—232 թ. թ.): Այդ պետությունն ընդգրկում եր Հնդկաստանի վողջ հյուսիսը, տարածվելով հարավ-արևմուտք մինչև Փամանակակից Մայսորը, իսկ հարավ-արևելքից մինչև Որիսսա: Ասոկը բուդդիզմը դարձրեց պետական կրոն: Բուդդիզմը Ասոկի կողմից աջակցություն եր գըտնում վոշ այնքան կրոնական նկատառումներով, վորքան բրահմանների դեմ պայքարելու նպատակով, վորոնք ընդդիմանում եյին Հնդկաստանում կենտրոնացած միապետություն ստեղծելում:

Մառփի կայսրության ժամանակաշրջանը աշքի յերնկնում Հնդկաստանի տնտեսական կյանքի նշանակալից զարգացումով: Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքից հետո, Սելևկյանների պետության առաջացումով Հնդկաստանի փոխհարաբերությունները Արևմուտքի հետ զգալիորեն ընդլայնվեցին: Հնդկաստանի առելքորի աճման մասին վկայում են ինչպես Հուցնաբակտրիական և Հոոմեական, նույնպես և Հին-Հնդկական դրամների հայտնաբերումը, վորոնք 5-րդ դ. (մեր տարեթ. ա.) են վերաբերում: Անհիշելի ժամանակներից,— ինչպես գրում ե Մարքսը իր «Բրիտանական տիրապետությունը Հնդկաստանում» հոդվածում, Յեկրոպան ստանում եր զարմանալի գործվածքներ—Հընդկական աշխատասիրության արդյունքը— և փոխարենն ուղարկում եր իր թանկագին մետաղները (Մարքս և Ենդկելս, Յերկեր, Հ. 9.-րդ, Էջ՝ 348—349): Հնդկաստանը առևտուր եր անում վո՛չ միայն Արևմուտքի, այլև Արեվելքի հետ: Արգեն Յ-րդ դ. Հնդկաստանը առևտքական հարաբերություններ ուներ Զինաստանի հետ, 1-ին դարից (մեր տարեթ. ա.) Հնդկա-Զինի, Մեծ Զոնդրան կղզիների, գլխավորապես Յավայի հետ:

Մառփիի կայսրության գոլությունը շարունակվում է մինչև 185 թ., չայած, վոր արգեն Ասոկի հաջորդների որոք սկսվել եր նրա քայլայումը: Այդ ժամանակաշրջանում ուժեղացել եր Հնդկաստանի ֆեոդալիզացիայի պրոցեսը: Կայսրությունից անշատվում են մի շաբք շրջանների կառավարիչները, վորոնց առաջ նշանակում եր թագավորը. նրանք դառնում են ժառանգական ֆեոդալական իշխաններ: Մառփիի դինաստիայի

վերջին թագավորը տապալվեց և սպանվեց իր զորավար Պուշչամիտրայի ձեռքով, վորը հիմնեց Շունգա դինաստիան (185—73 թ.): Այս դինաստիայից հետո Մագագհայում հաստատվեց Կանվա դինաստիան (73—28 թ. թ.): Սա սկզբ է տանում Վասուելվա բրահմանց, վորը պաշտոնական քուրմ եր Շունգա դինաստիայի վերջին թագավորի մոտ: Կանվա դինաստիայի որով Մագագհայի պետությունը լիակատար անկման հասավ: Այս ժամանակաշրջանի պատմությունը մեզ գրեթե անհայտ է: Վորոշ տեղեկություններ կան այն մասին, վոր Հնդկաստանի հյուսիսում առաջացան մի շարք մանր ֆեոդալական պետություններ, վորոնք իրար դեմ անրնդհատ կորիվների մեջ են:

Հարավային Հնդկաստանի պատմությունը ուսումնասիրված է ավելի քիչ շափով, քան հյուսիսինը: «Մահաբիսարատայի» տվյալներով կարելի յեւ յենթագրել, վոր բրահմաններն արդեն 1-ին հազարամյակում (մեր տարեթ. ա.) թափանցում են Հնդկաստանի հարավը մինչև Կորկայ քաղաքը, Հնդկաստանի ամենահարավային մասում, Մանարյան ծովածոցի ափին: Այդ ժամանակ հարավային Հնդկաստանում գոյություն ունեին յերեք թագավորություններ— Պանդիյա, Չոլա և Զերա:

Պանդիյա թագավորության և մարգարիտներով նրա հարուստ լինելու մասին գիտեր և հույն Մեգասթենը: Դրա մասին հիշատակվում է Ասոկի վիմագրությունների մեջ: Պանդիյան հայտնի եր և Ստրաբոնին, վորը պատմում է Պանդիյայի դեպի Հռոմ՝ Ոգոստոս կայսրի մոտ ուղարկված դեսպանների և Հռոմի հետ

ունեցած առևտրի մասին: Այս տեղեկությունները հաստատվում են նաև Հռոմեական գրամների գուտով՝ Հարավային Հնդկաստանում: Պանդիյան պալքարի մեջ եր Չոլա թագավորության հետ, վորն ընկած եր հյուսիսարեւել, Հնդկաստանի Կորումանդելյան ափին:

Ավելի հյուսիս, մինչև Կրիշնա գետը, բնակվում էին մի շարք անկախ ցեղեր: Կրիշնայից հյուսիս մինչև Որիսսա գտնվում եր Կալինգի պետությունը: Մալաբարյան լիգում, Կոմորին Հրվանդանից հյուսիս մինչև ժամանակակից Կալկուտա, ընկած եր Զերա պետությունը:

Դրանից զատ, պետք է հիշատակել Անտոխայի Հզոր պետությունը (50 թ. մեր տարեթ. ա.—250 թ. մեր տարեթվ.): Բոլոր այս պետությունները բնակված եին դրամիդյան ցեղերով:

Հյուսիսային Հնդկաստանի ժողովուրդների գաղութացումը, վոր ընթանում եր ժամանակակից Գուչերաթից, թափանցելով ավելի ու ավելի հարավ, նպաստեց բրահմանների տիրապետության հաստատմանը վոր Մալաբարյան ափում: Բրահմանները իրենց յենթարկեցին այստեղ 64 համայնքների միությունը և Զերա թագավորությունը: Հնդկաստանի վորչ հարավը դարձավ բրահմանական, վորպիսին մնում եր մինչև Ասոկի ժամանակը, յերբ բրահմանականությունը դուրս մղվեց բռնդիպարմից:

Յ-րդ դարի կեսերին (մեր տարեթ. ա.) ներկայիս Ուգրեկստանի, Տաջիկստանի և Աֆղանստանի աշհմաններում կազմվեց Հույն-բակտրիական թագավորությունը, վորն անջատվել եր Սելևկյանների միապետությունը:

Թյումից: Նրա թագավորներից մեկը, Դիմիտրիոսը, նվաճեց Փենջաբը, Սինդը, Գուչերաթը և Կաշմիրը: Դիմիտրիոսը իրեն անվանում էր Հնդկական թագավոր և պատմեր էր կտրում յերկու լեզուներով— Հնդկական և Հոնական: Հույն-բակտրիական թագավորությունը՝ սակայն, 2-րդ դ. կեսին (մ. թվագր. ա.) արոհվեց մի շարք մասն իշխանությունների, վորոնք ջլատվում եյին ներքին պայքարից և պառակտումներից, շարունակ փոխելով թագավորներին: Դրանցից ամենախոշորը Հույն-Հնդկական թագավորությունն էր, վոր հիմնել էր Ապոլոպոտը, վերջին Հույն-բակտրիական թագավորներից մեկը՝ Եվկրադիտ մեծի (սպանված 165 թ. մեր տարեթ. ա.) վորդին: Վերջին Հույն-բակտրիական թագավորը համարվում է Հելեոկլը (սպանված 140 թ. և 130 թ. միջև): Ապոլոպոտը միացրեց Հնդկական Հողերը, վորոնք առաջ մտնում եյին Հույն-բակտրիական թագավորության կազմի մեջ: Մենդը թագավորը (2-րդ դ.— 2-րդ դ. կեսը մեր թվ. ա.) Հույների իշխանության յենթարկեց բոլոր Հողերը մինչև Պատալիպուտրա քաղաքը: Հույների յերկու հարյուր տարվա տիրապետության ժամանակ յերկրի Հյուախս-արեմայան մասի վրա, Հնդկաստան և թափանցում հոնական կուտուրայի ազդեցությունը, վորը թողել է նկատելի հետքեր:

Սակայն Հույների այդ ազդեցությունը հազիվ թե ուժեղ լիներ: Բուրժուական պատմաբանները շափականցնում են, վերապիելով Հույներին վճռական գեր Հնդկական կուտուրայի զարգացման մեջ: Հելենիզացիան նույնիսկ Հույն-բակտրիական թագավորության մեջ մակերեսային եր: Արդեն 3-րդ դ. նա հելենիստա-

կան աշխարհից բաժանված էր Իրանի արևելյան մասում առաջացած Պարթևական թագավորությամբ: Հունական իշխողները Հնդկաստանում հանդիս եյին գալիս վորպես ոտարերկրյա նվաճողներ, դաժանորեն շահագործելով ժողովրդին և իրենց խորթ՝ Հնդիկ բնակչությանը, վոր անընդհատ ապստամբում էր Հույների դեմ: Հույների պատերազմները Մառլիների պետության դեմ, չնայած Հույների ռազմական արվեստին ու տեխնիկային, վերջացան նրանց համար անհաջող: Գանգեսի Հովտում նրանց յերեք շահզողվեց հաստատուն կերպով ամրանալ:

140 թ. (մեր տարեթ. ա.) Միջին Ասիայից Հնդկաստան են շարժվում սկյութացի— սակերը և տիրելով Բակտրիային, վճռական հարված հասցնում Հույն-բակտրիական թագավորությանը, վորը բաժանվեց մանր իշխանությունների: 1-ին գարի սկզբին (մեր տարեթ. ա.) սկյութացիները թափանցում են Փենջաբ և, ինդոսի հոսանքով դեպի ներքև շարժվելով, տարածվեցին Գուշերաթում մինչև Նարբագա գետի ափերը: Սկյութացիները ամուր կերպով հաստատվեցին նաև Կատյավարա թերակղզու վրա: Սկյութացի— սակերի հետեւց շարժեցին մեծ մասամբ Հնդուսակեր կոչվող ժողովուրդները (շինական պատմիչները նրանց կոչում են յուեյ-շի): Նրանք 85 թ. (մ. տարեթ. ա.) վոլչացրին դեռևս իրենց գոյությունը պահպանող վերջին հոնա-Հնդկական իշխանությունները: Հնդկա-սկյութական թագավոր Կադիլ 1-ինը մոտավորապես 60 թ. (մ. տարեթ. ա.) նվաճում է Կաշմիրը և Հնդկաստանի Հյուսիս-արևմուտքը: Նրա հաջորդ վիմա Կադիլ 2-րդ (1-ին դար. վերջը մեր

տարեթ. ա.) Հնդուսկութական պետության սահմաններն ընդարձակեց հյուսիսում մինչև Ամու-Դարիան և Սիր-Դարիան, Հարավում՝ մինչև Գուջերաթ, արևմուտքում՝ Աֆղանստան և արևելքում՝ մինչև Չիմնա գետը: Այս պետությունն իր բարձրագույն ծաղկմանը հասալ կանիշեկի որոք (1-ին դ. կեսերին մեր տարեթ.):

Ֆեոդալական իշխանների գեմ պայքարելու նպատակով, վորոնք ձգտում էին սկզբացիների տիրապետությունից ազատվել և տարածել բրահմանիզմը, Կանիշկան, նման Ասոկին, ընդունեց բուդդիզմ և հրավիրեց բուդդայական ժամամողով Կաշմիրում: Մակայն սկզբացիներին, վորոնք կանգնած եին ավելի ցածր կուտուրական մակարդակի վրա, քան Հնդկական ժողովուրդները, Հաջողվեց ամրացնել իրենց տիրապետությունը: Նրանց պետությունը շուտով բաժան-բաժան յեղավ մի շաբթ մանր ֆեոդալական իշխանությունների: Հնդկանրապես ամբողջ 1-ին Հազարամյակի (մեր թվարկ.) առաջին կեսը Հնդկաստանն իրենից ներկայացնում է մերթ բարձրացող և մերթ վլունչացող մանր և յերեմն ել խոշոր պետությունների պատկեր: Դրանցից շատերի մասին գիտենք միայն մեզ հասած Հուշարձանների շնորհիվ: Այս ժամանակաշրջանում, բայց յերեղութին, ափարտվում և արտադրության ֆեոդալական յեղանակի ձևավորումը:

4-րդ դ. սկզբին (մեր տարեթ.) մանր իշխաններից մեկը, Մագադհա պետության նախկին վասալներից, Զանդրագուպտա, Գուպտա դինաստիայի հիմնադիրը (320 թ.), գրավեց Մագադհան և խոշոր պետություն ստեղծեց Գանգեսի հովտում: Նրա Հաջորդներ Մամդրա-

գուպտայի և Զանդրագուպտա 2-րդի որով Գուպտաների թագավորությունը տարածվում էր Գուջերաթից մինչև Վինդիա լեռները, ընդգրկում էր վողջ Գանգեսի ավազանը մինչև նրա ակոնքները և մինչև Բրահմապուտրա գետը: Գուպտայի ժամանակաշրջանում բրահմանիզմը սկսում է վերականգնվել՝ բարենորոգված ինդուիզմից) ձեվով: Բրահմանիզմը տիրապետող կրոն էր Գուպտա թագավորության մեջ: Գուպտա դինաստիայի ժամանակաշրջանը հաճախ կոչվում է Գուպտայի «վոսկեգար», Հնդկական գրականության, արվեստի և գիտության ծաղկման զարաշրջան: Այդ ժամանակ մեծ նվաճումներ են ձեռք բերվում մաթեմատիկայի, աստղաբաշխության ասպարիզում, կառուցվում են մի շաբթ Հնդկական պալատներ և տաճարներ: Գուպտայի ժամանակաշրջանը՝ Հնդկաստանի վերելքի շրջանն է, յերբ յերկիրն ազատվել եր սկզբացիներից, պարսիկներից, վորոնք Հնդկաստան եին ներխուժել Սասանյանների որոք, և այլ ոտարերկրյա նվաճողներից:

Մակայն Գուպտայի կայսրների վիթխարի շինարարությունն ու տիրող դասակարգերի պերճանքը ծանրանում եին շահագործվող մասսաների վրա: Տեղի յեն ունենում գյուղացիական անընդհատ ապստամբություններ: Այն ժամանակա որենքների մեջ շարունակ նշվում են գաման պատիժներ «Համառ ապստամբությունների Յամաթ»: Գուպտաների դինաստիան վլունչացավ սպիտակ Յոների (Եփտալիդների) արշավանքով, վորոնք Հնդկաստան ներխուժեցին 5-րդ դ. վերջին կամ 6-րդ դ. սկզբին Հյուսիս-արևմուտքից և տիրեցին Հնդկաստանի Հյուսիսը: Հոները շախաջախվեցին Գուպտայի վասար-

Յասողհարմայի կողմից Կախարի կովում 530թ.
Ագտվելով այս հաղթանակից Յասողհարման տապալից
Գուպտայի դինաստիան և ինքը գարձավ Գուպտայի
թագավորության մահառաջան: Հնդկաստանի հյուսիսէ
Հետագա պատմովթյունը գրեթե անհայտ է:

Հնդկաստանի մյուս պետություններից Հիշատա-
կենք մի քանի հայտնի անուններ: 5-րդ դարում կազմ-
վել եր Վալարհի դինաստիայի թագավորությունը, վոր
գոյություն ունեցավ մինչև 8-րդ դարի յերկրորդ կեսը և
ընդունված եր Գուցերաթը մինչև նարբագա գեալ: Այնու-
հետև Զալուկյան թագավորությունը, վորն իր բարձրա-
գույն շրջանում տիրում եր գրեթե վողջ Դեկանին, Նար-
բագայից մինչև Կոմորին հրվանդանը: Սակայն 630թ.
նա բաժանվում է յերկու թագավորության՝ արևելյան
և արևմտյան Զալուկյան, վորոնք իրենց գոյությունը
պահպանեցին մինչև 12-րդ դարը: 6-րդ դարի վերջե-
րին կամ 7-րդ դ. սկզբին գոյանում է Վիկրամատիյա-
նարշի պետությունը, վորն ընդունվում եր Հնդկաստանի
հյուսիսը և միջին Հնդկաստանը մինչև նարբագա գե-
տը:

Վիկրամատիյա կամ կրծատ «Վիկրամ» Հնդիկ լեզ-
վով նշանակում է «Հզորության արև», մի տիտղոս, վոր
հօմանիշ և յելլոպական թագավորների կրած «մեծ»
տիտղոսին: Այդ ժամանակին վերաբերող բոլոր աղ-
բյուրներում խոսվում է Վիկրամի պալատում տիրող շր-
տեանված շքեղության մասին: Արքայական պալատում
գտնվում եյին հայտնի բանաստեղծներ Կալիդասա
(ըստ այլ տեղեկությունների ապրում եր 4-րդ դ.)

Զանդրագուպտա 2-րդի որոք, վորը նույնպես կրում եր
Վիկրամի տիտղոս) և Գիսատակարպարա, աստղագետ
Վարագամիրա և այլ գիտնականներ: Վիկրամի թագավոր-
ությունը, ինչպես և Գուպտայի դարաշրջանը հայտնի
յե վորպես Հնդկական գրականության և գիտության
«Ուսկեդարը»: Վիկրաման վորձում եր հաշտեցնել
բրահմանիզմը և բուդդիզմը, հենվելով, սակայն, վեր-
ջինիս վրա:

Վիկրամայի պետության մեջ մասսաների շահա-
գործումը անտանելի չափերի յեր հասել: Վիկրամի
մերձակա հաջորդների որով պետությունը դեռևս պահ-
պանում եր իր ուժը: Ալադիտյա Խարշան 634թ. գու-
մարում եր նաև բրահմանները: Սակայն այստեղ չի հաջող-
վում համաձայնություն կայացնել, և շուտով բրահմա-
նիզմը Հնդկաստանում վերջնականապես հաղթում և
բուդդիզմին:

8-րդ և 10-րդ դ. ժամանակամիջոցում բուդդիզմը գրե-
թե ամբողջովին անհետանում է Հնդկաստանից, տարա-
ծելով իր ազգեցությունը Տիբեթում, Մոնղոլիայում և
Չինաստանում: Պետք է յենթագրել, վոր բրահմանիզմի
վերականգնումը կապված եր ֆեոդալական հարաբերու-
թյունների վերջնական հաստատման և Հնդկաստանի
ֆեոդալական տրոհման հետ: Խարշիի վերջին խոշոր
բուդդայական թագավորությունը քայլավեց, ամենայն
հավանականությամբ, մոտավորապես 7-րդ դարի վեր-
ջին:

Հունական արշավանքներից սկսած 3-րդ դ. (մ. տա-
րեթիվ. ա.) մինչև 1-ին հազարամյակի (մեր տարեթ.)

կեսի ժամանակաշրջանը Հնդկաստանում գերակշռում էին խոշոր կենտրոնացած, թեև վոլ հարատև միապետություններ, վորոնք կողմնորոշվում եին գերազանցապես բուդիզմի վրա:

Առեվրաբական ճանապարհների համեմատական անվտանգությունն այս միապետությունների ներսում նպաստում եր առեվրաբական հարաբերությունների, քաղաքների և արհեստի զարգացմանը: Այդ ժամանակ կառուցվեց շրաբաշխական սիստեմի հյուզավորված ցանց: Առեվրաբական կապեր են հաստատվում Զինաստանի, Խնդոնեզիայի և Հնդկաշինի, Իրանի, Միջին Ասիայի, Արաբիայի, Յեգիպտոսի և անգամ Հոռմի հետ: Հնդկաստանի տնտեսական զարգացումը կապված եր կուլտուրական վերելքի — գրականության, արվեստի, յերաժշտության, փիլիսոփայության փայլուն ծաղկման հետ: Այս դարերում կառուցվեցին Հին Հնդկաստանի ամենաշատավոր տաճարները և պալատները, վորոնք ստացան վել են մինչև որս: Մեծ հառաջադիմության ե հասնում Հնդկական գիտությունը, աստղաբաշխությունը, բժշկությունը, մաթեմատիկան:

Սակայն այս վերելքը հիմնված եր Հնդկաստանի աշխատավոր մասսաների՝ գյուղացիության, գյուղական համայնքի ազատ անդամների, ստրուկների և քաղաքային արհեստավորության դաժան շահագործման վրա: Հին Հնդկաստանում դասակարգային պայքարի մասին գրեթե վոլ մի աղբյուր չի պահպանվել: Սակայն դրա հետքերը միանգամայն ջնջել չի հաջողվել անգամ բրահմայական և բուդիզմական տարեգրություններին: Պահպանվել են այդ հետքերը նաև Հնդկական եպոսում:

Հնդկաստանի ձնշված ժողովրդի ապստամբությունների հետևանքով հավանորեն տապալվեց Հունական տիրապետությունը: Դրանով և բացատրվում Հնդկաստանի հեշտ նվաճումը սկսութացիների և այլ բարբարոսական ժողովրդների կողմից, վորոնք կանգնած ելին տոհմացեղային կենցաղի աստիճանի վրա: Տարեգրություններն ու վիպերը հաճախակի հիշատակում են թագավորների մասին, վորոնք ծագում ելին ստորին՝ շուրջականացնելությամբ առաջ ելին քաշվում հեղափոխական շարժման հաղթության հետեւանքով:

Աշխատանքի հասարակական բաժանման աճումն և հարստությունների կուտակումը մարդկանց մի մասի ձեռքում խորացնում ելին Հնդկական հասարակության սոցիալական շերտավորումը (Յ-րդ դ. մեր տարեկթվ.ա.): Գոյություն ունելին վոլ թե չորս կաստաներ, ինչպես սկզբնական շրջանում, այլ առաջացել ելին բազմաթիվ կաստաներ: Հնդկաստանի դասակարգային հասարակությունը, այդ ժամանակ լինելով ֆեոդալական, վերջնականապես ընդունում է զարգացած դասավին — կաստական կազմակերպության բնույթ:

Հնդկաստանի 1-ին հազարամյակի յերկորդ կեսի պատմությունը բազմաթիվ մանր ֆեոդալական պետությունների առաջացման և կործանման պատմությունն է: Այդ ժամանակաշրջանի կոնկրետ պատմությունը քիչ է հայտնի:

712 թ. Հնդկաստանում առաջին անգամ յերեսում են արաբները, վորոնք խուժում են՝ Մուհամմեդ թեն Կասիմի առաջնորդությամբ Սինդ, և նվաճում ինդոս գետի վոզը

Հարավային հոսանքը մինչև Մովթան քաղաքը, Փենջա-
րի Հարավում: Սակայն արարական տիրապետությունը
շուտով ընկնում է: Հնդկաստանի ներքին պատության
այդ վիճակը պահպանվում է մինչև մուսուլմանական
նվաճումը 10-րդ դարում:

IV.

ՀՆԴԿԱՍՏԱՆԸ 10—14-ՐԴ ԴԱՐՅԹՈՒՄ: ՄՈԽՍՈՒՄԱ-
ՆԱԿԱՆ ՆՎԱՃՈՒՄՆԵՐԸ

10-րդ դ. վերջին Հնդկաստանի Հյուսիս-արևմտյան
նահանգները դառնում են զինված Հարձակումների աս-
տվարեղ, Հարեւան Աֆղանստանի Ղազնեվիդների պետու-
թյան թագավորներ—Սերուքթեգինի (977—997 թ. թ.) և
նրա վորդի Մահմուդի (997—1030 թ. թ.) կողմից: Սե-
րուքթեգինի զորքերը մի քանի անգամ ներխուժեցին
Հնդկաստան, հասնելով մինչև Ինդոս գետը: Մահմուդը
(1001—1025 թ. թ.) ձեռնարկեց 15-ից ավելի «Հնդկա-
կան արշավանքներ»: Սկզբում նրա զորքերը ներխու-
ժեցին Ինդոսի հովիտը՝ Փենջաբ, այնուհետև նրանք
նվաճեցին Գոաբ (Զիմնա և Գանգս գետերի միջև ըն-
կած շրջանը) և վերջապես անցնելով Հնդկական անա-
պատր, ավարառությամբ են զբաղվում Գուցերաթ թերա-
կղու վրա: Այս արշավանքները, վորոնք իսկապես կազ-
մակերպված թալաններ ելին, կատարվում ելին «ուրբա-
դան պատերազմի» գորշի տակ, իբր նպատակ ունե-
նալով տարածելու «Ճշմարիտ Հավատը»՝ իսլամը և

պայքարելու «բազմաստվածության» դեմ: Մահմուդի
«Հնդկական արշավանքների» շնորհիվ Հյուսիս-արև-
մտյան Հնդկաստանում հաստատվեց Ղազնեվիդյան
թագավորների իշխանությունը: Փենջաբը միացվեց
Ղազնեվիդյան պետությանը, իսկ Գուցերաթ թերակըդ-
գու տեղական ուաշան իրեն ճանաչեց Մահմուդի վաս-
տաւ:

Ղազնեվիդյան պետության տերիտորիան խիստ
կրծատվում է Մահմուդի հաջողների որոք, յերբ թուրք-
ուելչուկները գրավում են միջին ասիական և իրանա-
կան յերկրները (1037—1045): Այս հանգամանքը ստի-
պում է Ղազնեվիդյան թագավորներին հատուկ ուշա-
դիրություն դարձնել իրենց տիրապետության ամրաց-
մանը՝ Հնդկաստանում:

12-րդ դ. կեսերին Ղազնեվիդները գուրս են քշվում
Աֆղանստանից՝ տեղական ափղանական ծագում ունե-
ցող ուազմասեր զինաստիայի՝ Ղուրիդների ձեռքով: 1161-ին Ղազնի քաղաքը (Աֆղանստանում) անցնում է
Ղուրիդների ձեռքը, իսկ Ղազնեվիդները, կենտրոնանա-
լով Հնդկաստանում, Լահորը դարձնում են իրենց մայ-
րաքաղաքը: 1186 թ. դադարում է Ղազնեվիդների տի-
րապետությունը նաև Հնդկաստանում Ղուրիդների հար-
վածներից: Մուհամմեդ Ղուրին մի շարք արշավանքնե-
րով 1176 թ. նվաճում է Սինդը և Մուլթանը, իսկ 1186
թ. Լահորը: 1192 թ. Մուհամմեդը վճռական հարված
հասցրեց ուաշպատների միացյալ ուժերին Թանեսիլա-
րում, վորտեղ ընդեմ մահմեդական նվաճողի գուրս ե-
լին յեկել աշեմիրյան ուաշա Պրիտի Հրամանատարու-

թյան ներքո 150 հնդկական ֆեռդալներ իրենց զորքերով: Մուհամմեդի զորքերի կողմից հնդիկ ֆեռդալներին հասցրած այս պարտությունից հետո համեմատաբար հեշտությամբ նվաճվեցին Հյուսիսային Հնդկաստանի մնացած նահանգները:

Հնդկաստանի այդքան դյուրիին նվաճումը մահմեդականների կողմից պետք է բացատրել Հետեւալ հանգամանքներով. 1) Հնդկաստանը մասնաւիլած եր բազմաթիվ մեծ ու փոքր ֆեռդալական իշխանությունների, վորոնք չելին ներկայացնում միասնական կուռույժ ոտար նվաճողներին դիմագրելու համար, 2) գյուղացիության և ընդհանրապես աշխատավորության դրությունը մահմեդական նվաճողների որով վորոշ շափով թեթեացել եր, վորովհետև ծանր հարկերով կեղեքող ֆեռդալների մի մասը վոչչացվել եր, իսկ մյուս մասը վտարվել եր իր կալվածքներից՝ շնորհիվ մահմեդական նվաճողների քաղաքականության, 3) հաստատվում են ամուսի առևտրական կապեր Արևելքի մահմեդական յերկրների հետ, վորը շահավետ եր ու ցանկալի հնդիկ վաճառականների համար:

Հյուսիսային Հնդկաստանի մարզերը մինչև Գանգեսի ակունքները, վոր նվաճել ելին Մուհամմեդ Դուրիին և նրա զորացրամանատարները, կազմում ելին ընդարձակ մահմեդական պետություն, վորի կենտրոնն եր Դելի քաղաքը: Մուհամմեդը այդ քաղաքի վոխարքան նշանակեց իր ստրուկ Կուտբ-Եղ-Դին Ալբեկին: Սա իր տիրոջ մահից հետո (1206 թ.), Հայտարարելով իրեն սուլթան, հիմք դրեց առաջին մահմեդական դինաստիային, վոր տիրում եր բացառապես Հնդկաստանում:

Իր հիմնադրի ստրկական ծագման պատճառով, այս առաջին հնդկական-մահմեդական դինաստիան կոչվում եր Մամլութերի դինաստիա (այսինքն ստրուկների): Նա Հնդկաստանում տիրապետեց 1206 թ. մինչեւ 1290 թ.:

Մահմեդական դեսպոտիայի գոյացումով տեղի ունեցան ազրարային մեծ փոփոխություններ: Առաջ բազմաթիվ հնդիկ ֆեռդալների (ռաջա-իշխան, տիակուրարոն, ռաջպատ-ասպետ) հողատիրությունը ժառանգական եր և հողերն ել մեծ չելին: Մահմեդականները մասամբ վոչչացրին հնդիկ ֆեռդալներին, մասամբ եւ հողատիրերին դարձրին հողի վարձակալները: Բացի այդ, մահմեդական թագավորները խոշորացրին ֆեռդալական հողերը և խորտակեցին նախկին ֆեռդալական հիերարխիան: Խոշոր ֆեռդալական կալվածքների աճման հետեւալներով, ի հաշիվ մասների, հնդիկ գյուղացիության վիճակը ժամանակավորապես փոքր ինչ բարելավվեց:

Դելիի Մամլուքների դինաստիայի իշխանությունն առաջին հերթին հիմնված եր մահմեդական ֆեռդալների վրա, վորոնք կազմում ելին (վարձկաններից և ստրուկներից կազմված գվարդիայից զատ) բանակի, նույնպես և վարչության ու դեսպոտիայի հիմնական կազրերը: Ռազմական ծառայությունն ապահովելու համար սովորական բաշխում ելին հողաբաժններ—իգդա: Որինակ՝ մամլուքների դինաստիայի խոշորացույն միավետ իլթութմբը (1210—1236 թ. թ.) միայն Դուռը շրջանում բաժանեց 200 հազար իգդա: Համաձայն գոյություն ունեցող որենքների՝ յուրաքանչյուր իգդա վերաբարձվում եր պետական ընդհանուր հողային ֆոն-

դին, յերբ մահվան, ծանր վերքերի կամ անբուժելի հիվանդության պատճառով իգդայի տերը զրկվում եր զինվորական ծառայություն վարելու հնարավորությունից: Այսպիսի դեպքում հաշմանդամին կամ անշափահան վորբ յերեխաներին և այրիին թոշակ եր արվում պետական գանձարանից: Այս հողատիրական սիստեմը անվերջ պայքար եր առաջացնում ֆեոդալների և կենտրոնական կառավարության միջև: Սրա հետևանքն յեղավայր, վոր Հնդկաստանը նորից յենթարկվեց ֆեոդալական մասնատման: Իգդայի տերերը — իգդադարները — ձգուում ելին ժամանակավոր հողաբաժինները դարձնել իրենց ժառանգական կալվածներ, միաժամանակ խոսափելով զինվորական ծառայությունից: Քանի կենտրոնական իշխանությունն ուժեղ եր և նրա դեմք բացարձակորեն պայքարել հնարավոր չեր, իգդադարները աշխատում ելին պահպանել իրենց հողերը վորպես վակուֆներ, այսինքն մահմեդական յեկեղեցու կալվածներ, վոր ոտարելի շեյին և վորոնց տերերը զինվորական ծառայությունից ազատ ելին: Այդ նպատակով նրանք մահմեդական հոգևորականության հետ համապատասխան գործարք ելին կնքում, իրենց հողերի յեկամուտների վորոշ մասը նրանց զիջելով, և ապա այդ հողերը հայտարարում ելին վակուֆ: Այսպիսով նրանք շարունակում ելին ոգովել իրենց իգդաներից և նույնիսկ կտակում ժառանգներին, պայմանավորված յեկամտի մասը տալով մահմեդական յեկեղեցուն:

Մակայն ֆեոդալների այդ պայքարը կենտրոնական իշխանության դեմ՝ Մամլուքների զինաստիրի որով նոր եր սկսվում և նրա վերջնական արդյունքնե-

րը ի հայտ յեկան միայն մահմեդական յերրորդ պահաստիայի ժամանակ: Մահմեդական յերկրորդ պահաստիայի; թուրք խալջիների որով (1290—1320 թ. թ.) մահմեդական զինաստիան Հնդկաստանում ապրում եր իր ժաղկման ժամանակաշրջանը: Այս դինաստիայի ամենաաշքի ընկնող միապետի, Ալա-օդ-Դինի որով (1296—1316 թ. թ.) կազմակերպվեց կանոնավոր հարկային ապարատ և ստեղծվեց խոշոր, մարտունակարգական վարչական կառավագործ մշտական պատերազմական վտանգի:

Խալջիների զինաստիային փոխարինեց յերրորդ մահմեդական զինաստիան — Տողլուկիդները (1320—1399 թ. թ.), յերբ Հնդկաստանում կենտրոնացած մահմեդական իշխանությունը ապրում եր իր անկման վերջին որերը: Իգդադարների պայքարը կենտրոնական պետության դեմ պսակվում և հաղթությամբ: Ֆեոդալների հաղթանակը կենտրոնական կառավարության կողմից ճանաչվեց սուլթան Ֆիրուզի (1351—1388 թ. թ.) որով, յերբ իգդան հայտարարվեց վոչ թե ժամանակավոր, այլ ժառանգական հողատիրություն:

14-րդ դ. վերջին մահմեդական պետությունը բաժանվեց ինքնուրույն ֆեոդալական տերիտորիաների, առաջացան մի շարք զինաստիաներ: Յուրաքանչյուր մարզում ֆեոդալները հաճախակի դուրս ելին գտնիս տեղական թագավորների դեմ, իսկ առանձին մարզերի միջև շարունակ տեղի ունեցին ֆեոդալական կոփիներ: Հնդկաստանի քաղաքական քարտեզը այս ժամանակին երկայացնում եր բազմաթիվ ֆեոդալական մասը պե-

տություններ, վորոնց թիվը 100-ից անցնում էր: Հընդկաստանի այս ֆեոդալական ժամանակումով՝ 14-րդ դ. վերջին և 15-րդ դ. սկզբին ուժեղացավ գյուղացիության շահագործումը, թուլացավ առևտուրը, ընկավապրանքափոխանակությունն առանձին շրջանների միշեվ և զարկ ստացավ առանձին շրջանների տնտեսական մեկուսացումը:

Այս քաղաքական ու տնտեսական պայմանները շափականց նպաստավոր եյին Լենկթեմուրի համար, վորը արշավեց (1398—1399 թ. թ.) Հյուսիսային Հնդկաստան, ավարի, ավերածության և բնակչության մասսայական կոտորածի յենթարկելով ամբողջ յերկիրը:

V.

ՀԵԴԿԱՍՏԱՆԻ 15-ՐԴ Դ. ՅԵՎՐՈՊԱՅԻՆԵՐԻ ՆԵՐԹԱ- ՓԱՆՑՄԱՆ ՍԿԻՖԲԸ

Լենկթեմուրի կարճատե, սակայն ամայացնող ներխուժումը սաստկացրեց Հյուսիսային Հնդկաստանի ֆեոդալական մասնատվածությունը: Թագավորի իշխանությունը (Դելիում) խարուսիկ բնույթուններ և այստեղ կառավարող դինաստիաները (Սախիները 1414—51 և Լոդի 1451—1520) տիրապետում եյին լոկ Փենչաբում և մայրաքաղաքի շրջանում: Թագավորներն իրար ճանաչեց տապալվում եյին ֆեոդալական գավագիր իմրակների կողմից, իսկ սահմանները բաց եյին ազդանցիների և ուղապուտների կողոպահը հարձակումների առաջ: Զաւշված իրար դեմ մշտապես պատերազմող բազմաթիվ մանր իշխանությունները, կազմվեցին խո-

շոր ինքնուրուցին պետություններ, վորոնք իրենց գոյությունը պահպահին Բենգալիայում մինչև 1575 թ. Մալվայում 1564 թ. և Գուջերաթում մինչև 1572 թ. Հնդկաստանի առևտրական և կուտարական կյանքի կենտրոնը փոխակրրվում է այդ ժամանակաշրջանում Հնդկաստանի հարավը: Այստեղ կազմվում է Հզոր պետություն (1347—1518), վորը հետագայում բաժանվում է Հինգ ինքնուրուցն սուլթանությունների՝ Բիջապուր, Գոլկոնդա, Ահմեդնագար, Բիհար և Կանդիլ: Դեկանի մահմեդական այս պետությունների բարձրացմանը նպաստում է Հնդկաստանի ծովալին առևտրի աճումը: Յերկրի Հյուսիսային մասը, Աֆղանստանի միջոցով Սև և Միջերկրական ծովերի ավագանների հետ միացնող քարավանային առևիտուրը 15-րդ դ., ընդհակառակը, զիմում է անկման: Այդ անկման պատճառներն եյին Հյուսիսային Հնդկաստանում է Փոքր Ասիայում տիրող ֆեոդալական անարխիան, Լենկթեմուրի արշավանքները, թուրք-սոմանցիների նվաճումները և նրանց կատաղի պայքարը Վենետիկի և Ջենովայի հետ: Ամենից հարավում, Կրիշնա գետից այն կողմը, պահպանվել եր Վիշիանագարայի միակ հնդիկ խոշոր պետությունը (1326—1565 թ., վորն ամենից յերկար պահպանեց իր դիրքերը մահմեդական հարձակումների դեմ, շնորհիվ փորթուգալացիների ուղարկան աշակցության, վորոնք 1488 թ.-ից հետո Հիմնվել եյին Հնդկաստանի Մալաբարյան ափում:

1498 թ. Վասկո-Դե-Գամայի փորթուգալական նավատորմը հասավ Կալեկուտ նավահանգիստը և առաջինը բաց արեց Յելլուպալից գեպի Հնդկաստան տանող ծովալին ճանապարհը՝ Աֆրիկայի շուրջը: Յեղիպ-

տական սուլթանի և նրա հնդիկ ղաշնակիցների միացյակ նավատորմի վրա տարած հաղթանակները 1507 թ.-ին և Գոաի (1510 թ.), Մալակայի (1511 թ.) և Հորմուզի 1515 թ.) գրավումը ագմիրալ Ալբոկերի կողմից, փորթուգալացիներին տվին առաջնակարգ նավահանգիստ — ամրոցներ և ապահովեցին վորչ 16-րդ դ. ընթացքում նրանց անվիճելի տիրապետությունը՝ Հնդկաստանը վողողող ծովերի վրա: 1537 թ. սուլթան Սուկեյմանի կողմից ուղարկված տաճկական նավատորմը ընդում փորթուգալացիների, նույնպես ջախչակից: Պետական մաշտարով ծովահենությունը փորթուգալացիները լրացնում ելին առանձին կողոպտիչ արշավանքներով՝ Հնդկաստանի խորքը:

Մակայն Հնդկաստանի ֆեոդալական պետությունների դիմադրությունն այն ժամանակ դեռևս ուժեղ էր, և փորթուգալացիները, վորոնք մեծ բանակ չունեցին (մոտ 10.000 հոգի), կարողացել ելին գրավել միայն փոքրիկ տերիտորիա Հնդկական մայրաքաղաք Գոաի մոտ: Մուտքը դեպի Շովաթի ծոցը պահում ելին փորթուգալական Դիու և Դաման ամրոցները, իսկ Հարավում ել գրավված էր Յելլոն կղզին: Յեկոպայի հետ փորթուգալական առևտուրը թագավորական մենաշընորհ էր և համեմատաբար անշշան չափ ուներ: 1497—1612 թվերի ընթացքում Բարեհուսի Հրվանդանը պտըտած 806 նավերից (300—600 տոնն) միայն 425 հետվերագարձան: Իրենց ձեռքում պահելով Հնդկական պղպեղի, ինդիգոյի, բամբակե գործվածքների, ինդոնեզիայի համեմների, Զինաստանի մետաքսի ու հախճապակիի առևտուրի մենաշնորհը, փորթուգալացիները

կատաղորեն վոշնացնում ելին մրցակից մուսուլման վաճառականներին և նրանց նավերը: Վերջինները նույն ապրանքներն ելին հասցնում Պարսից ծոցի ափերը և Յեկոպայոս, վորտեղից նրանք ծանոթ ճանապարհներով ուղարկում ելին դեպի Յեկոպա: Փորթուգալական ծովահենությունը ստիպում է մահմեդական վաճառականներին դիմել ցամաքային առևտրին:

Դրան հաջորդող հյուսիսային Հնդկաստանի միավորումը Մեծ Մողոլների ֆեոդալական կայսրության իշխանության ներքո (1526—1707 թ. թ.) նույնպես նպաստում է առևտուրին: 16-րդ դ. ընթացքում նորից մեծ նշանակություն և ստանում քարավանային առևտուրը հրնեկաստանից Ղանգահարի վրայով իրան և այնուհետեւ դեպի Արևմտաք: Այդ ճանապարհներով տարեկան անցնում ելին 14.000 բեռնված ուղտեր: Միայն Հորմուզի գրավումը (1622 թ.) միացյալ անգլո-պարսկական ուժերով և փորթուգալացիների լիակատար դուրս մըլվելը Հոլանդացիների և անգլիացիների կողմից 17-րդ դարի ընթացքում՝ վերջնական գերակշռություն են տալիս ավելի եժան, անվտանգ և արագ ծովային առևտուրին Յեկոպայի հետ: Փոքրիկ ֆեոդալական հետամնաց Փորթուգալիան, վորը 1580 թ.-ից մինչև 1640 թ.-ը իսպանական տիրապետության տակ էր գտնվում, չեր կարող պահպանել իր հեղեմոնիան անգլո-Հոլանդական ճնշման ներքո և անցնում է յԵրորդական պետությունների շարքը: Դրանից ավելի առաջ Վիշնագարի չախչամումը 1564 թ.-ին Դեկանի մահմեդական պետությունների դաշնակցության կողմից զրկեց փորթուգալացիներին միակ լուրջ դաշնակցից բուն Հնդկաստանում:

ՇԱՆՈԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1) Վեդաներ (Veda— իմացություն, գիտություն) Հին-Հնդկական լիրիկայի և կրոնական սիստեմի (վեդիզմ) ժողովածուներ են իրենց մեկնաբանություններով: Վեդաների սկիզբը համարվում է 2-րդ հազարամյակը (մեր առաքելիք. առաջ): Այդ ժողովածուները շատ են, բայց վեդա անունով սովորաբար ճանաչվում են չափածո Հիմների, աղոթքների և նզովքների շրու ժողովածուներ. 1) Ռիդ-Վեդա («Հիմների Վեդա»)— ամենահինն և ամենակարևորը, բաղկացած է 1028 չափածո Հիմներից, վորոնք միացած են 10 մանգալների կամ գրքերի մեջ: Ռիդ-Վեդայի Հիմներն ու աղոթքները ուղղված են Հին-Հնդկական պանթեոնի կարևորագույն ներկայացուցիչներին՝ ամպոպի և պատերազմի աստծուն— Ինդրային, կրակի աստծուն— Ագնիին, յերկնիքի աստծուն— Վարունային, արեքի— Սուրային, լուսնի— Սոմային, քամիների— Մարութին և այլն: Յերգողները աստվածներից խնդրում են ոգնություն իրենց ժողովրդին, խնդրում են պարգևել կովեր, արոտատեղիներ, վորդիներ և այլն:

2) Սամա-Վեդա («Կայծակների Վեդա»), Հիմնականում Ռիդ-Վեդայի բանաստեղծությունների կրկնությունն են, զետեղված այլ դասավորությամբ:

3) Յաջուր-Վեդա («Ջուրաբերությունների Վեդա»)— զոհաբե-

րության աղոթքների ժողովածու, ինչպես և ծիսակատարությունների ցուցմունքներ: Այս յերկուսը այնքան ել ինքնուրուցն չեն և ավելի ուշ են կազմվել: 4) Ատիարվա-Վեդա («Նզովքների Վեդա»)— աղոտքների ժողովածու ընդգեմ հիվանդությունների, շար վոգիների, ընդամենը 20 գրքից: Բոլոր այս վեդաները պահպանվել են ժողովրդի մեջ, անցնելով բերնե-բերան:

2) Մախարխարատա և Մամայանա. Այս յերկու վեպերի ստեղծագործումը Հնդկական տրադիցիան վերագրում է ամենախոր հնությանը՝ մեր տարբեթվարկությունից հազարավոր տարիներ առաջ: Յելլոպական հնագիտությունն այդ վեպերի հիմնական մասերի ստեղծումը վերաբրում է 1-ին հազարամյակին (մեր տարբեթվ. ա.): Մամայանայի և մանավանդ Մախարխարատայի մեջ հետագայում մտցվել են բազմաթիվ հավելումներ և նրանց վերջնական խմբագրությունը կատարվել է վոլ ուշ 4-րդ դ. (մեր տարբեթվ. առաջ): Մախարխարատայի ստեղծումը Հնդկական ավանդությունը վերաբրում է առասպելական բանաստեղծ Վյասային: Սակայն այդ վեպի վիթխարի ծավալը (200 հազար տուն) և նրա կազմությունն հիմք են տալիս կարծելու, վոր նա ժողովրդական մեծ թրվով հեղինակների ստեղծագործության արդյունքն եւ Մախարխարատան շի հանդիսանում մի սյունելի յենթակա վեպ, սա յուրատեսակ բանաստեղծական ցիկլ եւ, կազմված մի շարք վեպերից, պատմվածքներից, կրոնական, փիլիսոփայական, իրավաբանական և այլ շարադրություններից: Յերկու թագավորական տների— կառավագների և պանդավների— պայքարի պատմու-

թյան և վեպի մեջ պահպանվում է միայն զուտ արտաքին կապ: Չնայած բազմաթիվ հաղողությունների ֆանտաստիկ բնույթին, Մախարխարատան Հնդկաստանում համարվել է իտիխասա, այսինքն պատմություն, և վայելում է շատ մեծ հեղինակություն:

Վեպի բովանդակության հիմնական մոմենտները հանդում են հետեւյալին. Պանդու թագավորը վախճանվում է, թողնելով յերիտասարդ վորդիներ՝ Յուլիշիշտիրային, Արշունին, Բիսմարյին և այլն, վորոնք դաստիրակվում են նրա յեզրոր՝ Դիրիտարաշտրայի պալատում: Դիրիտարաշտրան լիակատար կախման մեջ է իր վորդիներից, հատկապես ավագ վորդոց՝ Դուրյադիսանայից: Վերջինս ուզում է ազատվել Պոնդուի ժառանգներից, սակայն նրանք փրկվում են, և վորոշ ժամանակից հետո տեղի յեւ ունենում թագավորության բաժանումը: Հետագայում Յուլիշիշտիրան Դուրյադիսանային տանով է տալիս վոչ միայն իր թագավորությունը, այլև յեղբայրների ընդհանուր կընողը՝ Դրառապադիխն: Մի շարք ծանր փորձություններից հետո Պանդուի ժառանգները պայքարի մեջ են մտնում Դուրյադիսանայի հետ, վորի մեջ ներգրավվում են վող Հնդկաստանը: Դրա հետևանքով սպանվում են միլիոնավոր զինվորներ: Պանդուի վորդիները հաղթանակում են, սակայն շգոհանալով ձեռք բերված արդյունքով, ուղեվորվում են մեռնելու Հիմալայան լեռներում:

Այս հիմնական սյուժեի մեջ մտցված են մեծ թվով լեգենդներ և առասպեկներ, ստանալով բարձր գեղարվեստական մշակում, ինչպես նաև իրենց ուժով

և գեղարվեստականությամբ զարմանալի պատմվածքներ և պոեմներ: Այդ ներմուծված վեպերից մեծ ժողովրդականություն են ստացել «Նալ և Դամայանթի»-ն և «Սալիմորի»-ն:

«Մամյանա» վեպը հանդիսանում է մի հեղինակի՝ բանաստեղծ Վալմիկիի ստեղծագործություն: Չնայած չետագա հավելումներին, Մամյանան դգալիորեն գերազանցում է Մախարխարատային իր շարադրության միաձուլությամբ: «Մամյանա» իր հիմնական մասում պատմում է գլխավորապես Հնդկաստանի առասպեկտական հերոս, Այոդհի թագավոր, Դաշարատխայի վորդի Ռամայի կյանքն ու սիրագործությունները: Գեռապատանի հասակում Ռաման կատարում է մի շարք քաշագործություններ: Հաղթելով նետաձգության մրցության մեջ իր բազմաթիվ մրցակիցներին, նա կընության և առնում Սիտա թագուհուն: Դաշարատխայի թագավորը վճռում է իր կենդանության ժամանակ թագավորությունը հանձնել Ռամային, սակայն պալատական զավերի հետևանքով Ռաման ստիպված է զիմելու ոտարության: Այնտեղ Թագանա դեվը, Յելլոնի թագավորը, Հափշտակում և նրանից կնոջը՝ Սիտային, սակայն պալատական զավերի հետևանքով Ռաման դաշինք է կնքում կապիկների թագավոր Սուզրիվայի հետ և նրա խորհրդական խանուման կապիկի ողնությամբ իմանում է իր կնոջ ուր լինելը: Սիտային ազատելու համար Սուզրիվան ողնության և հասնում Ռամային, տալով նրան կապիկների հսկայական մի բանակ, վորը Ռամայի հրամանատարության ներքո ուղեկորվում է գեպի Յելլոն: Յերկարատև պատերազմներից հետո Ռաման

սպանում և Ռավանային, ազատում և Սիտային և վերադառնում Այոդհյու: Ամբողջ «Ռամայանայի» մեջ Ռաման հանդես ե գալիս վորպես իդեալական փորդի, յեղբայր, ամուսին և պարտքի գաղափարի կրողը:

Հնդկաստանի ժողովրդական եպոսը հին հնդկական ֆեռալիզմի բացառիկ փայլուն նկարագրին և տալիս: Վեպերի հետագա մշակման մեջ մեծ մասնակցություն են ունեցել բրահմանները, վորոնք մեծ շանքեր են գործադրել իրենց կաստան մեծարելու համար: Ռամայանայի և Մախարբիատարայի թարգմանություններն ու վերաբերագրությունները գոյություն ունեն հնդկական բոլոր լեզուներով: Ամբողջ յերկու հազար տարուց ավելի նրանք աղբյուր են հանդիսացել և նյութ են մատակարարել Հնդկական գրականության հետագա զարգացմանը:

3) Կաստաները. Հնդկաստանի հասարակական կառուցվածքի հատկանշական և սպեցիֆիկ կողմերից մեկը կաստայական սիստեմն է: «Կաստա» տերմինը ծագում է իսպանո-փորթուգալական casta բառից, վոր նշանակում է —«սերունդ», «տոհմ», «ցեղ», և նկատի ունի բնակչության տարբեր խմբերի հատուկ առանձնացվածությունը: Կաստայի գիտական բնորոշումը, հակառակ բուգրուական տեսակետների, յենում և դասակարգային հասարակության առկայությունից: Կաստաները Հնդկաստանում առաջացան տոհմային կարգերի քայլայումից հետո ստրկատիրական և ֆեռդալական հասարակության զարգացման պրոցեսում: Կաստան —ժառանգական, ինքնամփոփ պրոֆեսիոնալ և դասային մի խումբ է: Հիմնականում կային 4 կաստա-

ներ. քրմերը (բրահմիններ), ուազմիկ-ազնվականները (կշատրիններ), վաճառականները և հողագործները (վայշյաններ) և ծառները, ստրուկները (շուղրաններ): Կաստայական տարբերությունները հավերժացված ենին հնդկական կրոնի կողմից: Ամուսնությունը յերկու տարբեր կաստաների միջև արգելված էր: Կաստայական տարբերությունները Հնդկաստանի աշխատավորական մասսաների մեծագույն իրավագրկության և ձնշվածության արտահայտությունն են:

4) Խնդրություն: — Ժամանակակից Հնդկաստանի բնակչության գերակշռող մասի կրոնն է, բրահմայականության ձևափոխված տեսակը: Խնդրությունը առաջացել է մեր թվ. 5-րդ դարից վոչ շուտ և արտացոլում է գասակարգային պալքարը Հնդկաստանում՝ խոշոր ֆեռալական պետությունների ձևավորման շրջանում: Խոշոր հողատեր-ֆեռալների իշխանության ուժեղացումը և ուսարերկրյա նվաճողների դեմ պալքարը բերում են այն բանին, վոր բուգրիզմը, վորի վրա հիմնվում ենին վաղ-ֆեռալական շրջանի պետությունների իշխողները, կորցնում են նախկին նշանակությունը և նորից վերածնվում է բրահմանիզմը, սակայն արդեն խնդրությունի ձևով: Խնդրությունի մեջ առաջին տեղն է զըրավում գերագույն տիրոջ՝ Բրահմայի մասին ուսմունքը, ըստ վորի Բրահման ձևաչունի, ապրում է հավիտյան, անսահման և ու կատարյալ: Այդ ուսմունքի մեջ յերեսում է ձգտումն ինդուիզմին հաղորդելու միաստվածյան կրոնի գծերը: Բրահմայի մասին ուսմունքի հետ ձուլվում է Տրիմուգրի մասին ուսմունքը, այսինքն աստվածների յերրորդության դավանությունը,

ՉԻԱՍԱՆ

1. ՅԵՐԿԻՐԸ ՅԵՎ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ

այն եւ Բրահմայի, իբրև գերազույն աստվածության, Վիշնուի— ամեն ինչ պաշտպանող, ամենազոր և ամենագետ աստծու և Սիվայի—կործանող, վրեժինդիր, բայց և բարերար, մահաբեր, վերածնություն և նոր գոյություն բերող աստծու: Տրիմուրտիի մասին ուսմունքի մեջ պարզ կերպով արտահայտվում է ինդուիզմի կողմից ձգտումն առանձին տեղական աստվածներին միացնել Բրահմայի անձի մեջ:

Ինդուիզմը ճանաչում է վո՛չ միայն նախկին բրահմայական, այլ և մի շարք ոտարերկրյա աստվածներ, այդպիսին է Զահաննաթը (աշխարհիս տերը), վորը Համարվում է Վիշնուի մարմնացումը:

Աստվածների թիվը Հնդկաստանում չափազանց մեծ է: Այդ աստվածների յերկրպագությանը միանում են նաև սրբազն կենդանիների՝ կովերի, կապիկների, ոձերի և այլնի պաշտամունքը: Յուրաքանչյուր գյուղ ունի իր առանձին սիրված աստվածները, դեվեր-Հովանավորներ և սրբազն կենդանիներ: Այսպիսով ինդուիզմը մնում է բազմաստվածության կրոն: Հնդկաստանի կրոնների բնորոշ գծերից մեկն ել բազմատեսակ ծեսերն են, վորոնք կատարվում են վո՛չ միայն տաճարներում, այլև յուրաքանչյուր ընտանիքում հատուկ քրոների կողմից: Բնտանիքներում կան նաև կրոնի հատուկ ուսուցիչներ, այսպես կոչված՝ գրւու: Գոյություն ունեն բազմաթիվ կրոնական տոներ, տարածված են ուխտագնացությունը դեպի սրբազն վայրերը, որինակ Բենարես:

Զինաստանն աշխարհիս ամենամեծ և միաժամանակ ամենահին պետություններից է: Նա հանդիսանում է մարդկային քաղաքակրթության հնագույն ուշախներից մեկը, վորը մինչև որս պահել եր գոյությունը: Նրա տարածությունը մոտ 10 քառ. միլ. կիլոմետր է, վորը հավասար է ԽՍՀՄ-ի մոտ կիսին, ԱՄՆ-ից քիչ մեծ, իսկ Գերմանիայից մեծ է մոտ 20 անգամ: Բնակչությունը մոտավոր տվյալներով հավասար է 475 միլիոնի, վորը կազմում է վորշ յերկրագնդի բնակչության մոտ ¼-ը:

Զինաստանի հիմնական մասը դա Արևելյան Զինաստանն է կամ բուն Զինաստանը, վորի տարածությունն է մոտ 4 միլ. կլմ. քառ. 430 միլիոն բնակչությամբ: Մնացած մասերը կազմում են Զինաստանի տիրապետությունները— Մանջուրիա, Ներքին Մոնղոլիա, Սինցյան և Տիբետ կիսանկախ պետությունը:

Մինչև 20-րդ դարի սկիզբը նա յեղել է արեվելյան միապետություն, սակայն սկսած 19-րդ դարից փաստորեն վերածվել է կիսապաղութիւ, վորտեղ տիրապետության համար իրար դեմ մրցում են խոշոր կապիտալիստական պետությունները: Վերջին տարիներին Զինաստանի դեմ պատերազմ է մղում նրա անմիջական Հարեւան յապոնական գիշատիչ իմպերիալիզմը, սակայն Հինական ժողովրդի կողմից հանդի-

պում և խիստ դիմագրության, վորը Հերոսաբարք պայքարում է իր անկախության համար:

Զինաստանի սահմաններն են — արևելքից՝ Խաղաղ ովկիանոսը, արեվմուտքից՝ Պամիրի ստորոտները, ամենահյուսախին սահմանը Ամուր գետը, վորը բաժանում է Մանջուրիան ԽՍՀՄ-ից, Հարավային ծայրում՝ Հայնան կղզին:

Զինաստանի մեծ մասը զուտ ցամաքային յերկիր է: Ամբողջ Զինաստանի մոտ կեսը ընկած է ծովի մակերևույթից ավելի քան 1000 կլմ. բարձրության վրա: Պամիրից մինչև Զժիլիի ծայրը (արևմուտքից-արևելք) 5700 կլմ. է Զինաստանի արեվմուտքը կազմված է Հսկայական լեռնաստաններից և Հարթավայրերից, վորոնք ովկիանոսից անջատված են լեռնաշղթաներով: Այստեղ տարածվում է յերկրագնդի ամենամեծ անապատներից մեկը Գոբի կամ Շամո անապատը: ԽՍՀՄ-ի սահմանի վրա ընկած են Պամիրի, Տյան-Շան և Ալտայան բարձր լեռները: Սակայն Տյան-Շանի և Ալտայան լեռների միջև գոյություն ունեն Հաղորդակցության համար Հարմար լեռնանցքներ: Հարավ-արեվմուտքում բարձրանում է Վիթխարի Տիբեթի բարձրավանդակը, վոր սահմանպից և բրիտանական Հնդկաստանին, ուղիղ սահմանի վրա ընկած են աշխարհիս ամենաբարձր Հիմալայան լեռները և Կարսկորումը: Այսպիսով Զինաստանի ցամաքային սահմանների մեծ մասը քիչ է նպաստավոր հաղորդակցության համար:

Զինաստանի ծովային սահմանները կազմում են մոտ 7000 կլմ.: Խաղաղ ովկիանոսը Զինաստանի ափերի մոտ

կազմում է հետեւալ ծովերը — Հարավային-Զինական, Արեկլան-Զինական և Դեղին: Շանդունի և Լյառդուն թիւրակղզիները Դեղին ծովում իրարից բաժանում են Զժիլիի և Լաոդունի ծոցերը: Ծովափերը հանդիսանում են Զինաստանի արտաքին հարաբերությունների գլխավոր գոները և միաժամանակ բազա՝ ոտարերկրյա կապիտալի կողմից Զինաստանը նվաճելու գործում: Առանձնապես կարենոր նշանակություն ունեն գլխավոր գետերի գետաբերանները, վորոնց միջոցով ծովային տրանսպորտը թափանցում է յերկրի խորքը:

Արեկլան Զինաստանը (կամ բոլոր Զինաստանը) լեռնոտ յերկիր է, վորը կենտրոնական Ասիայի սարահարթերից աստիճանաբար իշնում է դեպի ծովը: Գերակշռում են միջին բարձրության լեռները (մինչև 2000—2500 մետր): Ծովի մոտ նրանք փոխվում են բլրացատ Հարթավայրերիվ և ցածրունակությունուներիվ: Լեռներն այստեղ այնպիսի կղզիացնող պատճեններ չեն կազմում ինչպես Արևմտյան Զինաստանում:

Զինաստանի յերեք մեծ գետերը — Հուանիս (Դեղին գետ), Յանցզի (Մապույտ) և Միցզան անցնում են լեռների միջով: Այս գետերը, դրանցից Հատկապես Յանցզի գետը, Հսկայական նշանակություն ունեն Զինաստանի տնտեսական կյանքում, վորպես հաղորդակցության միջոց, վոռոգման և բերքատվության աղբյուր: Այս գետերի ստորին հոսանքում գետեղված են Հարթավայրեր, վորոնք ծածկված են պտղատու հողի շերտով:

Աշխարհապետական տեսակետից Զինաստանը՝ բաժանում են յերեք շրջանների, վորոնցից յուրաքանչյուր

ըր հարում և վերոհիշյալ յերեք գետերի ավազաններից մեկին. Հյուսիսային Զինաստանը հիմնականում համապատասխանում է Հուանխեյի ավազանին, Միջին Զինաստանը—Յանցզիի ավազանին, Հարավային Զինաստանը—Սիցյանի ավազանին:

Հյուսիսային Զինաստանը իր բնությամբ խիստ կերպով տարբերվում է մյուս յերկու շրջաններից: Հյուսիսային Զինաստանը Միջին Զինաստանից բաժանող աշխարհագրական սահմանը հանդիսանում է Յինլին լեռնաշղթան (Կուենլունի շարունակությունը), վորը շրաբաժան գիծ և կազմում Յանցզիի և Հուանխեյի միջև:

Հյուսիսային Զինաստանի արևմտյան մասը լեռնալին է: Այստեղ ընկած է լոսսային սարահարթը, ողեղնահողից շրջանը, վորը նշանավոր է իր պաղարերությամբ: Լյոսսը—գորշ-գեղնափուն կավ է, չափազանց փիրուն և ծակոտկեն: Նա իր մեջ պարունակում է բուսական մնացորդներ՝ փթած վիճակում: Լյոսսի վերին շերտերը հեշտությամբ ծծում են խոնավությունը և սննդարար նյութերը ստորին շերտերից և մթնոլորտից, այսինքն ոժտված են «ինքնապարարտացման» ունակությամբ, վերականգնելու իրենց պտղաբերությունը: Վորպեսզի լոսսը կարողանա իրավորել իր արդ դրական ունակությունը, անհրաժեշտ է՝ սակայն, բավականաշափ խոնավություն: Յերաշտի ժամանակ նյութերի փոխանակությունը դադարում է, բուսականությունը այրվում է, հողն ընդունում է թուփ գույն, անկենդան տեսք: Մինչդեռ, լոսսային սարահարթը, վորը հարավից և արևելքից շրջապատված է լեռնե-

րով. պատկանում է Զինաստանի շորային շրջաններին: Լյոսսը հեշտությամբ հողմաջար և լինում, վերածվում է խիստ մանր, ամենուրեք թափանցող փոշու: Անձեւ շուրջը լոսսի մեջ բաց և անում խորը վիշեր: Հուանխեյ գետը, խրվելով լոսսի ընդերքը, նրա մեջ բաց և անում կիրճեր՝ ուղղահայաց պատերով: Ջրով սրբված լոսսը մեծ չափով քշվում տարվում է գետի կողմից, տալով նրան պղտոր, դեղին գույն, այստեղից ել իրենց անունն են ստացել ինքը՝ Հուանխեն (Դեղին գետ) և Դեղին ծովը, վորի մեջ նա թափում են իր պղտոր ջրերը:

Լյոսսային սարահարթի և Դեղին ծովի Զժիլիի ծուցի միջեվ տարածված է Զինաստանի ամենամեծ հարթավայրը— Հյուսիսային մեծ հարթավայրը: Այստեղ Հուանխեն և մյուս գետերը իրենց հետեւից թողնում են լեռներից բերվող հսկայական քանակությամբ լոսսային տիզմ: Սակայն թողնելով այդ տիզմը իր ափերին և սեփական հունի մեջ, Հուանխեն բարձրացնում է իր հունը շրջապատող հարթավայրից վեր: Այսպիսի պայմաններում գետի հեղեղումը սպառնում է աղետնվ. գետը կարող է դուրս պրնել և մտնել շրջակա ցածրունքները և միանգամբ հեղեղել հսկայական տարածություններ: Հեղեղումների հետ միաժամանակ նա փոխել է իր հունը: Մինչև XIX դ. կեսը Հուանխեն անմիջապես թափվում եր Դեղին ծովը, Շանդունի թերակղզուց հարավ: 1853 թվին նա նետվում է գեպի Հյուսիս և իր համար ճանապարհ և բացում գեպի Զժիլիի ծոցը, նախկին գետաբերանից 500 կլմ. հեռու:

Հեղեղումներից պաշտպանվելու համար ինչպես անցյալում, ներկայումս ել կառուցվում են պատճեններ: Սակայն Հուանիսեն հաճախ քանդում ե այդ պատճենները և սոսկալի ավերածություններ գործում: Դրա համար նրան կոչել են «Զինաստանի դարդը», «անուղղելի գետ»: Գետի այդ ավերիչ ուժից հաճախ են ոդտվել Զինաստանի տիրող դասակարգերը պատճելու համար «անհնազանդներին»: Զինական պատճենները հաղորդում են գետպիր, յերբ կայսրներն ու մանդարինները (պաշտոնյաները) բացել են պատճենները և հարյուր հազարավոր բնակիչներ ջրահեղձ արել:

Յանցզի հովիտը.— Զինաստանի գրեթե կենտրոնում ընկած ե նրա ամենամեծ գետի՝ Յանցզիի (5100 կմ.՝ յերկարությամբ) հովիտը, վորը մեծ ե և իր ավագանով (1.800.000 քառ. կմ.) ու տնտեսական նըշանակությամբ: Յանցզին Զինաստանի ներքին հաղորդակցության վիճակոր զարկերակն ե, նրա ստորին հոսանքը ծովային նավագնացության դռներ են: Մովային նավերը Յանցզի գետով հասնում են մինչև Խանկոռ քաղաքը (ովկիանոսից մոտ 1000 կմ.՝ հեռավորության վրա), իսկ գետային շոգենավերը բարձրանում են գետաբերանից մոտ 2850 կմ.՝ վրա: Յանցզիի հովիտը Զինաստանի լավագույն շրջաններից մեկն է՝ յերկրագործության համար:

Յանցզիի ստորին հոսանքները ալյուվիալ ցածրունքներ են, վորոնք կտրտված են բազմաթիվ վտակներով և ջրանցքներով: Յանցզիի վերին հոսանքի վրա գտնվում ե այսպես կոչված Կարմիր ավագանը, վո-

րը հանդիսանում է բլրաշտառ մի հարթություն պտղաբեր կարմրահողով ծածկված լեռների մեջ, վորը կազմվել է քայլայված կարմիր ավագահողից:

Յանցզիի շատ ավելի հանդարտ ե, քան Հուանիսեն, սակայն Յանցզիի մակարդակը ևս խիստ փոփոխական է: Չոր յեղանակին գետը խիստ ցամաքում ե, անձրևների ժամանակ ուռչում և սպառնում ե Հեղեղումներով, այնպես վոր նրան ևս հարկ և լինում պահել պատճեններով: Վերջին ժամանակներս նախազգուշական կառուցվումները անկման վիճակումն են, վորի հետևանքով Յանցզիի ևս առաջացնում ե աղետակի հեղեղումներ:

Հարավային Զինաստանը.— Հարավային Զինաստանը գրեթե ամբողջովին լեռնային յերկիր է: Վոչքարձր լեռները իրարից բաժանված են յերկրագործության համար հարմար հովիտներով: Ամենաբարձր և վայրի լեռները՝ արևմուտքում են, Տիբեթի մոտ, դաստիանյան Ալպերն են, վորոնք հասնում են 5–6 կմ. բարձրության:

Միցյան գետի ստորին հոսանքով ընկած վոչքարձր հարթավայրը Հարավային Զինաստանի համար նույն նշանակությունն ունի, ինչպիսին Յանցզիի ստորին հովիտը Միջին Զինաստանի համար: Սակայն Միցյանը շատ ավելի փոքր է Յանցզիից (յերկարությունը 1300 կմ.): Նրա նավագնացության ազդեցության շրջանը գտալիորեն սահմանափակ է, շատ ավելի փոքր է Յանցզիի հովիտի համեմատությամբ Միցյանի

Հովտի պտղաբեր տարածությունը: Բացառությամբ ալ-լուսիալ Հովերի փոքրիկ տարածությունների, Հարա-վային Զինաստանում գերակշռում է կարմրահողը:

Կիման և բուսականուրբյունը.— Արեվելյան Զի-նաստանը գտնվում է մուսսոնային կլիմայի շրջա-նում, իրենց ուղղությունը պարբերաբար փոխող քամի-ներով (ամառը ովկիանոսից դեպի մայր ցամաքը, ձմեռը՝ Հակառակը), ամառային առատ մթնոլորտային տեղումներով և չոր ձմեռով: Զմեռը Զինաստանը գտնվում է ցորտ և չոր քամիների ազդեցության ներ-քո, վորոնք փշում են ասիսկան մայր ցամաքի՝ ներ-քին մարզերից, դրա համար ել ձմեռը Զինաստանում լինում է համեմատաբար խիստ և ձմռան ու ամառվա շերմաստիճանի տարբերությունը, չնայած ծովի մոտի-կությանը, խիստ մեծ է:

Ցինլին լեռնաշղթայից հարավ ձմեռը զգալիորեն փափուկ է և այնպես չոր չե, ինչպես Հյուսիսում: Սակայն անդամ կենտրոնում, վորը ընկած է ուղիղ հասարակածի տակ, պատահում են թեթև սառնամա-նիքներ (Հունվարի միջին ջերմաստիճանը՝ 12°), յերբ գետերը առավոտյան դեմ ծածկվում են բարակ սա-ռուցով: Կիման այստեղ նպաստավոր է զանազան մերձարևարձային կոլտուրաների— թթենու, թեյի, բրնձի, նարինչենու համար:

Անձրևները Զինաստանում գալիս են հաճախ բուռն հեղեղների ձեռվ, այնպես վոր խոնավության մեծ մասը կորչում է. ժամանակ չունենալով ծծվելու հոգի ներսը: Մթնոլորտային տեղումների քանակը ըստ տարիների խիստ կերպով տատանվում է: Նման ան-

կայունության հետևանքով լինում են յերկու տեսակի աղեններ— յերաշտ և հեղեղումներ: Վորոշ շրջաններ պարբերաբար տուժում են խիստ յերաշտներից:

Վոռովգման պայմանները խիստ կերպով վատթա-րանում են նրանով, վոր Զինաստանի մեծ մասում ամ-բողջովին վողնչացված են անտառները, անձրկի ջուրը կանգ չի առնում մերկացած լանջերի վրա և բուռն հորձանքով հոսում գեպի գետերը, ուռճացնելով նը-րանց. անտառազուրկ շրջանները առանձնապես տա-ռապում են թե յերաշտներից և թե հեղեղումներից: Անտառազրկությունից տառապում է հատկապես Հյու-սիսային Զինաստանը: Հարավային Զինաստանում անտառներն ավելի շատ են խոնավության և ջերմու-թյան հետևանքով: Միջին և Հարավային Զինաստա-նում լայն կերպով տարածված է բամբուկի ծառը. բամբուկը բազմազն գործածություն ունի՝ շինու-թյունների, կահկարասափի, ջրմուղու համար, իսկ թարմ ցողումները՝ կերակրի մեջ:

Հանքային հարստություններն ու ջրային եներ-գիան. Զինաստանի ընդերքը լավ չի ուսումնասիր-ված և հանքային հարստությունների նկատմամբ բո-լոր թիվերը այնքան ել արժանահավատ չեն: Սակայն կաս-կածից վեր է, վոր Զինաստանը հարուստ է բազմատե-սակ հանքային հարստություններով, հատկապես՝ քա-րածնով: Քարածնուի մեծամեծ պաշարներ կան թե՛ Հյուսիսային թե՛ Միջին և թե՛ Հարավային Զինաստա-նի շատ վայրերում: Քարածնուի պաշարների ընդհանուր քանակը վորոշ տվյալներով հասնում է 1000 մի-լիարդ տոննի, այլ տվյալներով՝ 250 միլիոնի (ա-

մենայն դեպս ավելի, քան Անգլիայում): Եներգիայի հզոր աղբյուրներ են Զինաստանի գետերը (պաշարը հաշվում են 20 միլ. ձիու ուժ): Չափագործման անհարժարությունը, դա գետերի մակերևույթի խիստ փոփոխականությունն է, վորը հիշատակվել է վերևում: Յերկաթահանքի հետազոտված պաշարները համեմատաբար մեծ չեն (մոտ 1 միլիարդ տոնն հանք կամ 400 միլիոն տոնն մետաղ հանքի մեջ): Այլ մետաղների գ Զինաստանը հարուստ է անագով, արճիճով, ցինկով, մարգանեցով, սուրմայով, վոլֆրամով:

Անգամ Զինաստանի հայտնի ռեսուրսները բավական են յերկրի բազմակողմանի արդյունաբերական զարգացման համար: Անկասկած ե, վոր յերկրի բնական հարստությունների սիստեմատիկ ուսումնաբությունը հիշատարերեր հումքի և եներգիայի շատ նոր աղբյուրներ:

Բնակչությունը.— Զինաստանի բնակչության 90 տոկոսից ավելին շինացիներ են, վորոնք, չնայած իրենց տեղական լեզվական և կուտուրական վորոշ տարբերիչ գծերին, իրենցից ներկայացնում են միասնական ազգություն: Վոլշինացի ժողովուրդները կազմում են 5—8 տոկոս, սակայն նրանց նշանակությունը յերեւաղաքական կյանքում մեծ է, նրանք բնակվում են գերազանցապես Զինաստանի ծայրամասերում, զբաղեցնելով բավական մեծ տերիտորիա: Սինցը անում բնակվում են՝ ուշուրները (մոտ 2 միլ.), վորոնք կազմում են Հարավային Սինցը անում (Կաղաքարիա) հիմնական բնակչությունը և ազգակից են ուղբեկներին, կիրակիները (մոտ 150 հազ.), մոնղոլները, զազախները,

մանջուրները և այլն: Այնուհետև պետք է հիշել դունդաններին (մոտ 300 հազ.) կամ շինացի-մահմեդականներին: Ուշուրները, վորոնք Հարավային Սինցանից փոխադրվել են Հյուախսային Սինցան (Զոմիզարիա), կոչվում են տարանչա: Ներքին Մոնղոլիան բընակված է մոնղոլական տարբեր ցեղերով, ընդհանուր առմամբ 1,5 միլ.: Այս քոչվոր անասնապահ ցեղերը (բուրդայական) ապրում են Գեոդալական— թեոկրատական կենցաղով և իրենց հողերից գուրս են մզկում շինական գաղթականության կողմից: Մոնղոլները ճշնառող մեծամասնություն են կազմում ներքին Մոնղոլիայի արեվմտյան և Հյուախս-արեվմտյան մասերում: Մանջուրիայում, վորը սահմանակից է Կորեային, ապրում են կորեացիները: Դեպի Մանջուրիա մեծ ներգաղթ է կատարվում Հյուախսային Զինաստանից: Տիբետում ապրում են տիբետացիները: Զինաստանի հարավ-արևմտյան նահանգներում, վորոնք սահմանակից են Հնդկաշխնին և Բիրմային, ապրում են բազմաթիվ վոշ-շինացի ցեղեր, վորոնց մեջ ավելի մեծ թիվ են կազմում թայ, մոն, նոսու ցեղերը (մի քանի միլիոն), սակայն ևս բուն շինացիներից նեղված են և քշված ավելի վատթար հողերը: Սրանց մեջ պահպանվել են բնատնտեսությունը: Հնդհանուր առմամբ ազգային փոքրամասնությունները և փոքր ազգությունները խիստ նեղված են շինական միլիտարիստների, կալվածատերերի և իմակերիալիստների կողմից:

Զինաստանը բնակված է վերին աստիճանի անհամաշափ: Արեկելյան Զինաստանի պտղաբեր վայրերը

բնակված են շատ խիստ: Յանցվիի ներքին հովտում՝ բնակչության խտությունը 1 քառ. կմ. մշակելի հողի վրա հասնում է 1000 մարդու: Վորոշ վայրերում ըլլակշությանն ապրում է անգամ ջրի վրա: Սակայն խիստ բնակված շրջանները Զինաստանի փոքր մասն են կազմում— գլխավոր գետերի հովիտները և ծովափը: Լեռնային շրջանները, անգամ արեւելյան Զինաստանում, բնակված են համեմատաբար նոսր: Ամբողջ արևմտյան Զինաստանի խտությունը շնչին է.— 1 քառ. կմ. վրա 1—2 մարդ:

Գյուղական բնակչությունը զգալիորեն գերազանցում է քաղաքների բնակչությանը, կազմելով 75—80 տոկոս: Զնայած դրան, բնակչության մեծ թվի հետեւանքով, մոտ 80 միլիոն մարդ ապրում է քաղաքներում, վորտեղ դեռ հնուց կենտրոնացած է յեղել արհեստն ու առևտուրը և վորոնք հանդիսացել են վարչական կենտրոններ:

Մովագիրին, ինչպես և գլխավոր գետերի հոսանքների վրա ընկած են գլխավոր քաղաքները— Շանհաձ (Կարսորապույն նախահանգիստ և արդյունաբերական կենտրոն՝ 3260 հազ. բնակչությամբ), Նանկին (1.013 հազ. բնակչությամբ), Խանկոու, վորը Խանյանի և Ռոշանի հետ կազմում է մի յեռյակ քաղաք՝ Ռուսան, 780 հազ.), Կանտոն (860 հազ.), Տյանչժին (1.390 հազ.), Բեյպին կամ Պեկին (նախկին մայրաքաղաք՝ 810 հազ.), Ցինդաո (390 հազ.) և այլն: Բեյպինից բացի՝ մնացած բոլոր քաղաքները կարենու նախահանգիստներ են:

Բնակչության աճի մասին ճշգրիտ տվյալներ բացակայում են: Սակայն անկասկած է, վոր բնակչու-

թյունը Զինաստանում աճում է ծայր աստիճանի դանդաղ: Մահացությունը Զինաստանում մեծ է: Միլիոնավոր մարդիկ անբերրիության կամ հեղեղումների հետեւանքով սովածահաջող են լինում: Սանիտարական վատ պայմանների հետևանքով տարածված են համաձարակներ: Առանձնապես մեծ չափով մեռնում են յերեխանները: Դրան ավելացնենք անվերջ ներքին գեներացական կոփիները, վորոնք մեծ թվով զոհեր են խլում:

Զինաստանը եժան բանվորական ուժի հսկայական շուկա յէ: Հողագրկությունը և գործազրկությունը շինական աշխատավորության մի մասին քշում է յերկրից դուրս՝ աշխատանք վորոնելու:

Գաղթածների մեծ մասը դառնում են սևագործքանվորներ (կովի), վորոնց աշխատավարձը մյուս յերկրների բանվորների նկատմամբ զգալիորեն ցածր է և կենցաղային պայմանները՝ վատթար: Բացի կուլիներից Զինաստանից դուրս են գնում և արհեստավորությունը, ինչպես և առևտուրական բուրժուազիայի ներկայացուցիչները, վորոնք աշխ ընկնող դեր են խաղում Հնդկացինի և Ինդոնեզիայի հետ առևտուրի և պլանտացիոն անտեսության մեջ:

Ընդհանուր առմամբ արտասահմանում ապրում են մոտ 10 միլիոն շինացիներ, մեծ մասամբ Հնդկացինում և Ինդոնեզիայում, այնուհետև ԱՄՆ-ում, Հարավային Աֆրիկայում, Ավստրալիայում և Հարավային Ամերիկայում:

Հ. ԶԻՆԱՍՏԱՆԻ ՀԻՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱԴՅՅՈՒԹՆԵՐԸ

Զինաստանի հնագույն պատմության առանձին ետապները հնագիտության կողմից լուսաբանվել սկսվեցին միայն վերջին տասնամյակներում: 1928—1932 թ. թ. Բեյափինի (նախկին Պեկինի) մոտ հայտնաբերվեցին կմախքի մասեր (դրանց թվում և մի զանգի մեծ մասը), ամենավաղ մարդկային եյակներին պատկանող: Սինանքրոպը, ինչպես վոր անգանել են Զինաստանում հայտաբերված այդ հնագույն մարդկային տեսակը, մոտիկ և Ցալայի կապկա-մարդին, այսպես կոչված պիտեկանքրոպին: Սինանթրոպն արդեն ոգուվելիս ե յեղել կրակից և ամենապրիմիտիվ գործիքներից:

Թեյյար դը Շարդենի և Լիսանի պեղումները 1928 թ. Որդոսում (ներքին Մոնղոլիա) և Հյուսիսային Շենսիում առաջին անգամ Զինաստանում հայտաբերեցին հին քարե դարի (պալեոլիթի) կուլտուրայի մնացորդներ: Գտնված կվարցի գործիքները մոտավորապես համապատասխանում են Ցելքոպայի պալեոլիթի միջին շրջանին: Վերին պալեոլիթը, և նույնպես ստորին և միջին նեոլիթը մինչև այժմ չեն հայտաբերված: Այդ բացատրվում է վոլ միայն մինչև այժմ ձեռնարկված պեղումների անբավարար լինելով, այլև նրանով. վոր յերկրաբանական և կլիմայական փոփոխությունները, վորոնց յենթարկվել ե պալեոլիթի կուլտուրան, ժամանակվորապես աննպաստ պայմաններ են ստեղծել Հյուսիսային և Հյուսիս-արևմտյան Զինաստանում բնակվող մարդու համար:

Անդերսոնի և այլոց պեղումները Խենանիում, Պանսուում և Հարավային Մանջուրիայում 1921—1924 թ. թ. Հայտաբերեցին հետնագույն քարե դարի և հնեռ-լիթի (անցումն քարից գեպի պղինձը) տարրեր շրջան-ների մնացորդներ: Այդ ժամանակաշրջանում լրասի կազմվելը և կլիմայի զգալիորեն տաքանալը նպաստավոր պայմաններ ստեղծեցին մարդկային կուլտուրայի վերելքի համար Հյուսիսային Զինաստանում վայրենության շրջանից դեպի բարբարոսության ստորին շրջանը: Այդ կուլտուրան Անդերսոնն իր «Ցենտրալակաված բնակավայրի» անունով կոչում և «Յանշաոյի խուզած», վորը նրա կարծիքով տեղել և մոտավորությունը 3500—1700 թ. թ. մեր տարերթից առաջ:

Յանշաոյի մարդը անասնապահության և վրասորդության հետ մեկտեղ զբաղվում եր նաև պրիմիտիվ հողագողությամբ: Պեղումները հայտաբերել են քարե և բրոնզե գործիքներ և կերամիկա՝ պատրաստված բրուտի գագգաւառով և մետաղյա գույներով ներկած: Յանշաոյի կուլտուրան մոտավորապես համընկնում է նման կուլտուրաների ոչախների գոյության Առաջավոր (Բարելոն) և միջին (Անառ) Ասիայում և Յելլոպայում (Տրիպոլի և այլն): Թեև կերամիկայի նմանությունը թուլլատրում է կարծելու, վոր Յանշաոյի կուլտուրան կղզիացած շեր այս ոչախներից, սակայն Յանշաոյի կուլտուրայի արևմտյան ծագման տեսությունը, վոր արծածում են Անդեսոնը և այլ յելքորպական հնագետներ, հիմնավորված չե:

Զինական տրադիցիոն գրականությունը մեզ տալիս և Զինաստանի պատմության ժամանակագրու-

թրւանը, վորը սկսում է 2357 թ. մեր տարեթվ. առաջ (գոյություն ունեցող ժամանակագրական սիստեմներից մյուսը 2145 թ.): Յառ. Շուն և Ֆույի առասպելական իշխանությունից հետո, ըստ շինական տրադիցիայի, դալիս է Սյա դինաստիայի դարաշրջանը 1983—1557 թ. թ. (կամ 2295—1766 թ. թ.), վորին այնուհետեւ փոխարինում է Ին կամ Շան դինաստիան 1557—1050 թ. թ. (կամ 1766—1122 թ. թ.):

Մինչև Ին դինաստիայի ժամանակաշրջանին վերաբերող տվյալները առաջմմ լոկ դիցաբանական նյութի նշանակություն ունեն: Այդ տվյալները, ինչպես և շինական ազբյուրների մեծ մասը աղավաղված են տենդենցիոն վերամշակմամբ: Բավականաշատ արժանահավատ ժամանակագրություն կարելի յե նշել լոկ 9—8 դ. գ. մեր ե. ա.

3. ԻՆ ԳԻՒԱՍԻՒՅՅԻ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԸ

Ին-ի ժամանակաշրջանը լուսաբանված է Հնագիտական տվյալներով, գուշակության վոսկորների վրայի արձանագրություններով, վորոնք հայտնի յեն դեռ անցյալ դարի վերջից: Այդ արձանագրությունների վերծանումը և Հնագիտական պեղումները (1928 թ.) հաստատեցին տրադիցիոն գրականության տեղեկությունները այս շրջանի մասին: Բացի դրանից, այդ շրջանի համար, մանաւլանդ հետագա յերեք դարերի համար, խոշորագույն նշանակություն ունի Շիցգին յերգերի և Շիմների ժողովածուն: Նրա նշանակությունը համարը է հնդկական վեղաներին:

Ին-ի շրջանի կովտուրայի կենտրոնը՝ յեղել ե Հուան-խե գետի միջին հոսանքը (ներկայիս Խենանի հյուսիս-արեգելքը): Պրիմիտիվ հողագործության (կորեկ, ցուրեն, գարի, բրինձ) կողքին, կարևոր, յեթե վոչ գերակշռող, նշանակություն ունեցին վորոտությունն ու անասնապահությունը: Գործիքների համար գլխավոր նյութը քարն եր, փայտը և բրոնզը. զարգացած է յեղել զենքի արտադրությունը (ուղղական կառք, բրոնզե սրեր, նիդակներ): Հայտնի յեր բրուտագործությունը, մանելն ու գործելը, բրոնզե անոթներ պատրաստելը: 12-րդ դարում արդեն հայտնի յեր հիերոգիֆային դիրը: Ին-ի հասարակությունը գլխավորում եր ժառանգական թագավորը, վորի իշխանությունը սահմանափակված եր ավագների խորհրդի կողմից: Գոյություն ունեցին քրմերի դասը և պաշտօնատար անձինք, դրանց թվում վերահսկիչներ և դաշտերի տնօրինողներ (տյանցվուն): Ին-ին շրջապատճերի տնօրինողներ (տյանցվուն): Ին-ին շրջապատճերի դեմ մզվող մշտական կոփները հանդիտող յեղերի դեմ մզվող մշտական կոփները ձեռք բերելու աղբյուր, վոստանք այդ ժամանակաշրջանի վերջում արդեն շահագում եյին աշխատանքի մեջ: Արտադրական ու գործվում եյին աշխատանքի մեջ: Արտադրական ուժերի զարգացման ցածր մակարդակը, մայրիշխանության և խմբական ամուսնության մնացուկները, մայթյան և րաքալաքի հաճախակի տեղափոխության դեպքերը և մյուս կողմից ստրկության դերի ուժեղացումը, փոքրական տարրերը, հարստությունների զգալի խանակության տարրերը, հարստությունների զգալի խոստակումը վերնախալավի ձեռքին, վերջին թագավոր հերի որոք հողի բաշխումը տոհմիկ և ուազմիկ ազնը հերի պահանջման հերթիւնին— այս բոլորը բնութագական ներկայացուցիչներին— այս բոլորը բնութա-

գրում են ին-ի թագավորությանը, վորապես տոհմատի-
րական հասարակարդ՝ իր քայլայման շրջանում:

4. ԶԺՈՒԽԻ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԸ 1050 թ. (1122
թ.)—256 թ. ՄԵՐ ՏԱՐԵԹՎ. ԱՐԱ. Զ

Չինական պատմության հաջորդ շրջանը կապված է
Հայանին գետի հովտում Զժոռու ցեղի յերևան գալու
հետ: Այս ցեղը շարժվում եր արեվմուտքից և մոտա-
վորապես 12-րդ դարում բնակություն ե հաստատում
վել գետի (Հուանին գետի վտակը, ներկայիս Շենսի
նահանգում) հովտում: Վորչափ հնարավոր և գատել
Շիցզինի տվյալներից, Զժոռու ցեղը հնագույն ժամա-
նակից յերկրագործ ցեղ եր, սակայն վեյի հովտում
հաստատվելուց առաջ ցեղի տնտեսությունը կրում եր
կիսանստակաց բնույթ: Պտղաբեր լըսսալին հովտում
բնակություն հաստատելը հնարավորություն տվեց
Զժոռու ցեղին զարգացնելու յերկրագործությունը: Այս
ցեղի վեյի հովտում բնակվելու ժամանակաշրջանի
հետ ե կապված առաջին հիշատակությունը յերկարի
ժամին (ըստ Շիցզինի): Հարեվան քոչվորների հետ
ոնեցած մշտական ընդհարումները, վորի ընթացքում
ին-ի թագավորները ոգտագործում ելին Զժոռու ցեղին
վորապես ուղմիկ ուժ, բարձրացրին Զժոռու զինվորա-
կանության, առաջնորդի և զորահրամանատարների
նշանակությունը: 12-րդ դարի վերջին այս ցեղը, հա-
րեվան այլ ցեղերի հետ միանալով, նվաճեց ին-ի թա-
գավորությունը նվաճողների կողմից հողի զավթումը և
բնակչության հպատակեցումը, Զժոռու վանի (Վան—

սկզբում ցեղապետ, այնուհետև թագավոր) կողմից հո-
ղերի բաշխումը ուղմական ու տոհմային վերնախա-
վին և զինվորներին, նաև տնտեսական անհավասարու-
թյան աճումը համայնքի մեջ և համայնական հողերի
հափշտակումը, առաջցնում են մասնավոր սեփակա-
նություն: «...Նվիրում եմ քեզ աղեղ, նետ, ստրովներ
5 ընտանիք և 50 բաժին հողամաս»— բրոնզի անոթ-
ների վրայի մակագրություններից. «Զեն-Վան (Զժոռու
թագավորներից յերկրորդը) ...առանձնացրեց Լուսկի
գոնի (իշխանի) համար ին ժողովրդից վեց տոհմ...
առանձնացրեց Կան Շուի համար... ին ժողովրդից յոթ
տոհմ...» (Ցող-Զժոռուն): Տիրապետող դասակարգը
կազմվում է Զժոռու դաշնակից ցեղերի և ին-ի ազնվա-
կանության տոհմային ուղմական վերնախավից:

Արևմտյան Զժոռու (11-րդ—8-րդ դ. մ.եր տարեթվ.
առաջ) հասարակության բնույթի հարցը տակալին վի-
ճելի յի: Չինական նորագույն գրականության մեջ տա-
րածված տեսակետի համաձայն այս հասարակությունը
ճանաչվում եր վորպես ստրկատիրական: Այս տեսակե-
տի հեղինակն է շինական ժամանակակից պատմաբան
Գո-Մո-Ֆո: Գո-Մո-Ֆո-ի և շինական այլ պատմաբան-
ների ուսումնասիրությունները պատմական նյութերը
հիման վրա ապացուցում են ստրկության խոշոր դերը
գիման վրա ապացուցում են ստրկության կազմակերպման
գասակարգային հասարակության կազմակերպման
պրոցեսում և մասնավորապես Զժոռու ժամանակաշր-
պության մեջ: Խնադես Շիցզինից և այլ
արժանահավատ աղբյուրներից պարզվում ե, արտա-
դրողների մասսան այս ժամանակաշրջանում աշխա-
տում եր տոհմական և գյուղական համայնքների հո-
տում

զերի վրա, ըստ վորում այս հողերի գերազույն սեփականության իրավունքը բռնագրավել ելին ռազմական առաջնորդները:

Այս ժամանակաշրջանում ստեղծվող քաղաքական կազմը հետզհետե ընդունում եր ռազմական միապետության ձև: Զժողովի թագավորը և տեղական առաջնորդները իրենց ձեռքում կենտրոնացրել ելին նաև կրոնական ֆոնկցիաներ: 8-րդ դարում քաղաքական կարգը բնորոշվում է վորպես զարգացած ֆեոդալական հիերարխիա Զժողովի վանի գլխավորությամբ, յուրահատուկ ավատական հարաբերություններով և վասսալականությամբ: Արտաքուստ զարգացած այս ֆեոդալական կազմը, սակայն, հիմնված եր միանգամայն պրիմիտիվ բազայի վրա (ամուր հողային և տոհմական համայնք, ստրկության մեծ դերը): Անդամ Հուանինի ավագանում, վորի սահմաններումն եր ընդհանրապես պարփակված շինական քաղաքակրթության բնագավառը, պրիմիտիվ և իրենց տերիտորիայով, բնակչությամբ վոչ մեծ իշխանություններն իրարից կղզիացած ելին բարեարու ցեղերով: Զժողովի իշխանության կենտրոնի փոխարումը 770 թ. Վեյ գետի հովտից դեպի արեվելք (Լո-ի, ներկայիս Լոյանը) հետևանք եր Զժողովի վաղուազմական միապետության անկման, նաև Զժողովի վահի գեմ տեղի ունեցող ապստամբությունների, առանձին առաջնորդների, կենտրոնախույս ձգտումների և վաշկատուն ցեղերի հարձակումների: Հետագայում Զժողում պահպանում է յուրահատուկ քաղաքական և կրոնական կենտրոնի նշանակություն և վորպես անվանական սուվերեն, բավականանում եր նրանով, վոր

միայն հաստատում եր ֆեոդալների մեջ ստեղծված փաստական հարաբերությունները:

7-րդ դարից հանդես են գալիս մի շարք նոր իշխանություններ, վորոնք աճում ու դառնում են խոշոր պետություններ, իրարից բաժանված լինելով նախկին թույլ իշխանություններով: Այդ նոր իշխանությունների գլխավորությամբ ստեղծվում են իշխանների միություններ, վորոնց առաջացումը մասամբ բացատրվում է բարբարուների գեմ մզվող պայքարով և հանդիսանում է մի նոր շրջան շինական մարզերի միավորման պրոցեսում: Պատերազմների լարվածությունը և շափը աճում են իշխանությունների խոշորացման հետ միասին: Իշխանների փոխադարձ բաղասումները ավելի և ավելի փոխավում են արյունահեղ պատերազմների, վորոնց նպատակն եր հակառակորդի վոշնչացումն և նրա տերիտորիայի ու հարստության յուրացումը: Զորքը, վորի հիմքը կազմում ելին ծանր սպառազինված «ասպետները» (շի, շիդաֆու), վորոնք կովի ելին դուրս գալիս ուղմակառքերով, իրենց ծառաների և գյուղացիների ուղեկցությամբ, 4-րդ—3-րդ դ. գ. արդեն բաղկացած եր գլխավորապես թեթև գինված՝ հետևակներից, ընդունակ՝ մեծ տարածություններ կտրելու: Սրանք մասամբ համալրվում ելին ֆեոդալների ստորին խավերից, իսկ հիմնականում բաղկացած ելին համապար (Ճորտ) գյուղացիներից և քաղաքացիներից: Ռազմական այս բեֆորմները ամենից առաջ տեղի ունեցան ջու և Ցին կիսաբարբարոս իշխանությունների մեջ, վորոնք ռազմական տեսակետից ավելի ուժեղ պետություններ ելին:

5-րդ—3-րդ դարերը շինական պատմության մեջ հայտնի յեն վորպես «իշխանությունների պալքարի» ժամանակաշրջան։ 3-րդ դարի կեսին այդ պալքարի հետևանքով ջինաստանի ամբողջ տերիտորիայի տեր են դառնում։ յոթ իշխանություններ— Զժառ, Վեյ, Խան, Յան, Զու, Ցի և Ցին։ Զնայած անընդհատ պատերազմներին, այս ժամանակաշրջանն ընթանում է արտադրական ուժերի վերթքով։ Առաջնակարգ նշանակություն են ստանում վոռոգման աշխատանքները։ Ակսում է զարգանալ գութանային յերկրագրությունը, տարածվում է յերկաթի գործածությունը։ Նկատելի յեն հասարակական տեղաշարժեր, վորոնք ներկայացնում են շինական ֆեոդալիզմի ձևավորման նոր ետապը։ Ֆեոդալների կողմից շահագործման ուժեղացումը հանդիպում եր հետզհետե քայլքայվող հողային համայնքի դիմագրությանը։ 6-րդ դարից սկսած՝ իշխանները իրենց վարած պատերազմների աճող ծախքերը ծածկելու համար հարկեր ելին դնում հողերի վրա, մի նորություն, վորը նույնպես, ինչպես և իշխանների կողմից գրավոր որենքների հրատարակումը, ժամանակակից կոնֆուցիականների մեծամասնությունը համարում ելին վրանգավոր ու չսված սրբապղծություն։ Հողային հարկը Ցի թագավորության մեջ 5-րդ դ. հասնում եր գյուղացու արտադրանքի 2/3-ին։ Իշխանները մտահոգված ելին, թե ինչպես «բնակեցնել ամայի տարածությունները» և ձգտում ելին դեպի իրենց հողերը գրավել այլ իշխանությունների բնակիչներին, տալով նրանց սկզբնական շրջանում վորոշ դյուրություններ։ Միաժամանակ սրբում եր պալքարը հողի համար, վո-

րը վառ կերպով արտացոլում է 6—5-րդ դ. դ. տարեգրությունը (Ցո-շուան)։ Ցին, (4-րդ դ.) և մյուս իշխանությունները վերացնում են մի շարք սահմանափակումներ, վորը հողատիրության առաջ դնում եր դյուրական համայնքը։ Ցի՝ իշխանության մեջ նույնիսկ տուգանքներով հարկադրում են մանրատեր տոհմական տնտեսությունը։

Ազգարային հարաբերությունների մեջ կատարվող տեղաշարժերը սերտորեն կապված ելին քաղաքների աճման հետ։ Քաղաքները գեր ելին խաղում վոլ միայն վորպես ուղմա-ստրատեգիական, այլև արհեստավորական ու առևտրական կենտրոններ և մասնավորապես վերպես բարբարոսների հետ կատարվող փոխականության կետեր։ 3-րդ դ. Ցի-ի իշխանության կինցիի մայրաքաղաքը ժամանակակիցների ասելով ուներ 70 հազար ընտանիքներ։ Թառ քաղաքը, ներկայիս Շանդունի մարզում, նկարագրվում է վորպես «Անդրյերկնային թագավորության կենտրոն, ճանապարհների հանգուցակետ, ապրանքների փոխանակության վայր» (Սըմա Ցյան, Պատմական հուշեր)։ Քաղաքների զարգացումը և առևտրականների առաջացումը տեղի ունելին շինական ֆեոդալիզմի ձեռվորման այս վաղ շրջանում, և առևտրականների շահերը սերտ կերպով միայնուավում ելին իշխանի և իշխանական բյուրոկրատիայի հետ։ «Ուժեղ տները, հարստացող վաճառականները»— «վարկ են տալիս ժողովրդին, ովնելով նրան բավարարելու իշխանության պահանջները»։ Առևտրականի և ֆեոդալի սերտ կապերին նպաստում եր և բարբարոսների հետ կատարվող փոխանակությունը

այդ ժամանակաշրջանի առևտրի զարգացման մեջ Առևտրի և արհեստների զարգացումը, ինչպես և իշխանի ուժեղացումը, չնայած համայնքների համառ գիմադրությանը, խթան ելին հանդիսանում համայնական հողերը գրավելու (աղաճանքերը, ձկնորսարանները, անտառները) և գյուղացիության շահագործումը սաստկացնելու, մանավանդ, վոր վերջինս վոլ միայն հացահատիկների, այլև մետաքսի, քաթանի արտադրող եր: Պարտքերը, պատերազմները, բարբարոսների գեմ արշավանքները ստվարացնում ելին ստրուկների շարքերը, վորոնք այժմ ոգտագործվում ելին վոլ միայն տնային աշխատանքներում և արտադրական ձեռնարկություններում, այլև գյուղատնտեսության մեջ: 6—3-րդ դ. դ. Հիմնականում ավարտվում է բարբարոսցեղերի հպատակեցումը Հյուսիսային Զինաստանի սահմաններում: 7—5-րդ դ. դ. ներքին կոփմներում այդ բարբարոսները ակտիվ գեր ելին խաղում, աջակցելով իրար գեմ պայքարող իշխանների այս կամ այն կողմին:

5-րդ դ. շինական վաղ ֆեոդալիզմն արդեն խախտված եր: Հին տոհմային ազնվականությունը և «սապետության» (շի) լայն խավը հետ ելին մղվում Քարստության և իշխանության նոր ներկայացուցիչների կողմից, վորոնք դուս ելին գալիս վաշխառուների, առևտրականների, նոր բյուրոկրատիայի շարքերից: Ազնվական դասի ներկայացուցիչների վորոշ մասը այդ ժամանակաշրջանի վերջում քայլայվում է: Մյուս կողմից, արևելյան բռնապետության տիպի բյուրոկրատիկ կազմակերպությունն արդեն 5—3-րդ դ. դ.

ձևավորվում է մի շարք իշխանությունների, վորատեղ հողատեր և փողատեր հարուստները շփման մեջ են մտնում բարձր դասի հետ: Բռնապետության գոյացումը ընթանում է բարձր դասակարգի մեջ տեղի ունեցող ներքին սուր պայքարով և դասակարգային պայքարի անհաջտ բաղխումներով: — «Պայքարը ավագակիների դեմ (խոռվարանների դեմ) — թագավորի գլխավոր հոգուն ե» — ասում է այդ ժամանակի գրողներից մեկը: Բանակն իր կազմությամբ կորցնում է իր նախկին դասային, «սապետական» բնույթը: Նրան քայլայում են դասակարգային հակասությունները. զինվորների բազմությունը կովի յեն տանում բռնի ձնշման տակ, ըրշապատելով նրանց դաշիճների ջոկատներով: Այդ ժամանակվա հասարակական հարաբերությունների անկայունությունը բնորոշելու համար բավական է հիշատակել, վոր Ցի թագավորության գլխավոր զորահրամանատարներից մեկը նախկին ստրուկ եր և հենց այդ թագավորությունն ել անցնում է խոշորագույն վաշխառու Զենի ձեռքը, վոր անցյալում նույնպես ստրուկ եր: Ցի թագավորության մայնաքաղաքի հոչակավոր ակագեմիայի ուսանողների, ինչպես նաև Կոնֆուցիոսի աշակերտների թվում հիշատակում են օխոշոր ազնվականների»:

Նահապետական կենսաձեկի քայլայումը ծնեց յուրահատուկ «ինտելիգենցիայի» ստվար մի խավ, գլխավորապես «սապետության» շարքերից: Այս ըրշանում վաղ ֆեոդալիզմի բյուրոկրատական եվլոյցիան արդեն առաջադրում եր այն պահանջը, վոր տիրող դասի ներկայացուցիչները (շի, շիդաֆու) ոժտված լինեն

վու միայն ռազմական ունակություններով, այլև սպիտնականությամբ»: Իշխանները, վորոնք կանգնած ելին բարդացած քաղաքական ու սոցիալական խընդիրների առաջ, աշխատում ելին իրենց կողմը գրավել «սպիտնականներին»: Այդ միջավայրից ելին դուրս գալիս քաղաքական և գաղափարական հոսանքների կրողները: Այդ ժամանակը համարվում է շին Զինաստանի հոգեվոր կովտուրայի պատմության կլասիկ դարաշրջանը:

4. ՎԱԴ ԶԻՆԱԿԱՆ ԲՈՒԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(221 թ. մեր տարերվ. առաջ 220 թ. մեր տարերվին).

ՅԻՆ-ՇԻ ԽՈՒԱՆԴԻԻ կայսրությունը (221—206 թ. թ.): «Իշխանների պայքարի» ժամանակաշրջանում բարձրացրած Յին իշխանությունը 8-րդ դարում մի տերիտորիա եր Զինաստանի արևմտյան ծայրում (ներկայիս Ենսիում): Յերկար ժամանակ Յինի իշխանները չանք ելին թափում կասեցնել իրենց իշխանությանը սպառնացող վտանգը Յին-ի կողմից հյուսիսում և Զու-ի կողմից հարավ-արևմուտքում: Բարբարոսների հետ կնքած դաշինքներն ու ամուսնական կապերը, բարբարոսական ցեղերի փոխադարձ կոփլների ոպտագործումը, բարբարոսների դեմ մդած պատերազմները և նրանց աստիճանական ձուլումը հետզհետե ընդլայնում են Յին-երի տիրապետությունը արևմուտքում: 623 թվին Յին-երի իշխանը հանդես է գալիս վորպես «արհելյան բարբարոսների թագավոր»: Բարբարոսների դեմ 444 թ.

ուարած հաղթանակը Յին-ների առաջ բաց և անում ուղին դեպի ներկայիս Գանսու և Հյուա. Ենսիի մարզերը: Գրեթե մինչև 3-րդ դ. Յին՝ իշխանությունը մնում էր մի կողմ քաշված այն ժամանակվա Զինաստանի կենտրոնական և արևելյան մասերի տիրապետության համար մղվող կոփլներից, ոպտագործելով այդ պայքարը, վորպեսզի հետագայում տիրե ևան գետի ավազանը և Սըչուանի մարզերը (Շու, Բա) Յինը հարուստ եր արգավանդ հողերով, անասունով, ավելի նվազ շափով—յերկաթով, աղով. «Յինը ունի Յերկնային կայսրության բնակչության 3/10-ը, իսկ հարստության 4/10-ը» (Մըմա Ցյան):

Յին իշխանության առաջին մինստր Շան Յանի (352—338 թ. թ.) սեփորմները, վորով վերացվում ելին հողային համայնքների մի շարք սահմանափակումները և սահմանափակվում տոհմային ազնվականության ինքնուրույնությունը, ճանապարհ են հարթում հողատիրության նոր ձեղերի համար և դեպի Յինի ընդարձակ տերիտորիան ելին գրավում հարևան իշխանություններից քայլայված և հողազորկ գուղացիներին: Յինի քնիկ ժողովուրդը կազմում եր նրա զորքի հիմնական մասը: Աստիճանաբար Յինը դառնում է ամուր ֆեոդալական—բյուրոկրատական բռնապետություն: Սըչուանի և Վեյ գետի պտղաբեր հարթավայրերի վոռովումը ապահովում եր ցիների մեծ բանակների մատակարարման հնարավորությունը: Մասնատված իշխանությունների միավորումը իրագործեց ցիների իշխան Զըմբենը, վորը 221 թ. դարձավ թագավոր Յին-Շի-Խուանդի անունով (ցիների առաջին կայսրը): Հանձինս Յին-

Շի-Խուանդիի՝ թագավորն արդեն ֆեոդալական ժիքարխիայի բարձրագույն ներկայացուցիչն էր: Նա հանդես եր գալիս վորպես իշխանության միակ կրողը, վորի միահեծանությունն ու Հղորությունը արտահայտվում եր նոր տիտղոսի մեջ (Խուանդի) և նրա իշխանության արտահայտության նոր ձեւերի մեջ (դեկրետներ, հրամաններ):

Կայսրը «...առաջին անգամ հաստատեց համատարած մեծ խաղաղություն: Նա տապալեց և ավերեց ներքին ու արտաքին պարիսպները (այսինքն իշխանությունների սահմանները): Նա ճանապարհ հարթեց դեպի գետերը. նա վերացրեց և ճնշեց բոլոր գժվարություններն ու խոշնդուները» (Ցին-Շի-Խուանդիի արձանագրությունը):

Ցին-Շի-Խուանդին յերկիրը բաժանեց 36 շրջանների: Նա կառավարում եր բյուրոկրատիայի ոգնությամբ և աշխատում եր ամրացնել կայսրության միասնականությունը, բռնի ուժով տեղափոխելով խոշոր ֆեոդալներին, վաշխառուներին և առևտրականներին իրենց տոհմական բներից դեպի մայրաքաղաք և ազ մարզեր: Նա բռնի տեղափոխում եր մեծ քանակությամբ հասարակ ժողովրդին և բնակեցնում գլխավորապես ծայրամասերում, վորպեսզի ամրացնի պետության սահմանները: Արդեն այդ ժամանակ գոյություն ունեցին շրանցքներ, վորոնք միացնում ելին Հուան-խեն Խուայ գետի հետ, ինչպես նաև Յանցզի գետի հետ: Ցին-Շի-Խուանդին կառուցեց հոյակապ ճանապարհներ, վորոնք միացնում ելին մայրաքաղաքը նաև հանդների հետ: Փորձ արվեց մտցնելու միասնական

շափ և կշիռ, մտցվեց գրերի պարզեցրած սիստեմ: Այդ կայսրության մեջ մտնում ելին ներկայիս Ֆուցյանի, Գուանդունի, Տոնկինի և Աննամի տերիտորիաները:

Հոները հետ մղվեցին, սահմանները ամրապնդվեցին Մեծ Պարսպով (մասամբ արդեն առաջուց կառուցված): Ցի և Յանից նավեր ուղարկվեցին «խորհրդավոր կղզիները» գտնելու համար:

Ցին-Շի-Խուանդիի կայսրությունը վաղ ֆեոդալիզմի զարգացման ամենափայլուն մոմենտն եր: Պետական միավորումը նպաստեց առևտրի զարգացմանը: Ցին-Շի-Խուանդին իրեն մոտեցրեց խոշոր վաճառականներին և նրանց տալիս եր պատվավոր կոչումներ: Սակայն կայսրության միասնությունը ամուր հիմքեր չուներ: Տնտեսական կապերի վորոշ աստիճանի զարգացումը շինական մարզերի սահմաններում անհրաժեշտ նախադրյալ եր Զինաստանի այդ վաղ միավորմանը մի կայսրության մեջ: Սակայն այդ փորձերի շափականց լարվածությունը վոլ թե առևտրա-փողային հարաբերությունների ուժի, այլ նրանց ծայր աստիճանի թուլության արտահայտությունն եր բնատնտեսության պայմաններում: Այդ միավորումը տեղի եր ունենում արտադրության ֆեոդալական յեղանակի և ստրկատիրական հարաբերությունների գլուխ տարածման հիման վրա: Այդ պայմանավորված եր առաջին հերթին նրանով, վոր ֆեոդալներն ու ստրկատերերը ձգտում ելին հաղթահարել համայնական—տոհմային կապերի վրա հենվող գյուղացիության դիմադրությունը և ընդլայնել իրենց տիրապետությունը տոհմատիրու-

թյան աստիճանում գտնվող տերիտորիայի վրա: Յին-Շի-Խուանդիի կայսրությունը — դա ուշ ֆեոդալիզմի բացարձակ միապետություն չէ, այլ վաղ արևելյան գեսպոտիա:

Յին-Շի-Խուանդիի կայսրությանը հակառակ դիրք ելին բռնել ֆեոդալների բավական լայն շրջանները «Գիտնականներն ուսումնասիրում են անցյալը, վորպեսզի վատաքաննեն նորը և խռովեն հասարակ ժողովություն»—ասվում ե առաջին մինիստր Լի-Սիի զեկուցման մեջ, վորին հետեւեցին ընդդիմադիր «գիտնականների» մահապատիժները և նրանց գրքերի այրումը: Կայսրի ավագ վորդին, հակառակորդ կուսակցությանը համակրելու համար աքսորվեց դեպի սահմանը, ուղարկվելով բանակ: Այն հսկայական լարվածությունը, վորը պահանջում ելին Յին-Շի-Խուանդիի ձեռնարկած աշխատանքները, ծանր բռն ելին դարձել ժողովրդական մասսաների վրա: Պետական կոռերը (Մեծ Պարսպի քաշելը, ջրանցքների փորելը, ճանապարհների կառուցումը) վիթխարի շափերի ելին հասնում: Յերկիրը լցված եր թափառաշրջիկ մարդկանցով—ջախջախված բանակների մնացորդներով և քայլաված գյուղացիներով: Մի քանի մահափորձեր կատարվեցին կայսրի վրա:

Յին-Շի-Խուանդիի մեռավ 210 թ. ներկայիս Խերեց նահանգը ուղևորվելու ժամանակ: Գաճ բարձրացավ նրա յերկրորդ վորդի՝ Եր-Շի-Խուանդին: Սրա թագավորության հենց առաջին տարին կայսրությունը բըռնըված եր գյուղացիական ապստամբությամբ, վորի պլումն եր կանգնած աղքատ գյուղացի Զեն-Շե, Հայ-

տարարելով, թի ինքը Յին-Շի-Խուանդիի ազատված վորդին և: «Զեն-Շեն իր զորահրամանատարներին ուղարկեց Յինի կողմից նվաճված բոլոր շրջանները: Յերիտասարդությունը բոլոր մարզերում, տառապելով ցիների պաշտոնյաներից, կոտորեց բոլոր շրջանային և գավառային պետերին և ապստամբեց, միանալով Զեն Շեին» (Սրմա-Ցյան):

Ապստամբները, վորոնց հետեւից բարձրացան և հին աղնվականության մնացորդները, վերականգրնում ելին իշխանությունները հին անուններով: Ներկայիս Հյուս Յյուսի աերիտորիայում ապստամբներին վկիավորում եր գյուղացիությանը մոտ կանգնած մանր պաշտոնյա Լյու-Բան: Զեն Շեի առաջապահ զորքը մոտենում ե մայրաքահաքին (Սյանյան, խաների որոք Զան-ան, ներկայիս Սիխանին մոտիկ): Սակայն հետո ապստամբները մի շարք պարտություններ կրեցին, իսկ Զեն-Շե սպանվեց:

Հետագայում ապստամբության ղեկավարությունն ընկնում ե Փեոդական տարրերի ձեռքը: 206 թ. Սյան-Յույ, ապստամբների առաջնորդներից մեկը, Զուիշխանության նախկին զորապետի վորդի և ընդունակ հրամանատարը, ջախջախվում ե Յինի զորքերը և նրա զեկավարությունը ճանաշվում ե մյուս առաջնորդների կողմից: Մի քանի տարվա ներքին պայքարից հետո, վորտեղ գյուղավոր փոխադարձ հակառակորդներն ելին հանդիսանում էին-Բան և Սյան-Յույ, Լյու-Բանը հիմնում ե նոր՝ Խան'-ի դինաստիան:

6. ԱՐԵՎԱՏՅԱՆ ԽԱՆԻ ՇՐՋԱՆՔ
(202 թ. մեր քարերվ. առաջ—9 թ. մեր տարերվ.)

ՎԱՆ-ՄԱՆ (9—23 թ. թ.)

Նոր իշխանությունը, հակառակ Ցին դինաստիայի, սահմանափակեց իր միջամտությունը Հասարակական կյանքի մեջ: Առաջին կայսրները հրատարակեցին հրամաններ հարկերը իշեցնելու մինչև $\frac{1}{15}$ և նույնիսկ $\frac{1}{30}$ (բերքից): Սակայն գյուղացիությանն սպասում էր նախկին պիճակը, թեև հարկն ու զինվորական ծառայությունը այնչափ մեծ չէին, ինչպես Ցին-Շի-Խուտանդիի որոք. «Խան՝ երի տունը իշեցրեց հարկը, վերցնում եր 30-ից մեկ մասը, Հաճախ գիշում եր հարկը..., բայց ուժեղները զավթում, իրար մեջ ելին բաժանում դաշտերը, կապալով ելին տալիս գյուղացիներին: Անունով մեկյանուներորդ մասն եր, իրականում — կեսը» (Խանշու, Առաջին Խան դինաստիայի պաշտոնական պատմությունը): Խան՝ երի որոք բնակչության հիմնական մասսան գյուղացիությունն եր, վորք վճարում եր ունտա կալվածատերերին, պաշտոնյալին կամ նոր դինաստիայի ազնվականությանը; Նրա կողմնակիցներին և նորից բարձրացած հին ազնովականության ժառանգներին: Գյուղացին վճարում է գլխահարկ և բազմաթիվ լրացուցիչ հարկեր և կատարում և կոռ: Խան՝ երի որոք ստրուկների աշխատանքը գործադրություն եր գտնում հողագործության մեջ, շնուռելով դեռ արհեստագործության մասին: Քիչ շեյին հազարի շափ ստրուկներ ունեցողները: Գոյություն ունելին ստրուկների մշտական շուկաներ:

Հիշատակվում է հարյուրավոր ստրուկների մասին առանձին տնտեսություններում, վորոնք զբաղված են վաճառքի գույս բերվող միթերքների արտադրությամբ: Առաջին դարում մեր թվարկ առաջ, տեղի ելին ունենում ստրուկների ապատամբություններ լեռնարդյունաբերության մի շարք շրջաններում: Մեծ թիվ ելին կազմում նաև պետական ստրուկները, վորոնք զբաղված ելին վոլ միայն այնպիսի աշխատանքով, ինչպիսին ե պետական հացահատիկի փոխադրությունը, անասունների արածացնելը, այլև գյուղատնտեսական գործիքներ և զենքեր պատրաստելը: Խան՝ երի թագավորական հրամանները ստորացնում ելին վաճառականների գրությունը: Սակայն «ծովերի մեջ ընկած տերիտորիան» (այսինքն Չինաստանը) միացված եր, բաց ելին ուղեկալները և կամուրջները ազատ յերթեվեկության համար և վերացված ելին լեռնային և ջրային հարստությունների նկատմամբ արգելվները: Այդ պատճառով ել «Հարուստ վաճառականները ցըրվում ելին վող Անդրյանային կայսրության մեջ և նրանց վաճառած ապրանքները հասնում ելին բոլոր տեղերը ու բավարարում պահանջը» (Սըմա Ցյան): Դրամ կտրելը գառնում ե մասնավոր գործ: Հ-րդ դարը — առևտրա-փողային հարաբերությունների բուռն զարգացման ժամանակաշրջան ե:

Խան-ի դինաստիայի սկզբում ազնվականությունը տեղերում վոլ միայն հարկ եր, հավաքում, այլև պաշտոնյաներ եր նշանակում: Առաջին տասնամյակներում տեղի ուներ պայքար կյու-Բանի տան անդամների և թագուհու տոհմի միջև: Ամուսնու մահից հետո թա-

գուհին սպանել տվեց ամուսնու ազգականներին և
ինքն եր կառավարում կայսրությունը իր վորդու որոք,
իսկ այնուհետև իր նշանակած ազնվականության մի-
ջոցով: Թագուհու մահից հետո նրա տոհմն ել իր հեր-
թին հեռացվեց պալատականների և լյու-բանի: կողմ-
նակիցների ձեռքով, վորոնք միացել եյին նրա կեն-
դանի մնացած ազգականներին: Այդ պայքարի ըն-
թացքում ուժեղանում եր կայսերական պալատը: Սա-
կայն տնտեսական զարգացումը հարստացնում և ու-
ժեղացնում եր տեղական ֆեոդալներին և ընդհանրա-
պես «ուժեղ տներին»: 154 թվին տեղի ունեցավ յոթ
իշխանների ապստամբությունը Ու իշխանի գլխավո-
րությամբ: Ու իշխանության մեջ դրամ եյին կտրում,
մշակելով տեղական հարուստ՝ մետաղահանքերը:
Ապստամբությունն այնքան լուրջ եր, վոր Խան՝ երի իշ-
խանները կարող եյին վոսկի ստանալ, խոստանալով
վերադարձնել տասնապատիկը: Այնուամենայնիվ
ապստամբությունը ճնշվեց: Մնացած իշխաններին
թողնվեցին լոկ իրենց տիտղոսներն ու յեկամուտները,
վորոնք հետագայում նրանց համար հավաքում եյին
կայսերական պաշտոնյանները: Իշխաններին հրամայ-
վեց, վոր իրենց մահից հետո կալվածքը ժառանգու-
թյուն թողնեն վոլ միայն ավագ վորդուն, այլ բաժա-
նեն բոլոր վորդիների մեջ:

Մյուս խնդիրը, վոր կանգնած եր կայսրության
առաջ, Հոների դեմ պայքարն եր, վորոնք կազմել ե-
ցին ցեղերի հզոր միություն: Խան՝ ի դինաստիայի
սկզբնական տարիները նրանք խուժեցին Մեծ Պարսկի
ներսը: Առաջին կայսրներից մեկը նրանց կողմից վերի
բնվեց:

Աւդի կայսրի որով (141—87 թ. թ. մեր տարեթվ.
առաջ) շինական կայսրության և նրա ներքին հակա-
սությունների աճումը վերածվում է բուռն ուղղմական
հքսպանսիայի: Այդ հքսպանսիայի շնորհիվ հարավում
նորից ընդլայնում են կայսրության սահմանները, գր-
րավելով Տոնկինը և Աննամը, Հյուսիս-արեվիլքում
տարածվում է մինչև հարավային Մանջուրիա և Կո-
րեայի միջին մասը, արեվմուտքում գեն և շպրտում
Հոներին Որդոսից և Շենսիից: Զինական հայտնի ար-
կածախնդիր Չժան-Ցզյանը, տաղանդավոր քաղաքագետ
և հրամանատար, Ճարպկորեն ոգտագործելով Կաշգա-
րիայի և Չոնգարիայի շահագրգովածությունը առեվ-
տրական ճանապարհ հաստատելու Զինաստանի և
Միջին Ասիայի միջև, այդ մարզերը միացրեց կայս-
րությանը: 101 թ. (մեր թվարկ. առաջ) շինական բա-
նակը ներխուժեց Ֆերգանա, հարաբերություններ
ստեղծվեցին Բակտրիայի, Սովորիանայի և պարթեվնե-
րի հետ: Կայսրությունը դուրս յեկավ այնտեղ, ուր ի-
րար եյին հանդիպում Ասիայով անցնող պատմական
մեծ ճանապարհները, վորոնցով անցնում եյին Հընդ-
կաստան, Մերձավոր Արեվելք և Ցեմրոպա բարբարո-
սական կայսրությունների հիմնադիրները: Բացից
Զինաստանից Հոռմ տանող մետաքսի մեծ ճանապարհը:
Դամիրի փեշերում Յարկենդ գետի հովտում, Տաշկուր-
դանում իրար եյին հանդիպում առեստրական քարա-
վանները Զինաստանից, Փոքր Ասիայից, Հնդկաստա-
նից և Սեվ ծովից:

Պատերազմներ մղելու համար փողի մեծ կարիքը
մերձակա պատճառն եր, վորը մղում եր արքունիքը

իշխանության և Հարստության բոլոր աղբյուրների մենաշնորհը իր ձեռքում պահելու։ Սակայն դրա հիմքում կալին ավելի խոր պատճառներ։ Հասարակական ներքին հակասությունների աճման հետևանքով գոյացած խոր ճգնաժամը, այն ե՛ զյուղացիության արագ քայլացումը մի բեկնում և հողերի ու Հարստության կուտակումը մյուս բեկնում— նպաստում և ֆեոդական մասների հաճախակի յելույթներին։

Ուղիի ժամանակվա աշքի ընկնող պետական գործիչների կողմից (Ֆեն-Խուն-Յանի— «կոյանցի աղ վաճառող վորդու», Կուն Ցինի — յերկաթի խոշոր արդյունաբերողի և մի շարք այլոց) ձեռնարկվում են մի շարք միջոցներ, այն ե՛ աղի, յերկաթի, գինու և դրամ կտրելու մենաշնորհը, առևտրական փոխանակության կազմակերպումը, բյուրոկրատական պետության միջոցով, «ուժեղ տներին» ճնշելը և կայսերական իշխանության ուժեղացնելը։ Ուղիի որենսդրությունը նախատեսնում էր 1.882 պետական հանցագործության տեսակներ և 13.472 ալ հանցանքներ, վորոնք յենթակա ելին մահապատճի։ Կալվածատերերն ու վաճառականները կոնֆուցիականության դրոշի ներքո դուրս են գալիս կայսրության կողմը բռնող ոլիգարխիայի դեմ, առաջադրվում է հողատիրությունը և սարկատիրությունը սահմանափակելու պահանջ։ Սակայն կոնֆուցիականության նշանակությունը, վորպես գաղափարական դենք արդեն հանդանանալ էր Ցին-Երի տապալումից հետո։ Ուղին հայտարարեց կոնֆուցիականությունը՝ պահպանական պատճենությունը։

Քառնը, վորը ուղեկցվում էր մահապատճիմներով և «ուժեղ ընտանիքների» բռնագրավումներով, թուղացրեց ընդդիմադիր տարրերի կողմից կայսրությանը սպառնացող վտանգը, սակայն շվերացրեց ներքին ազրաբային ճգնաժամը։ Մեր տարեթվարկության սկիզբին այդ առաջ բերեց նոր փորձ ճգնաժամից դուրս գալու ոեփորմների գնով, վորը ձեռնարկեց Վան-Մանը։

Վան-Մանը կայսերական ընտանիքի անդամ էր (կանացի գծով) և մինխստը և մեր տարեթվ։ 9 թվին գրավեց իշխանությունը։ Նա իր հրամանով հայտարարեց. «Ցինը ապօրինի յեր... խեղաթյուրեց Հին իմաստունների կարգը, վոչնչացրեց դաշտերի համայնական սկսածնը։ Դրա համար ել հողերը հավաքվում ենին վորոշ մարդկանց ձեռքում և առաջացավ հարստանալու ագահությունը... Ուժեղ մարդիկ գրավում են դաշտերը հազարավոր մուերով, իսկ աղքատները ասեղ խրելու տեղ ել չունեն... Այժմ մենք փոխում ենք Յերկնային կայսրության դաշտերի անունները, հայտարարելով դրանք պետական դաշտեր, ստրուկները հայտարարվում են «մասնավոր մարդկանց մոտ ծառայության մեջ», այդ բոլորը վոչ կարելի յե զնել և վոչ վաճառել։ Նրանք, վորոնց ընտանիքում տղամարդիք 8-ից պակաս են, իսկ դաշտերը ավելի քան 3ին (=100 մու), պետք ե ավելորդ հողերը բաժանեն իրենց ազգականների 9 սերնդի և զյուղական համայնքի միջև...»։ Ուրենքը խաղաղողներին սպառնում էր մահապատճի (Ցյան Խան'Չու, առաջին Խան դինաստիայի պաշտոնական պատմությունը)։ Դրան հաջորդում են մենաշնորհների ու պետական առևտրի մասին հրամաններ։ Հետագայում ինքը, Վան-Մանը ստիպված էր վե-

բանայել հողի և ստրուկների առուծախսի արգելքը Արդ ժամանակ կայսրությանը նեղում ելին վոլ միայն Հոները, այլև Հարավ-արևմուտքի ապստամբ ցեղերը Ռեփորտները անց ելին կացվում կալվածատերերի և ստրկատերերի ձեռքով և ել ավելի ելին վատթարաց նում ժողովրդական մասսաների դրությունը։ Վան-Մանի բանակները ամենուրեք պարտություն ելին կրում, Յերկրում ստեղծվեց շափազանց լարված դրություն։

Տեղերում սկսեցին իշխել Վան-Մանի զորահրամանատարները ժողովրդական մասսաները ապստամբեցին և Վան-Մանը սպանվեց։ Այս անգամ ապստամբ գյուղացիության մեջ առաջ յեկան մի շարք պրիմիտիվ կազմակերպություններ՝ «Պղնձե ձիեր», «Յերկաթյա մըկաններ», «Մեծ նիզակներ» և այլն։ Դրանցից ամենանշանավորը, վորը մեծ հեղինակություն եր վայելում ապստամբ գյուղացիության մեջ՝ «Կարմրահոնքերն» ելին— նանդունի ապստամները։ Այս շարժման կազմակերպածությունն ու մակարդակը շատ ցածր եր, վորն ավելի ևս թուլանում եր նրանով, վոր ապստամբությունն սկսվեց համատարած սովոր պայմաններում։ «Կարմրահոնքերը» յերկու անգամ գրավեցին մայրաքաղաքը և յերկար ժամանակ դիմանում ելին ներկայիս Խենանում։ Սակայն սովոր, անկազմակերպվածությունը և ուղղական թուլությունը նրանց հասցրին պարտության։

7. ԱՐՅԵՎՄՏՅԱՆ ԽԱՆՈՒՅ (25 220 թ. թ.)

Այս դինաստիան վերականգնեց Խան'-երի տան շառավիդ Լյու-Մյուն (Փուան-Ռոզի) ապստամբ գյուղացի-

ության և իր մրցակիցների դեմ յերկու տարվա պայքարից հետո։ Լյու-Մյունն և Վան-Մանի դեմ ապստամբած նրա կողմնակիցները տիպիկ ներկայացուցիչներն ելին նահապետականության հետ կապված տիրող դասուի միջին և ստորին այն խավերի, վորոնք կոնֆուցիական ուղղովիցիայի հենարանն ելին Ռոզիի որով։ Գյուղացիության դեմ մղած պայքարում Լյու-Մյուն գործադրում եր անխնա տեռոր և փորձում եր մեղմել դասակարգացին հակասությունները։ Նրա թագավորության որոք հրատարակվում են մի շարք որենքներ հոդատիրությունը և ստրկատիրությունը սահմանափակելու, հարկերը պակասեցնելու մասին։

Վան-Մանի իշխանության որով հոները տապալեցին շինական գերիշխումը արևվմտյան ճանապարհների վրա։ Դուրս մղվելով Հոների Ցուշչի (Հավանորեն սկյութական ծագումով) ցեղի կողմից, շինացիները քաշվեցին դեպի արևմուտք Գորիի և Իլիի միջով։ 1-ին գարիվերցին մեր թվարիկ Ցուշչի ցեղերը գրավեցին Սոգդիանան—Միջին Ասիական պետություններից մեկը, Ամունարիայի շրջանում, վորտեղ, ըստ ավանդության, կառավարում ելին Ալեքսանդր Մակեդոնացու զորավարների սերունդները։ Միայն 73 թ. շինացիները նորից գրավեցին Խամին, իսկ 91 թ. Բան-Զժառն տիրեց Յերկենդին և Խոտանին, իսկ այնուհետև շինական տիրապետությունը տարածվեց Կաշգարիայի և Զումգարիայի վրա։ Դուրս մղվելով շինացիների կողմից, Հոներն անցնում են արևմուտք։ Բան-Զժառն ուղարկեց Հոռմ մի դեսպանություն, վորը սակայն Պարսից ծոցից գենը չկաց։ Արեվելյան Խան'-երի որով Զինաստանը առեվտրական հարաբերություններ եր պահպանում Արեվ-

մուտքի հետ Միջին Ասիայով և ծովով Պարսից ծոցից Կոխինսինա նավով վաճառականների միջոցով: 166 թ. հիշատակվում է այդպիսի վաճառականների պալատներում հոռմեական Մարկոս Ավրելիոս կայսրի գեսպանների հայտնվելը:

Խան՝երի վերահաստատվելը վերականգնեց կանփուցիականուրյունը *): Քանի վոր այդ հասարակության կայունությունը հետզետե խախտվում էր, և քայլայվող կայսրությունն անընդունակ էր դառնում ապահովելու տիրող դասակարգի հիմնական շահերը, աճում իր գաղափարական բնակցիան կոնֆուցիականության գեմ, վորի արտահայտիչն այդ ժամանակաշրջանում հանդիսանում էր գլխավորապես Դասիզմը *):

1-ին դ. ապրում էր (27—97 թ. թ.) Վան-Զուն, նշանավոր մտածող, մատերիալիստ, վորը հանդես էր գալիս կոնֆուցիականության, ինչպես և դասիզմի սուրբնադատությամբ: Արդեն մեր թվարկության սկզբին շինական հասարակության վերնախավերի մեջ թափանցում ե բուդդիզմը, վորի մուտքը 1-ին դարի վերջին դյուրանում էր Հնդկաստանի հետ ունեցած հարաբերության հետևանքով, և 2-րդ դ. կեսից Զինաստանում զարգանում է բուդդիզմի քարոզը:

«Ուժեղ ընտանիքների» աճը նպաստում է կայսրության քայլայմանը, վորտեղ իշխանությունն սկսում էն իրենց ձեռքն առնել զորահրամանատարները: 184 թ. բոնկում ե «Դեղին չալմավորների» ապստամբությունը, վորը ներկայացնում էր գյուղացիական շարժման ավելի բարձր առտիճանը: Դա տարրերային շա-

* Կոնֆուցիականության և դասիզմի մասին առևո վերջի գլուխը՝ «Զինական կուլտուրա»:

ժում չեր, այլ մի շարք տարիների նախապատրաստության և նրա առաջնորդների աշխատանքի արդյունք: Նա համեմատաբար կազմակերպված էր: Ապստամբները բաժանված ելին 36 զոկատների, յենթակա իրենց գլխավոր հրամանատարներին: Յելուկթը նշանակված էր նախորդք վորոշված որը: Չնայած, վոր ապստամբները գալաճանորեն մատնվեցին իրենց առաջնորդի յեղոր կողմից և հարկ յեղավ արագացնել յելուկթը, այնուամենայնիվ ապստամբությունը բռնեց ներկայիս Շանդունի, իննանի և ներեցի նահանգները: Այս անգամ ապստամբները հանդես ելին գալիս գյուղացիության դասակարգային ձգտումներից բղիսող գաղափարախոսությամբ, վորն այն ժամանակվա պայմաններում արտահայտվում էր կրոնա-միստիքական ձեռփակվությունը: Այս կրիտիկական լիճակում արքունիքն ստիպված էր աքսորից վերադարձնել իր հակառակորդներին, վորոնք այժմ տեղերում զոկատներ ելին կազմակերպում ապստամբների դեմ կովելու նպատակով: «Դեղին չալմավորները» զարդվեցին: Կայսրությունն ընկնում է ապստամբության դեմ պայքարի մեջ բարձրացած հրամանատարների ձեռքը, վորոնցից ամենասուժեղը Ցառ-Ցառն էր:

Ցառ-Ցառ-ի վորդին, Ցառ-Ցառ հիմնում է վեց դինաստիան հյուս, մարզերի տերիտորիայի վրա: Այնուհետև կազմվում են մյուս ինքնուրույն իշխանությունները՝ Ու (Ցանցի գետի ներքին հոսանքում) և Շու (ներկայիս Սշուն, Խուան և Խուբեյ նահանգներում): Այս շրջանը հայտնի յե վորպես Յերեք բազավորու-

թյուն (Սան Գո) (220—280 թ. թ.): Յանցվիի ավազանը, Ու և Շի իշխանությունների տերիտորիան, այս ժամանակաշրջանում առաջվանից ավելի լայն և ինտենսիվ կերպով զարկ է տալիս չինական քաղաքակրթության զարգացմանը: Յերեք իշխանությունների միջև տիրող պայքարը վերջանում է Վեյ իշխանության հաղթությամբ, վորի գորահրամանատարը (Արմա Յան) հեռացնում է բռնակալ Յառ-Յառին և, հիմնելով Յօին դինաստիան (265 թ.), 280 թ. միավորում է ամբողջ յերկրը: Սակայն Չինաստանը այս դինաստիայի որով փաստորեն հանդիսանում էր առանձին ինքնուրույն տիրապետությունների մի ամբողջություն, վորտեղ կայսերական արքունիքը իր շրջապատի փոքր տերիտորիայից դուրս իշխանություն չուներ:

«Թեղին շալմավորների» ապստամբությամբ և կայսրության անկումով ավարտվում է չինական վազքունակետությունների շրջանը: Այդ իրավակարգի տընտեսական հիմքը առանձին իշխանությունների միավորման նախորդակին հանդիսանում էին ֆեոդալական (ճորտատիրական) հարաբերությունները, վորոնք գեռևս զարգացած ձև չելին ստացել, նաև ստրկությունը, վորը թեև ավելի նվազ եր զարգացած, բայց նշանակալից գեր եր իւաղում: Տիրող դասակարգի կենտրոնացած կազմակերպությունը ծառայում էր ճորտ գյուղացիության դիմադրությունը ճնշելուն, այդ գյուղացիական մասսան նախնական հողային համայնքի քայլայտումից հետեւ ել շարունակում եր կապված ճնալ համայնա-տոհմային հարաբերություններով: Բռնապետության մյուս պատմական ինդիրն եր

ֆեոդալների և ստրկատերերի տիրապետության ընդլայնումն այն մարզերի վրա, վորոնք տակավին դուրս չելին յեկել տոհմացեղային հասարակարգից: Այստեղից ել ծագում է այս վաղ բռնապետությունների ցայտում ուղղմական բնույթը: Այս հասարակության մեջ շահագործումն իրագործվում էր բյուրոկրատական կազմակերպության միջոցով՝ ունտա-հարկի ձեռվ («շրջաններից կերակրվելը», գլխահարկ, պետական կոռ): Այս բյուրոկրատական կազմակերպությունը հիմնված էր անող մասնավոր հողատիրության վրա, վորտեղ շահագործման գլխավոր ձեր՝ կիսրարությունն (ազօլիանա) եր, սակայն կիրառվում եր և ստրկական աշխատանքը:

8. ԶԻՆԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱ

Զինական կուլտուրան գրեթե նույնքան հին է, վորքան հին Միջագետքի և Յեղիպտոսի կուլտուրաները Սակայն այդ կուլտուրան այն գերը չի խաղացել Համաշխարհային կուլտուրայի զարգացման մեջ, ինչ վորթաբելոնինը կամ Յեղիպտոսինը: Զինական կուլտուրայի սկիզբը պետք է համարել, մինչև այժմ յեղած պատմական տվյալների հիման վրա, Յ-րդ հազարամյակը, բայց այդ կուլտուրան չափազանց դանդաղ եր զարգանում և ինքնամփոփ սահմաններումն եր մնում: Սակայն նա զգալի ազդեցություն է ունեցել շրջապատող յերկրների և սահմանակից ցեղերի վրա, վորոնք համեմատաբար շինական զարգացած կուլտուրայի հետ շատ ցածր աստիճանի վրա ելին կանգնած: Մի շաբթ շինագետներ փորձում են ապացուցել, վոր շինական կուլտուրան իր մի քանի կողմերով, որինակ, նյութական կուլտուրան, կրոնը, բարեկական կուլտուրայի ազդեցության նշաններն ունեն: Բայց այդ տեսակետներն անհիմն են և պետք է ընդունել, վոր շինական կուլտուրան գերազանցապես ինքնուրույն և տեղական ծագման բնույթ ունի:

Զինական կուզտուրայի պատմության աղբյուրները
պետք է համարել հնագիտական նյութեղեն մնացորդ-
ները և մեզ հասած հնագույն գրականությունը,

1. Նյուրական կուլտուրա.- Զինական արվեստի հը-
նագույն հուշարձանները վերաբերում են 3-րդ հազա-
րամյակին և ք. մեր թվարկ.: Նրանք հայտաբերվել են
նորագույն պեղումներով, սկսած 1921 թվից: Այդ
կուլտուրայի ամենահին արվեստի նմուշները ներկա-
յացնում են նեռլիթի դարերը: Մենք հանդիպում ենք
այստեղ նկարագրադի կամբե ամանների՝ կարմիր պարու-
րածեկ և շրջանաձև նկարներով մոխրագույն կամբ բաց-
կարմրավույն խեցու վրա, նմանապես յերկրաշափա-
կան նկարներ սպիտակ ու սև գույններով. բրոնզե դար-
յա ժամանակաշրջանից՝ վուկրից զարդաքանդակված
իրեր—դաշույնի կոթեր, գլխի գնդասեղներ, բրոնզե ի-
րեր, ամաններ և այլն: Այդ բոլոր իրերը մնացել են
ինչ և Զժոռու-ի դարաշրջաններից, մոտավորապես 2-րդ

Շենքերի մնացորդները մեծ մասամբ գեղալական դարաշրջանից են և սկզբում մոնումենտալ բնույթ են ունեցել, բայց մեզ հասած շենքերի մնացորդները վերաբերում են գիտավորապես 1-ին դարին ն. ք. մեր թվարկությանը:

Զարգացած ե յեղել նաև արձանագործությունը:
Մեզ հասած ամենահին արձանագործական հուշար-
ձանները խանի դինատիայի դարաշրջանից են, այն
և 2-րդ դարից (ն. ք. մեր թվարկ.): Արձանագոր-
ծությունն արտահայտվում եր մարդկային և կենդա-
նական ֆիգուրներով, մոնումենտալ արձանագործու-
թյունն արտահայտվել ե գլխավորապես զանազան
ֆանտաստիկ կենդանիների, վիշապների, աստվածնե-
րի և թագավորների պատկերներ կերպելու մեջ: Նմանա-

պես արձանագործության հետ զարգանում եր քանդակագործությունը բարելիքներով:

2. Գիր և գրականություն.— Զինական լեզուն պատկանում է այսպես կոչված միավանհային (մոնոսիլլաբիկ) լեզվաշարքին: Այդ լեզուների առանձնահատկությունն այն է, վոր նրանց հիմնական կառուցվածքային միավորը անփոփոխ վանկն է: Զինական լեզուն իր գոյության ընթացքում անցել է զարգացման յերեք շրջաններ և այժմյան շինական լեզուն միանգամայն տարրերում է սկզբնականից, ինչպես որինակ ներկա ֆրանսերենը նախկին լատիներենից: Զինական գիրը հնչունական չե, այլ գաղափարագրական. ամեն մի բառն ունի իր գաղափարագիրը (անօգրամմա): Զինարենում ամենից ավելի սովորաբար գործածվող գաղափարագրերի թիվը հասնում է միջին թվով 4—5 հազարի, իսկ յեթե հաշվի առնենք հազվագեպ գաղափարագրերը, վորոնք գտնվում են հին ու մասնագիտական գրություններում, այն ժամանակ գաղափարագրերի թիվը կհասնի մոտ 12—13 հազարի: Այսպիսի պայմաններում, ի հարկե, շատ դժվար է գրագետ լինել, և գրագիտությունը գառնում է դասակարգային, յերբ միայն տիրապետող ունելոր խավերը հնարավորություն են ունենում ձեռք բերել գրագիտություն:

Այդ գաղափարագրական նշանների կամ, այլապես ասած, Հիերոգլիֆյան գրերի մասին մեզ հասած շինական հուշարձանները վկայում են, վոր նրանք արդեն գոյություն ունեին 2-րդ հազարամյակում ն. ք. մեր թվարկ: Զինական հիերոգլիֆյան նշանագրերը յերկարատեղ ժամանակաշրջաններում իրենց արտաքին ձևով

ու ներքին կառուցվածքով փոփոխության են յենթարկվել, մասնավանդ արմատական փոփոխության են յենթարկվել գաղափարագրերը՝ թղթի ու գրելու վրձինի գյուտից հետո (մոտ 2-րդ դար. ն. ք. մեր թվարկ):

Զինական գրականության մեզ հասած ամենահին յերկերը վերաբերում են 10—11-րդ դ. դ. նախքան մեր թվարկ: Այդ գրականությունը բաղկացած է անհայտ հեղինակների ձեռքով գրված ժողովրդական բանաստեղծություններից, վորոնք կապված են բնության ու յերկրագործության հետ: Այդ ժամանակաշրջանին եպատկանում նաև Զինաստանի հնագույն բանաստեղծության ժողովածուն, այսպես կոչված Շից-զինի «Յերգերի գիրքը», վորտեղ կամ սիրային ժողովրդական յերգեր, զյուղացիական յերգեր, ուազմական ու վորսորդական յեղանակներ, ավանդություններ, կրոնական տաղեր ու աղոթքներ:

5—2-րդ դ. դ. (ն. ք. մեր թվարկ): Զինաստանում մեծ թափով զարգանում է կրոնա-փիլիսոփայական գրականությունը, յերբ հանդես ե գրալիս դասսականությունն ու կոնֆուցիականությունը, վորպես կրոնա-բարոյագիտական ուսմունքներ և միաժամանակ եթիկական-քաղաքական թեորիաներ: Բացի այդ՝ ծագում է պալատական բանաստեղծությունը, նաև հեքիաթական և ճանապարհորդական գրական յերկեր:

2-րդ դարը նախքան մեր թվարկ Զինաստանն ապրում է տնտեսական և քաղաքական մեծ վերելք, վորի հետեւ վարչով աճում և մեծ չափերով զարգանում է գրական ստեղծագործությունը: Այդ աճմանը մեծություն նպաստում են թղթի, թանաքի և գրելու վրձինի գյուտն ու

նմանապես հիերոգլիֆյան նշանապրերի ոեփորմը:
նույնիսկ հանդիս են պալիս պալատական կին-բանաս-
տեղծներ:

2-րդ դարից հետո նկատվում է գրականության զար-
գացման կանգառում, վոր տեղում է մոտ 2 դար:

Եատ բնորոշ է Զինաստանի կուտուրայի զարգաց-
ման տեսակետից այն փաստը, վոր հին պատմության
մեջ վոլ մի ժողովուրության շատ յենթակա չի յեղել
գրականության և գրքի ազդեցության, ինչպիս շինացի-
ները: Գիտնականներն ու գրականագետները, վորոնք
պատկանում եին սովորաբար տիրապետող դասակար-
գին և կազմում եին Զինաստանում հատուկ արհսուո-
կրատիա, իրենց ամբողջ գիտությունն ու մտավոր զար-
գացմը ձեռք եին բերում գրքերից:

3. Կ ր ո ն.— Ներկայումս Զինաստանում գոյություն
ունեն պետության կողմից ձանաշված Յ կրոն—կրնիու-
ցիականություն, դասականուրյուն և բուդդայականու-
թյուն: Սրանք իսկապես բարոյագիտական-փիլիսոփա-
յական սիստեմներ են, վորոնք առաջացել են 6-րդ դ.
ն. ք. մեր թվարկ. ու ավելի ուշ ձեռավորվում են վորպես
կրոնական ուսմունքներ: Այդ յերեք կրոնական սիս-
տեմներից բուդդայականությունը հնդկական ծագում
ունի և մտել է Զինաստան Հնդկաստանից:

Կոնֆուցիականությունը ծագում է Զինաստանի Հնա-
գույն ժողովրդական կրոնից: Վորոշ գաղափար կազմել
Զինաստանի Հնագույն այդ կրոնի մասին, վորը նույն-
պես Հնագույն պետական կրոն եր համարվում, շափա-
զանց դժվար է, վորովհետև մեր ձեռքը չեն հասել ան-

միջական աղբյուրներ: Այդ Հնագույն կրոնը պատկե-
րացնում ենք հետագա, ավելի ուշ գրական աղբյուրների,
Հենց նույնիսկ Կոնֆուցիին վերագրված գրական աշ-
խատությունների հիման վրա:

Հնագույն շինական կրոնի գերագույն աստվածա-
լին եյակը համարվում եր յերկինքը—Տյան. այդ յեր-
կինք-աստվածությունը, շինական հավատալիքի հա-
մաձայն Հանդիսանում եր տեսանելի, պարզ յերկինակա-
մարը, զինջ և կապույտ յերկինքը, վորը գտնվում է ա-
մենից բարձր և բոլորի վրա: Ամեն ինչ նա տեսնում
է, ամեն ինչ դիտե և ամեն ինչ կառավարում է: Հե-
տևապես յերկինքի այդ պաշտամունքի մեջ վերապրու-
կային ձեռվ պարզուց պահպանվել ե նախնադարյան
հասարակության կրոնական հավատալիքը բնական ու-
ժերի մասին: Տյանը իբրև գերագույն յերկինք-աստ-
վածություն նաև անձնավորվում եր վորպես գերագույն
տեր, գերագույն կառավարիչ, վոր կոչվում եր Շան-
դի: Իսկապես, այդ յերկու աստվածությունների միջև
հիմնականում վոլ մի տարբերություն չկա, բացի այն,
վոր Տյանը ամելի վերացական հասկացողություն է,
իսկ Շան-դին կոնկրետացրած հասկացողություն, հո-
մանիշ դառնալով յերկրի վրա տիրող կառավարող
թագավորի անձնավորությանը:

Տյանի—յերկինքի պաշտամունքի հետ սերտ կապված
է վոգիների պաշտամունքը, վորի հավատալիքը մինչեւ
այժմ ել պահպանվում է շինական կրոնում և կազմում
ամեն մի շինացու գլխավոր կրոնական պարտակա-
նություններից մեկը: Այդ վոգիները, սակայն, շինական
կրոնում անորոշ ելակներ են. նրանց հիշատակում են
հոգնակի թվով, նրանց մեծարում են զոհաբերություն-

ներով: Վոգիները կապված են բնության մեջ գոյսվունքուն ունեցող տեսանելի առարկաների հետ. բնության ամեն մի մասնիկն ունի իր վոգին: Այդ տեսակետից վոգիները բաժանվում են 3 կատեգորիայի — յերկնային, յերկրային և մարդկային վոգիներ:

Յերկնային վոգիներին են պատկանում արեր, լուսինը, մոլորակները, աստղերը, ամպերը, անձրեր, քամին և այլն:

Յերկրային վոգիներին են դասվում լեռները, ծովերը, լճերը, գետերը, աղբյուրները, ծառերը և այլն: Բացի այդ, կան նաև հատուկ վոգիներ՝ ամբողջ յերկիրը, ուստի և պետությունը հովանավորող վոգի, յերկրագործությունը, ցանքսերը, ոչախը հովանավորող վոգիներ:

Մարդկային վոգիներ են — ընտանիքների նախնիքների և անվանի ու հոշակավոր անձերի վոգիները: Զինացին հավատում է, վոր իրը թե մարդու հոգին մահվանից հետո շարունակում է ապրել, ուստի նա միշտ վորոշ կրոնական ծեսերով հրավիրում է վոգում՝ վերադառնալ իր թողած մարմնի մեջ: Զինական կրոնի մեջ չկա վո՞չ արքայություն, վո՞չ ել դժոխք: Նրա հավատալիքներում վո՞չ թե ապագան, այլ անցյալն է, վորդեր և խաղում ու ազդում ներկայի վրա: Ուստի ընտանիքի մեռած անդամները համարվում են միշտ կապված իրենց ընտանիքի հետ և դառնում են նրա հովանավորող վոգին: Յուրաքանչյուր տան մեջ կա հատուկ սենյակ, վորտեղ կատարվում է ընտանիքան վոգիների պաշտամունքը, տեղի յեն ունենում նրանց հիշատակին աղոթքներ ու զոհաբերություններ:

Այս պայմաններում Զինական կրոնը բաժանված չէ շինացու իրական կյանքից, ուստի նա չի ունեցել իր սրբազն գիրքը, ինչպես չին հրեաների աստվածաշրջանն է: Այդ կրոնը պահպանվում եր հնավանդաշունչուն մասնաւորից ծեսերով, վորոնք անտրադիցիաներով ու բազմաթիվ ծեսերով, վորոնք շինացու շեղորեն պիտի կատարվելին յուրաքանչյուր շինացու կողմից:

Ահա այս հնագույն շինական կրոնը, վորը զուրկ եր վորոշակի աստվածաբանական մշակված թեորիայից, կրոնա-փիլիսոփայական սիստեմից, ունեցավ իր տեսաբանը, թեփորմատորը՝ հանձինս Կոնֆուցիի իր տեսաբանը, Կոնֆուցիայի կամ Կոնֆուցիի: Նա (իսկական անունը Կոն-Ցզի կամ Կոնֆուցի): Նա ապրում էր 551—479 թ. թ. ն. թ. մեր թվարկ: Կոնֆուցիի կյանքը մեղ ավելի լավ է հայտնի, քան մի շարք ուրիշ կրոնների հիմնադիրների կենսագրությունը:

Կոնֆուցին իսկապես վոշնչ չի հեղաշրջել ու փոփոխել չին շինական կրոնի մեջ: Նա միայն վերածեց այն՝ կրոնա-փիլիսոփայական սիստեմի և այդ տեսակետից նա հանդիսանում է խոշոր բարոյագետ քարոզիչ, հիմնադիր՝ փիլիսոփաների, գրականագետների ու քարոզիչների կոնֆուցիական դպրոցի: Նրա ուսումնական սեղմանը մեջ է Զինաստանի ֆեոդալացման իրական պայմաններում, քաղաքական խառնաշփոթ իրադարձություններում, վորոնք քայլայում ելին Զժոռով գինաստայի դրությունը:

Կոնֆուցին գրեթե անփոփոխ է թողնում նաև շինական չին կրոնի ծիսական ձևերը: Զինաստանի կրոնը իր հիմնական գծերով մնում է նույնը, ինչ վոր եր նախքան կոնֆուցին, Յեթե նա այդ կրոնին տվել ե իր ուսմունքի սկզբանքները, դրանից բնավ չի խախտվել

այդ կրոնի կառուցվածքը: Նա խսկապես մի քարողի էր, վոր բացատրում եր շինական կրոնի հիմունքներ՝ բարոյականության ու կառավարման մասին, պարզ ու հասկանալի կերպով, ինչպիսին մինչև այդ վոլ վոք չեր արել, վորով այդ կրոնն ստացավ իր տեսաբանական ուսմունքը: Նա հավաքեց, վերականգնեց ու հրապարակեց այն հին գոփերը, վորոնք հանդիսանում եյին շինական կրոնի միակ գրավոր գոկումնենտները և վորոնք այնուհետև դարձան Զինաստանի տիրապետող դասակարգի համար ուսումնասիրական գորքերը: Զինացիներն ստանալով Կոնֆուցիի ձեռքից այդ գոքերը, բնականաբար նայում եյին նրա վրա վորովես իրենց կրոնի մեծ մարդարեցի: Այդ հին գոքերի հիման վրա նա իդեալացնում եր հին անցյալը, վորը նրա ուսմունքի մեջ հանդես է գալիս իբրև «վլուկեդար»: Ուստի Կոնֆուցին իր քարոզներում ուսուցանում եր, վոր պետք է վերադառնալ դեպի այդ յերջանիկ անցյալը: Նա խստ դատափետում եր իր ժամանակ տիրող միջֆեոդալական պատերազմները, վորոնք կործանում եյին հին շինական կուլտուրան, և կոչ եր անում հիմնելու միամնական ֆեոդալական պետովթյուն մի թագավորի իշխանության տակ, թագավորի, վորը հանդիսանում է յերկնքի կամքի կատարողը:

Կոնֆուցիական եթիկայի հիմնական գաղափարը հանդիսանում է Փեն—սերը, վորպես մարդկանց մեջ յեղած հարաբերության որենք, վորը հիմնված է ընտանեկան և ֆեոդալական հիերարխիայի խստ պահպանման վրա: Դա—սերն է դեպի մեծերը, դեպի թագավորը: Այդ սերը կոնֆուցիականների կողմից հակառակում է ընդհանուր սիրո սկզբունքին,

վորի հեղինակն է Մո-Դին: Բատ Կոնֆուցիոսի՝ անունը պետք է համապատասխանի առարկայի եյությանը՝ մարդու անունը կամ տիտղոսը պետք է խստորեն համապատասխանի հասարակության մեջ նրա ունեցած դապատասխանի գործությանը: «Թագավորը պետք է լինի փաստական գրությանը:» Թագավորը պետք է լինի թագավոր, հպատակը՝ հպատակ, հայր՝ հայր, վորդին՝ վորդի»:

Այսպիսով կոնֆուցիականությունը ունակցիոն ուսմունք եր և հավերժացնում եր գեղարվական կարգերն ու վողջ ճնշումը Զինաստանում:

Կոնֆուցին ապրել է 73 տարի, շրջապատված լինելով վոգեվորված աշակերտներով, վորոնք նրա գործը շարունակեցին առաջ տանել նրա մահից հետո: Այդ աշակերտներից մեկը Լո-Յուն, հետագայում ի մի հավաքեց իր ուսուցչի քարոզներն ու ուսուցած խոսքեցալաքեց իր ուսուցչի հիշատակին, նրա մահից որ՝ մի գրքի մեջ: Կոնֆուցիի հիշատակին, նրա մահից ու կառուցվեց հատուկ տաճար, նրա ուսմունքը մեծ հետո, կառուցվեց հատուկ տաճար, նրա ուսմունքը մեծ տարածում ունեցավ ժողովրդի մեջ և նրա անունով ել կոչվեց պետական կրոնը: Կոնֆուցիի ուսմունքը, իբրև կողմից պետական միասնական սիստեմ, մինչև այժմ ել տիրում է Զինաստանում:

Միաժամանակ կոնֆուցիականության հետ Զինաստանում իբրև կրոնական սիստեմ ծագում է նաև մի այլ ուղղություն՝ դասուականությունը, վորը նույնիսկ այլ ուղղություն՝ դասուականությունը առաջինին: Դասուականության հիմնադիրն է համարվում մի կիսառասպելական թյան հիմնադիրն է համարվում մի կիսառասպելական անձ, վոր նույնիսկ քարոզիլ և բարոյագետ-փիլիսոփա յեր յեղել, ինչպես Կոնֆուցին: դա Լառ-Յօն անունով մարդարեն եր, վորն իբր թե ծնվել է 6-րդ դարում և ք. մեր թվարկ: Լառ-Յօնին վերագրված ուսմունքը

գրավոր շարագրությունը սակայն փաստորեն կազմվել է 3-րդ դ. ն. ք. մեր թվարկ.: Ինչպես Կոնֆուցին, այնպես ել կառ-ծղին իր վարդապետությունը հիմնում է գոյություն ունեցող քաղաքական-հասարակական սիստեմի վրա. նա նույնպես քաղաքածներ և հանում հինգրական գործերից: Լառ ծղինի ուսմունքի ղեկավար դադարան և Դառն, վորով ել կոչվում է ամբողջ կրոնա-փիլիսոփայական սիստեմը: Դառն անձնավորություն չե, այլ ինչ վոր մի բան, վոր գոյացել է բոլոր մարդկանցից ու արարածներից առաջ: Նա գոյություն ուներ ավելի առաջ, քան յերկիրը: Նա յերկնքից բարձր է: Ամեն ինչ նրանից է ծագում. նա ամեն ինչի սկզբնավորությունն է և ամեն ինչ նորից վերաբառնում է դեպի նա:

Դառն անտեսանելի և անլսելի, միասնական, ընդհանրական, համբառնական ու անսահման գործոն է: Դառ բառը, իսկապես նշանակում է ուղի, ճանապարհ, և դրանով այդ ուսմունքը կարծես ուզում և ցուց տալ մարդու կյանքի, գոյության շիտակ, ուղիղ, բարոյական ճանապարհը: Դառսականությունը մեծ ազդեցություն է ունեցել Զինաստանի փիլիսոփայական և բնագիտական մտապատճերների զարգացման վրա: Սակայն հետագայում դառսականությունն հետզհետե կորցնում է իր սկզբնական փիլիսոփայական բնույթը և, յերբ Զինաստան մուտք է գործում բուժդարձականությունը, նա յուրացնում է վերջինիս արտաքին կողմը, աստվածապահտական ծեսերը, յեկեղեցական ու վանքային ձեվերն ու հանդես ե գալիս արդեն վորպես յեկեղեցի: Զինական հին կրոնա-փիլիսոփայական սիստեմ-

ներից գույս առանձին տեղ է գրավում Մո—Դիի ուսմունքը 5-րդ դ. ն. ք. մեր թվարկ.), վորը հիմնականում տարբերվում է կոնֆուցիականությունից և դառսիզմից: Մո-Դիի բարոյագիտական ուսմունքի հիմնական ըստը գրագրումքը հանդիսանում է «ընդհանրական սերը» համակառակ կոնֆուցիականության սիրո (ժեն) համկացությանը, ինչպես և Յան-Չժոուի (5-4րդ դ. ն. ք. մեր դությանը, ինչպես և Յան-Չժոուի (5-4րդ դ. ն. ք. մեր թվարկ.) եզրիստական բարոյականությանը: Վերցնելով հին կրոնից յերկնքի համացողությունը, վորպես գեղերագույն աստվածություն և նրա կամքը վորպես գեղարդունավորություն, Մո-Դին գտնում եր, վոր այդ սերը տարածվում է համահավասար կերպով բոլոր ճարդիկանց վրա: Այստեղից ել նա հետեւցնում եր համարդիկան սկզբունքը: Ըստ Մո-Դիի հասարակության անդամները բղխում ելին նրանից, վոր մարդկանց մեջ ախրապետում է անհատական սերը, վորը ներհակ է ընդհանրական սիրուն. Վերջինս հանդիսանում է հասարակական բարեկեցության հիմնական պայմանը, Մո-Դիի սոցիալական իդեալն եր՝ վերադարձ գեպի նախնական նահապետական հարաբերությունները, ընդհանրական սիրո և հավասարության իրագործումը: Նա ձգում եր կենցաղի և ծիսակատարությունների պարզության: Մո-Դին կատաղի հակառակորդ եր պատերազմներին և ֆեոդալական բռնությանը: Նա մերկացնում եր ֆեոդալական բարոյականության աշուելի հակասությունները, ըստ վորի մի մարդու սպանությունը համարվում եր հանցագործու-

թյուն, իսկ այլ պետովթյան վրա հարձակվելը և հազարավոր մարդկանց սպանությունը մեծարվում՝ վորպեսքաջություն:

Մո-Դիի ուսմունքը ընդհանուր առմամբ իդեա-
լիստական բնույթ եր կրում: Բացի յերկնքից, վորապես
գերապուլն եյակի, նա ընդունում եր յերկնքի և յերկրի
վոգիներին, ինչպես և մեռածների վոգիներին: Սակայն
նրա հետեւլորդների և աշակերտների վորոշ մասի ուս-
մունքի մեջ իդեալիզմից զատ, մենք հանդիպում ենք
և մատերիալիստական տարրերի: Նրանց կողմից ըն-
դունվում ե ոբյեկտիվ որինաչափությունը, վոչ միայն
հավատքը, այլև փորձը, տրամաբանական մտածողու-
թյունը և այլն:

Պատ. Խամբագիր՝ պրոֆ. Խ. ՄԱՐՈՒՆԵԼՅԱՆ
Տեխ. Խմբագիր՝ Վ. ՄԵՍՍԱՅԱՆ
ՄրգագիլՀ. Հ. ՄԱԿԻՅԱՆ



Պատվիրակություն № 1103 պատվ. № 28, սիրած 2100.

Հայկական ԽՍՀ ժես-ին կից «Խորհրդային Հայաստան» հրատարակչության տպարան, Յերևան

Հայաստանի Ազգային գրադարան



NL0427100

ԳՐԱԾԱԿԱՆ

245

Տ Ա Կ Օ Պ Յ Ա

ДРЕВНЯЯ ИНДИЯ
И КИТАЙ

Изд. Нед. Института, Ереван 1940 г.

7

18088